

24313

891-99-192

q. -95

299 1/2

и-Б80

БЕРЕГИТЕ КНИГУ!

ОНА СЛУЖИТ НЕ ОДНОМУ, А МНОГИМ.

Возвращайте книгу в
срок, чтобы и другие
могли воспользоваться

ею.

Обращайтесь с книгой любовно и аккуратно.

она служит не вам одному, а многим:

- 1) Не пачкайте книгу надписями и рисунками, не подчеркивайте слов. То, что полюбите в книге записывайте в свою тетрадку.
- 2) Не портите переплета. При чтении завертывайте его в бумагу.
- 3) Не загибайте углов у страниц имейте лучше бумажную закладку.
- 4) Не перелистывайте страниц грязными и мокрыми руками.
- 5) Если у вас имеется в доме заразный больной, то заявите об этом в библиотеку при возврате книги.


КОГДА КНИГА ВЗЯТА

683 13/1

30/6

30/8

4/11



821.93-192
9-95 *my*



ՊԱՆԴՈՒԽ ՊԱՏԱՆԻ

7901

Կառնէկ դարնան աւետիս,
Երամդ ո՞ր աշխարհէց,
Լուր չունէ՞ս պանդխտիս,
Մեր հայրենի դաւառէց:
Մ. Փ.

14/60

Կ ա ղ մ ե ց

ՕՐԻՈՐԴ Դ. ԳՈՒԼԱՍՅԱՆՑ



Թ Յ Լ Ի Ս
Типогр. Груз. Изд. Т—ва. || Տպարան Վրաց Հրատ. Ընկ.
1899

504

2121

ՎԵՐՆԱԿ ԶՈՒԹՈՒԹՅՈՒՆ

Дозволено цензурою. Тифлисъ, 3-го Юля 1899 года.



252
41

ՊԱՆԴՈՒԽՏ ՊԱՏԱՆԻ

7901

1.

ՊԱՆԴՈՒԽՏ ԱՌ ԿՈՒՆԵԿ

Կռուկնի, ուստի կռուգաս, ծառայ եմ ձայնիդ,
 Կռուկնի, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:
 Մի վազիր երամիդ շուտով կը հասնիս,
 Կռուկնի, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:
 Թողեր եմ ու եկեր մըլքերս ու այգիքս,
 Քանի որ ախ կանեմ կռու քաղի հոգիս,
 Կռուկնի, պահ մի կացիր, ձենիկդ ի հոգիս,
 Կռուկնի, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:
 Քեզ խաբար հարցնողին չես տանիր դալար,
 Ձենիկդ անուշ կռուգայ քան գջրի դուլար.
 Կռուկնի, Բաղդատ իջնուս, կամ թէ ի Հալար,
 Կռուկնի, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:

Սրտերնիս կամեցաւ, ելանք գընացանք,
 Այս սուտ աստընւորիս դարգերն իմացանք.
 Աղուհացկեր մարդկանց կարօտ մընացանք,
 Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:
 Աստընւորիս բաներն կամաց կամաց է,
 Միթէ Աստուած լսէ, դըռնակն բացէ.
 Ղարիբին սիրտն է սուգ, աչերն ի լաց է,
 Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:
 Աստուած, քեզնէ խնդրեմ մուրվէթ ու քերէմ,
 Ղարիբին սիրտն է խոց, ջիգերն է վերէմ.
 Խմած ջուրն է լեղի, ու հացը հարամ,
 Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:
 Ոչ զլուր օրն գիտեմ, ոչ զկիրակին,
 Ձարկած է զիս շամփուրն, բռնած կրակին.
 Սյրիւս չեմ հոգար, ձեզնէ կարօտ եմ,
 Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:
 Բաղդատու կուգաս, կերթաս ի Սէհրաթ,
 Թղթիկ մի գրեմ, տամ քեզ ամանաթ.
 Աստուած թող վկայ լինի քո վրադ,
 Տարեալ հասուցէ զայդ իմ սիրելեաց:
 Գրիր իմ մէջ թղթիս, թէ հոս մընացի,
 Օրիկ մի օրեր զաչերս չի բացի.
 Սիրելիք, ձեզանէն կարօտ մընացի,
 Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունիս:

Աշունն է մօտեցեր, գնալու ես Թէդբիր,
 Երամներ ես ժողվել հազարներ ու բիւր.
 Ինձ պատասխան չի տուիր, ելար գնացիր,
 Կռունկ, մեր աշխարհէն գնա հեռացիր:

2.

ԻՆՁ ՀԱՄԱՐ ԶԷ

Ինձ համար չէ գարնան գալը,
 Ինձ համար չէ ծառի ծաղկելը,
 Ուրախութեան սրտի գրգիռը,—
 Ոչ մի բերկրանք չեն ինձ համար:
 Ինձ համար չէ փայլուն լուսնի
 Անտառ ու սար լուսաւորելը,
 Գարնան վարդի երգչի տաղերը,
 Սոխակ ու վարդ չեն ինձ համար:
 Ինձ համար չէ բարեկամաց
 Մէկ տեղ սիրով տօն կատարելը,
 Զատիկ օրուայ ուրախ ասելը,—
 Քրիստոս յարեալ չէ ինձ համար:

Բայց, ինձ համար կուգայ ժամը,
 Կերթամ թըշնամեաց պատերազմը,
 Եւ մահառիթ սպանիչ գնդակը,—
 Անդ պատրաստ է ինձ համար:

Ք. Տ.-Գ. Պատկանեան

3.

Ի Մ Ե Ր Գ Ը

Հեռացել եմ իմ մայրենի աշխարհից,
 Սերտ բարեկամք անջատած են ինձանից.
 Թառամում եմ ես այս օտար երկրումը,
 Մենակ բըսած ծաղկի նման դաշտումը:
 Կամաց կամաց տարիները անցնում են,
 Մեզ նորոգած դարուն, ամառ դարձնում են.
 Միայն իմ խեղճ կեանքը չունի ոչինչ նոր,
 Ինձ երէկը կրկնվում է միշտ այսօր:
 Ասպարիզիս նեղ է ճանբան ու փըշոտ,
 Խեղճութիւնս համարում են ինձ ամօթ,
 Իմ վիճակին կարեկցութիւն մարդ չունի.—
 «Դա ասում են, իր կեանքումը դարդ չունի»:
 Ես դարդ ունիմ, դարդըս մեծ է ու պէսպէս,

Բայց չեն տեսնում ձեր աչերը կարճատես.
 Երբ ես մտայ անհիւրընկալ այս աշխարհ,
 Քանի ըողէ բաղդը ժըպտաց ինձ պայծառ.
 «Հա, ասացի, դարձել է իմ անիւր,
 Լըրացել է իմ վատ բաղդի չար թիւը»:
 Յանկարծ փչեց անդուրժելի հիւսիսին,
 Թառամեցուց վարդ մանուշակ մայիսին.
 Այսպէս չորչուց իմ նագելի հասակը,
 Իմ անողորմ, անագորոյն վիճակը:
 Ախ, մօտեցիր օրհասական օր մահուան,
 Բեր քու հետդ սև հող ու նեղ գերեզման.
 Թող սառ լինի իմ նոր տանը յատակը,
 Ծանրը քար է վըրէս ծածկած վերմակը:
 Բայց, ախ, երբ օր կ'անցնի ամիս ու տարի,
 Կը մամուռի գերեզմանը այն քարի,
 Հետքը անգամ չի մնալու իմ խաչին.
 Իմ անունը, իմ լիշատակ կը կորչին:
 Բայց կուգէի թողնել այստեղ մի արձան,
 Որ դարէ դար մընար, ամուր անկործան.
 Ես երգեցի երգ ոլորուն ու անուշ.—
 Իմ քնարի ձայնն էր մեղմիկ ու քնքուշ:
 Մթթէ այնքան անգութ կը լինի Լեդա գետ,
 Որ անունըս անգամ կ'անէ նա անհետ:

Ք. Տ.-Գ. Պատկանեան

ԵՐԻ ՄԵՌԱՆՈՂ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԻ

Ազնիւ ընկեր, մեռանում եմ,

Բայց հանգիստ եմ ես հոգով.

Իմ թշնամիքս ես օրհնում եմ,—

Օրհնում եմ քեզ Աստուծով:

Հեռանում եմ անգին ընկեր,

Չ'գնահատած ոչ ոքից,

Բայց հաւաստեալ անձնանըւէր

Ազգիս մշակ կը հաշուիմ:

Ազնիւ ընկեր, չը մոռանաս,

Անդաւաճան ջերմ սիրով.

Ես սիրել եմ իմ Հայրենիք,—

Գնա և դու նոյն շաւղով:

Խեղճութիւնը Հայոց ազգի

Կարեկցաբար մտածիր.

Ոսկէ գրքոյկն Եղիշէի,

Քաջ առաջնորդ քեզ ընտրիր:

Այնտեղ սուրբ կրօն, ազգ միաբան,

Ազատ կամքով ու խղճով.

Այնտեղ Վարդան, անմահ Վարդան,

Իւր խնկելի քաջերով:

Հայրենիք,—սեղան սրբութեան,—

Ես Աստուծոյ առաջև,

Շատ կաղաչեմ, շատ կարտասուեմ,

Որ ծագէ քեզ նոր արև:

Իմ մտերիմ, մահըս մօտ է,

Բայց հանգիստ եմ ես հոգով.

Որովհետև խիղճս արդար է,

Ճշմարտութեան ջատագով:

Ս. Շահազիզեան

ԱՐԱԲՍԻ ԱՐՏԱՍՈՒԲԸ

Մայր-Արաքսի ափերով

Քալամուրը գընում եմ,

Հին հին դարուց յիշատակ

Ալեաց մէջը պըտորում եմ:

Բայց նոքա միշտ յեղյեղուկ,

Պղտոր ջրով եզերքին,

Դարիւ դարիւ խփելով,

Փախչում էին լալագին:

Արաքս, ինչո՞ւ ձկանց հետ
 Պար չես բռնում մանկական,
 Դու գեռ ծովը չը հասած,
 Սըգաւոր ես ինձ նըման:
 Ինչո՞ւ արցունք ցայտում են
 Քու սէգ հպարտ աչերից,
 Ինչո՞ւ արագ փախչում ես
 Այդ հարազատ ավերից:
 Մի պղտորիւ յատակդ,
 Հանդարտ հոսէ խայտալով.
 Մանկութիւնը քո կարճ է,—
 Շուտ կը հասնիս դէպ 'ի ծով:
 Վարդի թփեր թող բուսնին
 Քո հիւրընկալ ափի մօտ,
 Սոխակները նոցա մէջ
 Երգեն մինչև առաւօտ:
 Մշտադալար ուռիներ
 Սառ ծոցի մէջ քու ջրին,
 Զըկուն օստըն ու տերեւ
 Թող թաց անեն տապօրին:
 Ափերիդ մօտ երգելուն
 Հովիւք թող գան համարձակ,
 Դառն ու ուլը քու վճիտ
 Զուրը մտնեն միշտ արձակ:
 Մէջքը ուղցուց Արաքսը,

Փըրփուր հանեց իւր տակից,
 Սմպի նման գողալով՝
 Էսպէս խօսեց յատակից.—
 «Խիզախ, անմէտ պատանի,
 Ներհըս ինչու դարեւոր,
 Վըրդովում ես, նորոգում,
 Իմ ցուերը բիւրաւոր:
 «Սիրելի մահից յետ,
 Ե՞րբ ես տեսել, որ այլին
 Ուրից գըլուխ պճնուի
 Իւր զարդերով թանկագին:
 «Որք համար զարգարում,
 Որք աչքը հրապուրեմ.
 Շատերն՝ ինձ են առելի,
 Շատերին՝ ես օտար եմ:
 «Կար ժամանակ, որ ես էլ,
 Շըքեղազարդ հարսի պէս,
 Հազար ու բիւր պըճրանքով
 Փախչում էի ավերէս:
 «Յատակըս պարզ ու վըճիտ,
 Կոհակներըս ոլորուն,
 Լուսաբերը մինչև այգ
 Զրիս միջին էր լողում:
 «Ի՞նչըս մնաց այն օրից,
 Ո՞ր ջրամօտ գեղերըս,

Ո՞րը իմ շէն քաղաքից,
 Ո՞ր բերկրալի տեղերըս:
 «Տուրքը ջրի ամեն օր,
 Իր սուրբ ծոցէն Արարատ,
 Մայրախընամ ինձ սընունդ
 Պարգեւում է լիառատ:
 «Բայց ես այն սուրբ ջրերով,—
 Սուրբ-Ակոբի աղբիւրին,—
 Պիտի ցողեմ արտօրայք
 Իմ ատելի օտարին:
 «Կամ կենսատու իմ ջրով,
 Ափերիս մօտ կըկըզած,
 Իւր նամազը կատարէ
 Թուրք կամ Պարսիկը հօտած:
 «Մինչ իմ որդիք,—նվ գիտէ,—
 Ծարաւ, նօթի, անտէրունչ,
 Օտար աշխարհ հեծում են,
 Թոյլ ոտքերով կիսաշունչ:
 «Հեռու հեռու քըշեցին
 Բնիկ ազգը իմ Հայկեան,
 Նորա տեղը ինձ տուին
 Ազգ անկրօն, մոլեկան:
 «Դոցա համար զարդարեմ
 Իմ հիւրընկալ ափերը,

Եւ կամ՝ դոցա հրապուրեմ
 Ճրպուտ, պլշած աչերը:
 «Քանի որ իմ զաւակունք
 Այսպէս կը մնան պանդուխտ՝
 Ինձ միշտ սըգաւոր կը տեսնէք.—
 Այս է անխաբ իմ սուրբ ուխտ»:
 Եւ չի խօսեց Արաքսը,
 Յորձանք տուեց ահագին,
 Օղակ օղակ օձի պէս,
 Առաջ սողաց մոլեգին:

Ռ. Տ.-Գ. Պատկանեան

6.

Գ Ի Շ Ե Ր

Սիրուն պատկեր: Պարզ գիշեր էր:
 Եւ օդեղէն ովկիանոսում
 Փայլում էին անթիւ աստղեր,—
 Եւ ուրախ էր սիրտըս զարկում:
 Ամբոսական ծաղիկներ վառ
 Անուշուրթին էին բուրում,
 Եւ երկնքի ցող կենարար
 Բնութիւնն էր զովացնում:

Ես անխռով երգում էի,—
 Իմ երգըս սուրբ և մաքուր էր.
 Սղատուծիւն էի երգում,
 Հայրենիքի պարծանք ու սէր:

Ս. Շահադեգեան

7.

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

(Գերմաներէնից)

Մայրենի լեզու, մայրենի բարբառ,
 Ախորժ ընտանի իմ հոգու համար:
 Առաջին դու խօսք, ականջիս հասած,
 Դու սիրոյ քաղցրիկ առաջին յօգուած:
 Մանկական լեզուիս թոթովանք տըկար,
 Հընչում ես իմ մէջ դու միշտ անդադար:
 Գեղեցիկ լեզու, հրաշալի լեզու,
 Այդ ինչպէս քաղցրը հընչում ես ինձ դու:
 Կամ իմ աւելի քաջ ծանօթանալ,
 Քո ճոխ գանձերին, հոգով հայանալ:
 Ասես թէ ահա կանչում էին ինձ,
 Պապեր ու հայրեր խոր գերեզմանից:

Հընչիր դու հընչիր այժմ և յաւիտեան,
 Մայրենի լեզու, բարբառ սիրական:
 Արի, բարձրացիր հնութեան փոշուց,
 Դու իմ հայ լեզու, մոռացած վաղուց:
 Ըզգեցիր նոր կեանք՝ սուրբ գրուածքներով,
 Որ ամենայն սիրտ վառվի քո սիրով:
 Ամեն տեղ փչում է Աստուծոյ շունչը,
 Սուրբ է այն միւս, այլ ձև ու ոճը:
 Բայց թէ աղօթել, գոհանալ պէտք էր,
 Իմ սրբոյ սէրը յայտնել արժան էր:
 Իմ երանական մտածութիւնքը —
 Ապա կը խօսեմ իմ մօրըս խօսքը.

Ստ. Նազարեան

8.

ՈՐՍ ԱՐԹԱԿԱՏ

Մեծափառ արքայ մեր
 Ի յորս կամի ելանել,
 Լարեցէք աղեղներ,
 Որպէս մեզ է վայել:

Տիրասէր իշխաններ,

Պատրաստ եղէք քաջօրէն,

Արքայիս դառն ցաւեր

Թող անդարձ ցրուեն:

Հնչեցէք փողերը

Անուշաձայն երգերով.

Որս Արշակ այն օրն

Կամի ելանել:

Տրոփ ձիոց մեր հնչին

Ի դաշտն Պարսկաստանի.

Ցուցանել Հայկազանց

Եռանդն ու հոգին:

Յառաջ դուք ընթացէք,

Ո՛վ քաջազունք, տալով տրոփ.

Արձագանք ձեր ոտից

Հնչեսցին տրոփ, տրոփ:

9.

Գ Ա Ր Ո Ւ Ն

Ո՛հ, ինչ անուշ և ինչպէս զով

Առաւօտուն փչես հովիկ,

Ծաղկանց վրայ գուրգուրալով

Եւ մազերուն կուտին փափկիկ.

Բայց չես հովիկ իմ հայրենեաց,

Գնա՛, անցիր սրտէս 'ի բաց:

Ո՛հ, թնջ աղու և սրտագին

Ծառոց մէջէն երգես թռչնիկ,

Սիրոյ ժամերն 'ի յանտառին

Ըզմայլեցան 'ի քո ձայնիկ.

Բայց չես թռչնիկ իմ հայրենեաց,

Գնա՛, թռիր սրտէս 'ի բաց:

Ո՛հ, թնջ մրմունջ հանես վրտակ

Ականակիտ և հանդարտիկ.

Քու հայելոյդ մէջ անապակ

Նային զիրենք վարդն ու աղջիկ.

Բայց չես վրտակ իմ հայրենեաց,

Գնա՛ հոսէ սրտէս 'ի բաց:

Թէպէտ թռչնիկն և հովն Հայոց

Աւերակաց թռչին վերայ,

Թէպէտ պղտոր վրտակն Հայոց

Նոճիններու մէջ սողայ,

Նոքա հառա՛ջք են հայրենեաց,

Նոքա չերթան սրտէս 'ի բաց:

Պ. Մ. Պետկիթաշեան



ԵՐԳ ՊԱՆԻՈՒԹՅ ՊԱՏԱՆԿԻ

Ծիծեռնակ, ծիծեռնակ,
Դու գարնան սիրուն թռչնակ,
Դեպի ուր, ինձ ասա,
Թռչում ես այդպես արագ:

Ախ, թրուր, ծիծեռնակ,
Ծընած տեղըս Աշտարակ,
Անդ շինիր քո բունը
Հայրենի կրտսերի տակ:

Անդ հեռու ալևոր
Հայր ունիմ սրգաւոր,
Որ միակ իւր որդուն
Սպասում է օրէ օր:

Երբ տեսնես դու նորա,
Ինձնից շատ բարեւ արա,
Ասա, թող նըստի լայ
Իւր անբաղդ որդու վըրայ:

Դու պատմէ՛ թէ ինչպէս
Աստ անտէր ու խեղճ եմ ես,
Միշտ լալով, ողբալով
Կեանքս մաշուել, եղել կէս:

Ինձ համար ցերեկը

Մուր է շրջում արեգը,

Դիշերը թաց աչքիս

Գունը մօտ չի գալիս:

Ասիր, որ չի բացուած

Թառամեցայ միացած,

Ես ծաղիկ գեղեցիկ՝

Հայրենի հողից զրկուած:

Դէհ, սիրուն ծիծեռնակ,

Հեռացիր, թուր արագ,

Դեպ 'ի Հայոց երկիրը

Ծնած տեղս—Աշտարակ:

ԵՐԳ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

Յնձացէք լերինք Արարատայ,
Յնձա՛ Հայաստան, երկիրդ Հայկայ:

Յնձա՛, ցնձա՛, ցնձա՛, ցնձա՛,

Յնձա՛ Հայաստան, երկիրդ Հայկայ:

Մեր նախնեաց անմահ անունները,

Պարծանքով յիշեն մեր սերունդները:

Յնծա՛, ցնծա՛, ցնծա՛, ցնծա՛,

Յնծա՛ Հայաստան, երկիրդ Հայկայ:

Սրբեցէ՛ք քնարի լարերը ժանգոտ,

Ելէ՛ք Հայաստան երգով եռանդոտ.

Յնծա՛, ցնծա՛, ցնծա՛, ցնծա՛,

Յնծա՛ Հայաստան, երկիրդ Հայկայ:

12.

Օ Ր Օ Ր Ո Յ Ի Ե Ր Գ

Քուն էղիր, պալաս, աչքըդ խուփ արա՛,
Նախշուն աչքերուդ քուն թող գայ վրրայ.

Օր օր օր պալաս, օր օր ու նանի,

Իմ (այս անուն) քունը կը տանի:

Օսկի խաչ վիզիդ՝ քեզի պահապան,

Նարօտ կապիլ է ծարէն տէր պապան.

Օր օր օր պալաս, օր օր ու նանի,

Իմ (այս անունին) քունը կը տանի:

Մալի հիւններ կախել եմ ես ալ,

Նազար չես առնուլ, քուն էղիր, մի լալ.

Օր օր օր պալաս, օր օր ու նանի,

Իմ (այս անուն) քունը կը տանի:

Աս քանի մօրըդ անքուն աչքովը,

Սնցել է օրեր օրօցքիդ քովը.

Օր օր օր պալաս, օր օր ու նանի,

Իմ (այս անուն) քունը կը տանի:

Օրօցքըդ օրիմ, օրով բոյ քաշիս,

Մըղկրտան ձայնով սիրտս չի մաշիս.

Օր օր օր պալաս, օր օր ու նանի,

Իմ (այս անուն) քունը կը տանի:

Դուն ալ քուն էղիր, ինձի ալ քուն տո՛ղր,

Սուրբ Աստուածամայր (այս անուն) քուն տուր.

Օր օր, օր պալաս, օր օր ու նանի,

Իմ (այս անուն) քունը կը տանի:

Ռ. Տ.-Գ. Պատկանեան

13.

Գ Ր Ե Ն Ա Դ Ե Ր Ն Ե Ր

Երկու գրենադեր գնում էին Ֆրանսիա,

Որ գերի էին հիւսիսում ընկած ¹⁾).

Եւ երբ որ եկան, հասան Գերմանիա,

Այնտեղ թեքեցին գլուխներն վաստակած:

¹⁾ Ռուսիայում:

Այստեղ լսեցին այս տխուր վէպքը,
Թէ նոցա սիրուն Փրանսիան կործանուած.
Յաղթուած ու ջարդուած քաջազուն զօրքը,—
Եւ կայսրը, կայսրը ¹⁾ թշնամուց գերուած:

Նոքա միասին լաց էին լինում,
Այդ արտասուելի լսելով լուրքը.
Վա՛յ, ասաց մինը, «ինչպէս է ցաւում,
Ինչպէս է այրում, ախ, իմ հին վէրքը»:

Երկրորդը ասաց. «վերջացաւ բանը,
Եւ ես կամէի քո հետ մեռանիլ.
Բայց կին ու զաւակ թողել եմ տանը,
Նոքա առանց իմ կարող են կորչիլ:
«Ինչ փոյթ է ինձ կինս, որդիքս ինչ փոյթ են,
Սրտիս բաղձանքը աւելի լաւ է.

Թո՛ղ գնան հաց մուրան, եթէ սոված են.—
Կայսրը, իմ կայսրը գերի տարած է»:

«Կատարիր եղբայր, իմ մի խնդիրքը,
Եթէ ես այժմ մեռնիմ այս երկրում,
Տա՛ր դէպ 'ի Փրանսիա դու իմ դիակը,
Թաղիր ինձ այնտեղ Փրանսիայի հողում:

«Կարմիր թելից կախ պատուանշանը
Պիր դու քո ձեռով իմ քաջ սրտի վրայ,

¹⁾ Նապոլէօն Առաջին:

Եւ աջ ձեռս տուր իմ հին հրացանը,

Այլ և իմ սուրս կապիր մէջքիս վրայ:

«Եւ այսպէս պառկած, ականջ կը դնեմ,

Ինչպէս պահապան, գերեզմանումը,

Երբ թնդանօթի որոտը լսեմ,

Այլ և խրխնջող ձիերի տրոփը:

«Եւ կայսրը կ'անցնէ իմ վերայ ձիով,

Կը շառաչէր սուրեր, և նոյն ըղպէին,

Իմ գերեզմանից դուրս կը գամ զէնքով.—

Եւ կը պաշտպանեմ կայսրին, իմ կայսրին»:

Թարգմ. Գ. Բաբելուդարեանց

14.

ԵՐԳՈՐՍՈՅ

Հա՛պա քաջազունք,

Հայոց զաւակունք,

Առէք աղեղունք

Ի մահ երազունք:

Անտառք ըսպասեն,

Կենդանիք սարսեն

Զինոյն 'ի ձայնէն.

Շեշտակի նետեր
 Թափեցէք քաջեր,
 Յերէս անվեհէր:
 Վազեմք, ուր վտանդ,
 Այս մեր զբօսանք
 Որոց արշաւանք,
 Մարտից են կրթանք:
 Երթամք գունդ ի գունդ,
 Յաղեղ և մըկունդ,
 Յուսով սրտաթուռ,
 Շամփրեմք կենդանիս,
 Իբր ըզթշնամիս
 Ի մեր հայրենիս:
 Զի օր մ'ալ նոյնպէս
 Մարտին ի հանդէս'
 Զարնեմք մահազգեաց
 Զոսոխս հայրենեաց.
 Եւ յաղթանակաւ
 Լըցեալ աւարաւ,
 Դառնամք քաջարշաւ.
 Եւ ի մեր դափնիք
 Ծածի տան սիրելիք,
 Պանծան հայրենիք:

15.

Ջ Ի Ն Ի Ո Ր Ի Ե Ր Գ

(Թարգմանութիւն)

Զինւորիս երգերը եղբայրք լսեցէք,
 Աշխարհիս բաները լաւ ճանաչեցէք:
 Մէկն ունի մեծ տներ, միւսն գիւղ ունի,
 Միայն խեղճ զինւորը ոչինչ բան չունի:
 Շորերը թանկագին, փորը միշտ քաղցած,
 Տուր ձիուն միշտ գարի, ինքդ կեր չոր հաց:
 Թէ քաջ պատերազմես՝ կը տան մեծ պարգև,
 Թէ ոտքդ կորցնես, կ'ասեն մնաս Բարև:
 Ո՛ւր գնամ ես մենակ աշխարհիս վրան,
 Ահա՛ քեզ լաւ վաստակ քսան մէկ տարուան:
 Գ. Դողութեանց

16.

Յերկու ձեռին երկու մոմ՝

Ինձ ընդ առաջ ել 'ի տուն,

Մի հարցանէք— ով էր նա,

Հրեշտակ, թէ կոյս լուսագեղ:

Ամօթն ըզնա վարդ արար,

Ես հիացեալ դարձայ քար,

Այն ինչ օր էր և ինչ ժամ,

Յորում տեսի ես կեանք նոր:

Լիաճրբադ յայնմիկ տան,

Ի մարդաշատ բազմութեան,

Ի մէջ աղջկանց և հարսանց

Յոտին կայց ոմն անդ յանկեան:

Այն օրիորդն էր պարկեշտ՝

Ինձ պատահեալ առ դրամբ տան,

Զոգիս գրաւեաց յիւր 'ի սէր,

Ի նմա տեսի ես կեանք նոր:

Մարգարտափալ մարմինն էր,

Հասակն էր յոյժ վայելուչ:

Զնտիւքն վարսք քաշ գային,

Ի գոյն քրքրմոյ փալլէին:

Դիմաց շքեղ երևոյթ,

Յոնից, աչաց, այտից գեղ,

Շըրթանց, լեզուին համանոյ՝

Խոստանային ինձ կեանք նոր:

Ա՛խ ասացի, թմրեցայ,

Սիրտս սկսաւ դողդողալ:

Զաշխար համայն մոռացայ,

Ի գեղ կուսին ափշեցեալ:

Բամք կոչելոցն յայն հանդէս,

Ընդ իմ մեծ բաղդ մախային,

Զի մերձաւորք այն կուսին

Փեսայ զանձն իմ ձայնէին:

Եթէ զաշխարհ լի գանձիւք

Ինձ ոք բաշխէր 'ի պարգև—

Ո՛չ տեսանէր այնքան ըախ,

Որքան 'ի գալս առ կուսին:

Արդեօք, գուցէ յաշխարհի

Սիրոյ նման ինչ հըզօր,

Սէր 'ի ձեռաց Արաբէին

Մեզ մահացուածս է ձիր նոր:

Նանրախորհուրդ ազգ մարդկան՝

Շատ մի սիրեր դու զաշխարհ,

Նա թշնամի է անգութ,
Զար քան զբարբ մահաթոյն:

Ցարցիւ սիրոյ զքեզ կարթէ,
Ի հաղբ անել ըմբռնէ:

Ապա զսիրոյդ առարկայ
Ի քէն արագ կողոպտէ:

Յ. Վ. Ալամդարեան

17.

ՀԱՅՈՑ ԳԻՆԻ

Բաժակներ առնունք, եղբարք,
Լիք լիք բաժակներ գինով,

Կարծիր ու ճերմակ գինին:
Մեզ լինի անուշ համով:

Բերներիս տանենք անվախ,
Զէ դա խառնած կամ խարդախ,

Նեկտար է և ոչ գինի,
Խըմենք, մեզ անուշ լինի:

Արաքսայ ջրով ցողած,
Հայոց արևով հասած,

Հայոց աղջիկ է քաղել

Քնքոյշ ձեռներով քամել:

Այս բերքն է Հայոց երկրին,

Հայաստան տընկած Նոյէն,

Անմահ երկրնային գինին

Նա խմեց, երբ իջաւ սարէն:

Այս անուշ գինին խմողը,

Սրտէն թող հանէ ոխը:

Ամենքս էլ ասենք ամէն,

Որ մեզի շատ տայ ամ էն:

Ռ. Տ.-Գ. Պատկանեան

18.

Ի ննջմանէդ արքայական, զարթիր նազելի

Իմ, զարթիր,

Եհաս նշոյլն արեգական, զարթիր նազելի

Իմ, զարթիր:

Պատկեր սիրոյն տիպ բոլորակ,

Լրացելոյ լոյսնոյն քատակ,

Ո՛չ գտանի քեզ օրինակ. զարթիր և ալն:

Այդ քո տեսիլ զոր զու ունիս,

Արար ծառայ քեզ զգերիս,
 Արևակէզ գուցէ լինիս. զարթիր և այլն:
 Ղաբին արտիւ քանի կոծամ,
 Ե՞ վարդ կարմիր և անթառամ,
 Տես թէ զիարդ խղճալի կամ, զարթիր...
 Տապ և խորշակ ժամանեսցին,
 Զթերթ գեղոյդ այրել կամին,
 Քանզի էանց գիշերն մթին, զարթիր...
 Է աննման իմ գովելիս,
 Ի մէջ ականց գեղ քո մատնիս,
 Ի ռահեակ սոյն թուականիս, զարթիր...

19.

Հայոց աղջիկներ, ձեր հոգուն մատաղ
 Երբ միտս էք գալիս՝ ասում ես ան,
 Հալվում եմ, հալվում օտարութեան մէջ,
 Ա՛խ, սիրաբըս խորվում, ցաւիս չիկայ վերջ:
 Երբ կարմիր գինին բաժակումս ածած
 Սեղանիս վրայ առաջս է դրած,
 Աչքըս ակամայ վրան եմ ձրգում,
 Զեր սիրուն պատկերն մէջն եմ տեսնում:

Տեսնում եմ և, ան, միտքս է մոլորվում,
 Պառն արատսունքով աչքըս պըղտորվում.
 Կարծում եմ բոլոր աշխարհն մըթնեց,
 Արևն էլ խաւեց, էնդուր որ տխրեց:
 Հայոց աղջիկներ, ձեր հոգուն մեռնեմ,
 Զեր սիրուն աչերն էլ երբ կը տեսնեմ,
 Էն սև սև աչերն՝ սև ունքով պատած,
 Կարծես՝ երկնային դալամով քաշած:
 Էն սև սև աչերն, որ շատին սպանեց,
 Բայց էլի շատին դըժոխքից հանեց,
 Ես էլ կենդանի տեղովս եմ մեռած,
 Առանց կրակի էրուած, խորոված:
 Էլ երբ կը տեսնեմ ես ձեզ ման-գալիս,
 Բաղ ու բաղչայում սէյրան անելիս,
 Ինչտեղ ամօթից վարդն էլ է դեղնում,
 Երբ որ ձեր կարմիր թըշերը տեսնում:
 Բըլբուլն էլ վարդից ձեր ձայնը լսելիս՝
 Թըռչում է, թըռչում, ամպերում
 Կորչում
 Եւ իր Արարչի տեսածն ասելիս,
 Փառք քեզ, Տէր Աստուած, փառք քեզ
 Է կանչում:
 Հայոց աղջիկներ՝ ինչ անուն տամ ձեզ,
 Թէ հրեշտակ ասեմ՝ հրեշտակ չեմ տեսել:

Թէ մարդ անուանեմ՝ բէղամաղ կանեմ,
 Ուրեմն ինչ անեմ, մոլորուած եմ ես:
 Մոլորուած եմ ես օտար աշխարհում,
 Հաւատն էլ օտար, օտար և լեզուն,
 Աղջիկն էլ օտար ու ձեզ չի նըման,
 Հայոց աղջիկներ՝ դուք էք աննըման:
 Ձեր սէրն է միայն սրբոտմըս պահած,
 Ձեր սիրով միայն ես եմ կենդանի,
 Ձեր սէրը միայն էս կեանքըս մաշուած,
 Օտարութեան մէջ դեռ կը պահպանի:



20.

Առաւօտեան քաղցր և անուշ հովերըն
 Մեղձեալ հընչեն մեղմով թըփոցդ քովերն
 Արդ՝ ծածանին աչացս լըցեալ ծովերըն:

Բացի՛ր, բացի՛ր, իմ կարմիր վարդ աննման,
 Գեղըդ նըման արեգական վառվառման:
 Քանի ողբամ նոր ի նորոյ խոցոտիմ,
 Ըզիփալուն գեղդ ի միտ բերեալ բոցոտիմ,
 Յորդ արտասուօք՝ ցալգ և ցերեկ թացոտիմ:
 Բացի՛ր, և այլն:

Ձմեռն էանց՝ ես քեզ կարօտ մընացի,
 Այրիմ, տապիմ, որպէս 'ի հուր հընոցի,
 Քեզ շատ օրեր ես 'ի ձեռաց գընացի:

Բացի՛ր, և այլն:

Տեսեալ զծաղկունս՝ զամէն ինչ փուշ
 վարկանեմ,
 Թեօք բաշխեալ՝ զսիրտ իմ քնքոյշ հարկանեմ,
 Ըզցաւ սըրտիս՝ ահա քեզ յուշ արկանեմ:

Բացի՛ր, և այլն:

Արքայարանն Բիւզանդիոյ մեծ շինի,
 Տեղ և բընակ յարմարեալ քեզ յարկ շինի,
 Նաւակատեօք՝ յիշատակ քո յար տօնի:

Բացի՛ր, և այլն:

Պեարոս վարդ. Ղափանցի

21.

Մ Ո Ւ Ս Ա

Արկածք Հայոց ժամանակին ընդ անիւ,
 Փշրին տակաւ մինչդեռ սիրոյ համբուրիւ.
 Ուխտեմք 'ի սէր եղբօր՝ զկեանս դնել գրաւ,
 Օն անդր 'ի մէնջ այր ընկերին լարել դաւ:

Սլացաւ 'ի մէնջ բաղդն անհամբոյր,
Արդ նոր բաղդիս քաղցր է համբոյր.
Եղբայր զեղբայր զգուէ սիրով,
ձոխն աղքատին մատչի զթով:

Էանց գիշեր՝ արդ առաւօտ,
Ի ցօղ ժպտին Մասեաց արօտ.

Եւ վառ 'ի վառ շողշողելով,

Լոյսն արեգիւր ծրփայ 'ի ծով:

Հապա մանկունք,

Վեհ քաջազունք.

Ի գլուխ պսակ,

Ի յաղթանակ.

Առեալ նուագս,

Արաքս արագս.

Օ՛ն փութասցունք,

Օ՛ն երգեսցունք:

Սէր և գութ,

Մեր պսակ.

Առ մեր բաղդ,

Հրաւիրակ:

Յնծասցեն,

Որք լըսեն.

Թէ՛ առւր Հայ,

Ձիչ՝ անդ վայ:

Եղիազար Մելիքեան

22.

ԱՂԱԿԱՆ ԵՐԳ

Հանգիստ իմ անուշ

Անցար գնացիր,

Միայն վերք անբոյժ

Սրտումս թողեցիր:

Սոխակն զեղեցիկ

Կանաչ պարտիզում,

Երգելով քաղցրիկ

Ինձ չէ գրաւում:

Քեզանով միայն

Երջանիկ էի,

Տիկին ինքնիշխան

Ինձ կարծում էի:

Յերեկը մենակ —

Փակուած սենեակում,

Ողբում եմ անյաբխ

Ոչ ոք չէ լսում:

Գիշեր է գալիս —

Մահիճ եմ մտնում,

Տրտում է հոգիս

Քունս չէ տանում:

Մազեր թուխ, երկայն,

Աչեր գրաւիչ:

Ի՛նչ հասակ, ի՛նչ ձայն,

Ի՛նչ հոգի կտրիճ:

Ո՛հ, սիրտըս այրուած

Ողջ քեզ է կանչում:

Ողջ քո անմոռաց

Անունդ է յիշում:

Անգութն ինձ խաբեց

Ուրիշին սիրեց,

Ա՛խ, նա ինձ դեռ վաղ:

Պատրաստեց դադար:

Ս. Շահադեգեան

23. — Բաճակն ցլմցմ

Կապոյտ երկնքում

Աստղեր են փայլում:

Այլ և լուսնեակը:

Ամենից սիրուն,

Ամենից փայլուն

է արեգակը:

Պանաչ դաշտերում

Ենթե այգիներում,

Ծաղիկներ շատեկան:

Բայց չէ ոչ մինը,

Վարդի նմանը,

Նա է ընդթեան զարդ:

Սիրուն աղջիկներ,

Ինչպէս ծաղիկներ,

Ամեն տեղ շատ կան:

Բայց իմ ընտրածը,

Սրտիս սիրածը

Հրեշտակի է նման:

Գ. Բաբունգարեանց

24.

ՊՂԱՍԻ ԲԱՆՔ ԱՆԻ ՔԱՂԱՔԻՆ ՀԱՅՈՑ ԱՌ ՀԱՅԱԶԳԻ

ՈՄՆ, ՈՐ ԳՆԱՑԵԱԼ ԷՐ ՆՄԱՆԻ ՏԵՍՈՒԹԻՆ

Անի քաղաք նստեր՝ կուլայ,

Զը կայ ըսող՝ մի լայ, մի լայ:

Կըսես՝ քիչ է, թող, մնա՛ լայ,

Ա՛խ, երբ լսեմ՝ մի լայ, մի լայ:

Շատ ցաւերով կ'այրիմ տապիմ,
 Զուռնիմ մէկ մարդ հաւատարիմ,
 Որ խղճալոյս գայ՝ մօտենայ,
 Հէջ չէ ըսէ մի լայ, մի լայ:
 Ա՛խ Հայ տղայ, խղճա՛ ինձի,
 Տես՝ թէ քո Անին ինչպէս է,
 Հէրիք՝ ես լամ, դու չը գիտաս,
 Զէ՛ քո Անին ափսոս է:

Ախ ու վախով օրերս անցաւ,
 Լալէն աչքերս կուրացաւ,
 Որք մնալն ինձ վիճակեցաւ,
 Բաղդա բնաւ զիս մոռացաւ:

Կորուցեր եմ թագաւորներ,
 Ժողովեր եմ գլխիս քօռ բուեր,
 Որք միշտ կ'երգեն «Անին անցաւ,
 Անին անտէր աւերեցաւ»:

Անին եմ շատ մօրդաբնակ,
 Մնացեր եմ դառն աւերակ.
 Իմ լացն, իմ կոծն, իմ աղաղակ,
 Անտէր որբերու նմանակ:

Երբեմն էի շատ աննման,
 Հայոց քաղաք Արևելեան.
 Աւերեր եմ սեփահատակ,
 Նստեր՝ կուլամ ես միայնակ:

Եկար՝ տեսար, դարձեր՝ կերթաս,
 Լալով կըսես՝ «բարեաւ մնաս».
 Աստուած սիրես չը մոռանաս,
 Մասիս սարին երբ մօտենաս:
 Ըսես իմ քաջ Արարատին,
 «Նստեր՝ կուլայ քո խեղճ Անին».
 Կըսէ. — Երբ աւետիք կը տաս,
 Թէ՛ «իմ Անի, հէրիք է լաս»:

Աղ. Վ. Արարատեան

25.

Ելէք, ելէք, Օն դուք աստի,
 Հոգ, անձկութիւն ու տագնապ,
 Եկէք ծիծաղք և խաղք մեզի,
 Հաճոյք գոլով սիրոյ կապ:
 Զը պակասեն զբօսանք մեզնէ,
 Կարևոր բան մ'ալ այն է,
 Զիս հրաւիրող ամէնքդ հոս,
 Ձեր եռանդն այս մեծ է:
 Բայց պէտք է խորհիք մտածողք,
 Թէ ինչ ձեր բաղձն որոշեց.

Միշտ սիրեցէք ու բաւ է,
 Ձեզ երջանիկ այն կ'նէ:
 Դէ, սիրոյ համբոյր տուէք արդ,
 Այդ թող լինի մեզ սուր զարդ.
 Հայոց համար այսպէս պիտի,
 Որ նոցա եռանդն զարթի:
 Միշտ յիշեցէք ձեր նախնիքը,
 Ամուր պահէք այն պարտքը,
 Որ միշտ հնչուի ձեր ականջին.—
 Հետեւեցէք այս դարին:

26.

ՈՒՍԱՆՈՂ

Երբ որ հողից մարդ դարձայ,
 Երբ Աստուածանից հարցայ,
 Թէ քնչ վիճակ ես ուզում.—
 Ասի՝ ուսանողութիւն:
 Աստուած ուզեց զարդարել
 Ինձ, գիւլայ շորեր կարել.
 Ասի՝ էն դու կանանց տուր,
 Ինձ մի նշանազգեստ տուր:

Կապտածըղի գնդակ տուր,
 Մէջքէս կապէ հատու սուր.
 Մառանումըս լաւ գինին,
 Թող միշտ անպակաս լինի:
 Իմ սիրելի նազելին
 Մնա ինձ միշտ հաւատարիմ.
 Փրղըշտացի ախոյեան,
 Տէս իմ սուրն է իմ պաշտպան:
 Ո՛վ չի իլել ուսանող,
 Լաւ է, որ միշտ մընար հող,
 Քանց Աստուծոյ լոյս արեւն
 Անասնոց պէս վայելէր:
 Ո՛վ չի կոնծել երգելով,
 Ընկերաց հետ պաշուելով,
 Նա չը գիտէ ցնծութիւն
 Եղով սրտին, վայ հոգուն:
 Մեզնից էնպէսն հեռանայ,
 Էոյս աշխարհից վերանայ.
 Թող անասնոց կարգն ընկնի,
 Թող մեր մէջ նա չի մըտնի:

Ռ. Տ.-Գ. Պատկանեան

ԵՐԿՈՒ ՔՈՅՐ

Մեզնից շատ առաջ կար մի թագաւոր,
 Հոգով դեռ արի, գլխով ալեւոր.
 Մեծ ծով էր պատել նորա աշխարհը,
 Ոսկի ասացին գիտունք այն դարը:
 Ունէր նա երկու մատաղհաս աղջիկ,
 Մինը խիստ տգեղ, միւսը գեղեցիկ.
 Մի օր տգեղը ասաց միւսին. —
 «Երթանք ծովի ափ, քոյրիկ, միասին»:
 Սիրունը գնաց առաջից տրտում,
 Տըգեղը ետնից ոխ պահած սրտում.
 Հազիւ թէ ծովի ափին էր հասած,
 Իր սիրունը քրոջ գլորեց նա ցած:
 Կանչեց կիսամեռ սիրունը ջրից. —
 «Քոյրիկ իմ, քոյրիկ, փրկէ ինձ մահից.
 Ես ունիմ տանը գեղեցիկ մանեակ,
 Ա՛ռ, էն քեզ լինի, պարգևէ ինձ կեանք»...
 — Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ,
 Ինձնից փրկութիւն դու բնաւ մի յուսալ:
 «Քոյրիկ, թէ այդ էլ քեզ չէ բաւական,
 Կուտամ քեզ ոսկի պսակ պատուական»:

— Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ,
 Ինձնից փրկութիւն դու բնաւ մի յուսալ:
 «Քոյրիկ, մի թողուլ դու ինձ անտէրունջ,
 Քեզ սիրուն փեսայ կուտամ անտրտունջ»:
 Տգեղի սիրտը դարձել էր ժէռ քար,
 Քրքոջ խնթիրքը թողեց անկատար:
 Ձկնորսը ծովը ձգեց մեծ ուռկան,
 Բռնեց մարմինը սիրուն աղջկան.
 Ջրից հանեց դրեց ափի մօտ,
 Ետ ծաղիկ ցանեց վրան ու շատ խոտ:
 Մի աշուղ անցաւ, տեսաւ աղջկան,
 Լացեց ու առաւ, դրեց ուսի վրան.
 Տարաւ իրան տուն այդ անգին գիւտը,
 Չորցուց նորա մարմնու գիւթի հիւթը:
 Գեղեցիկ տաւիղ շինեց ոսկերից,
 Քաղցրաձայն լարեր հիւսեց մազերից.
 Երբ որ ամեն բան պատրաստեց կարգին,
 Գնաց արքունիք տաւիղը ձեռքին:
 Երբ մըտաւ դահլիճ շքեղ զարդարած,
 Տեսաւ տըգեղին փեսի մօտ կանգնած.
 Բացեց բերանը, լարերին խփեց,
 Հիւրերի առջև քաղցրաձայն երգեց. —
 «Հնչէ իմ տաւիղ, հնչէ համարձակ,
 Հարազատ քոյրըս խնց իմ պսակ.
 Լսէ իմ ծնող, լսէ սիրական»:

Հարազատ քորս խլեց իմ փեսան.
 Լսէ ժողովուրդ, լսէ անխըռով,
 Հարազատ քորս գլորեց ինձ ձով»:
 Միւս օր դահիճք խարոյկ շինեցին,
 Մահապարտ քրոջ մէջը գլորեցին.
 Հուրը պլպլաց, աղջիկը կանչեց —
 Իմ մեղաց համար Աստուած ինձ պատժեց:

Ռ. Տ.-Գ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

28.

ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ

Աստղիկ ունէի ես իմ երկնքում,
 Փայլում էր լուսով իւր շրջապատում.
 Երբ գալով գիշերը, ծածկում էր խաւար,
 Սիրուն գեղեցիկ էր այն իմ գոհար:
 Թռչնիկ ունէի իմ մոլթ անտառում,
 Ոչ մինը չը կար այնպէս կարկաչուն.
 Ծառերի տակին, հովիկ ստուերում,
 Սիրում էր նա միշտ երգել իւր դարուն:
 Ծաղիկ ունէի իմ անապատում,
 Խնդուլիւն կեանքիս տխուր և տրտում.

Նորա քաղցր ժպտման, զուարթ երեսին,
 Կը նախանձէր վարդը Եդեմայ դրախտին:
 Բայց խաւարեցաւ աստղիկս երկնային,
 Սոխակը թռաւ իւր բունը մթին,
 Խլեց իմ վարդը սառն հիւսիսային,
 Խոր խոցոտելով ծնողիս հոգին:

29.

ԱՂԱՍՈՒ ՄՕՐ ԵՐԳԸ

Զարթիր, մանուկ իմ նազելի,
 Բաց այդ պայծառ աչերը,
 Թերթերունքէդ բունը թօթուէ,
 Գիրկը հանգիւր բու մօրը.
 Բաւ քեզ որքան բարի հրեշտակք,
 Հէքաթ ասին երազում,
 Այժմ արի քեզ այն պատմեմ,
 Ինչ պիտ' տեսնես աշխարհում:
 Զարթիր, որդեակ, քանի՞ քընես,
 Բաց աչերդ այդ նախշուն,
 Ուր որ մայրդ իւր բողբ, փառքը,
 Կեանք ու արևն է տեսնում:

Գուհն կը մեծանաս, բոյ կը քաշես—
 Ձինար բոյիդ ես ղուրբան,
 Քեզ ուժ կուտան Մասսի քաջքը,
 Որ դու լինիս քաջ Վարդան:
 Իմ մատներով մի ոսկեթել,
 Մէջքիդ գօտի եմ կարել,
 Գօտիցըդ թուր կը կապեմ,
 Այն էլ ինքս եմ սըրբել:
 Ձարթի՛ր, որդեակ, քանի՞ քընես և այլն:
 Մեր բակումը ձի է կայնած՝
 Քեզ է մնում անհամբեր,
 Ձարթի՛ր, որդեակ, քանի՞ քընես,
 Ա՛ռ քու թուրը մահաբեր.
 Քու Հայ ազգը հեծեծում է՝
 Ձեռքը ոտքը շղթայած,
 Քու եղբարք գերուկեան մէջ.
 Քաջ, միայն դու ես քնած:
 Ձարթի՛ր, որդեակ, քանի՞ քընես և այլն,
 Ձէ, իմ որդին շուտ կը դարթէ,
 Ձին կը հեծնէ սանձակոծ:
 Հայի արցունքը կը սրբէ,
 Կը դադարեցնէ լաց ու կոծ:
 Հայր եղբայրներ, քիչ էլ կացէք,
 Իմ Աղասին զարթեցաւ.

Գօտին կապեց, թուրը կախեց,
 Ու իր նըժոյգ ձին նըստաւ:

Ռ. Տ.-Գ. Պատկանեան

30.

ՀԱՍՈՒ ԵՐԳԸ

Ահա՛ ծագեց կարմիր արև,
 Տաք և պայծառ է օրը,
 Դէ, քաշեցէք, սիրուն եղներ,
 Յառաջ տարէք արօրը:
 Վարը վարենք, աղօս փորենք,
 Խոր աղօսներ հողի մէջ.
 Սերմը ցանենք, որ հունձ հնձենք,
 Ցորեան դիզենք կալի մէջ:
 Կը՛կայ ձմեռ—մենք վախ չունենք—
 Ուրախ կ'անցնի մեր օրը,
 Ուտելու միշտ պաշար ունենք,
 Լի և կուշտ է մեր փորը:
 Դէ, քաշեցէք, սիրուն եղներ,
 Ելաւով վարենք արտերը,

Թող չ'ասեն մեր դրացիքը՝
Ծոյլ են Հասօի եղնները:

Բաֆֆի

31.

Կ Ր Ա Մ Բ Ա Մ Բ Ո Ի Լ Ի *)

(Թարգմանութիւն ռուսերէնից)

Կրամբամբուլին էս էն օղին է,
Որ մեզի քաջ ծանօթ է,
Որոյ համը չի տեսնելը
Ուսանողին ամօթ է:
Բայց հանապազ, իմ սիրելի,
Մենք կոնծում ենք կրամբամբուլի,
Կրամբամբուլի բամբուլի,
Հայրս անգաղալ ինձ գրում է՝
«Որդի-ջան՝ շուտ աշտարտէ.
Ժամանակդ արագ անցնում է,

*) Մի կերպ օղի է, կարմիր գոյնով և քաղց-
րահամ:

Տես, գրերդդ լաւ սերտէ».
Բայց նորա պարոն որդին
Կոնծում է կրամբամբուլին, կրամ-
բամբամբամբուլի, կրամբամբուլի:
Թէ դարդն ու հոգսը ինձ նեղում է,
Թէ իմ քէֆը տեղը չէ,
Թէ աղջիկը ինձ խաբում է,
Ու էլ հաւատարիմ չէ.
Կ'ասեմ.—Աղջիկ, իմ նազելի,
Քու տեղ կը սիրեմ կրամբամբուլի,
կրամբամբամբուլի, կրամբամբուլի:
Թէ լերդս ու թոքքս իմ մաշուել է,
Գլուխս էլ սաստիկ ցաւում է,
Թէ որ խմելն ու քէֆ անելը
Բըժիշկն ինձ արգելում է,
Բայց ինչ ցաւ կ'ուզէ ըլի,
Ես կը կոնծեմ կրամբամբուլի, կրամ-
բամբամբուլի, կրամբամբուլի:
Երբ մայրս ինձ մի հարս ճարել է,
Ասում է որ պսակուիմ,
Եւ պարտքն ու կարգն ինձ ստիպել է,
Որ ես ճաշ ու քէֆ սարքեմ.
Եւ ճաշի տեղ, իմ սերելի,
Կ'առնում առատ կրամբամբուլի կը-
րամբամբամբուլի, կրամբամբուլի:

Բայց երբ կուգայ կեանքիս վերջը,

Մահս էլ առաջիս տեսնեմ,

Օղին կ'ածեմ բաժակին մէջը,

Հոգեհանիս էլ կ'սեմ, —

«Վերջին անգամ, իմ պատուելի,

Եկ տուաքացնենք կրամբամբուլի,

Կրամբիմբամբուլի,

Կրամբամբուլի:

Ք. Տ.-Պ. Պատկանեան

32.

Ս Ս Յ Լ Ո Ր Դ

Սհա սուրհանդակի սալակը

Ուղիղ ճամբով է դուրս թռչում,

Եւ վալդայի տխուր զանգակը

Կամարի տակն է ղողանջում:

Արթուն սալորդըս գիշերուայ դէմ

Իւր վիճակի վերայ տխրեց,

Եւ սիրեկնի աջաց կարօտը

Նա տխրագին ձայնով երգեց.

«Կապոյտ աչեր, կապոյտ աչեր,

Կըտրիճիս կեանքը մաշեցիք,

Ինչո՞ւ, ինչո՞ւ, դուք, չար ոսոխներ,

Ինչո՞ւ սրտերըս բաժանեցիք:

«Մընաս բարե, իմ տուն հօրական,

Մընաս բարե, իմ սիրեկան,

Ես կը հանգչեմ զինչ բոց կրակին

Այս անբնակ դաշտի միջին:

«Արեւիս լոյսը խաւարել է,

Այս աշխարհումն էլ որբ եմ ես,

Սըրտիս կարօտը աղջկայ տեսնելից

Մինչև ի մահ զրկած եմ ես»:

Այս որ ասաց՝ շարժեց մտրակը

Երեք ձիանց մէջքին խրվեց,

Իւր սիրեկնի պարզ յիշատակը

Այսպէս երգով նա փարատեց:

33.

ԵՐԳ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

Ահա բաժակ ուրախութեան

Ի սէր յաւերժ միութեան,

Զի վայելուչ՝ որդիք Հայկեան

Մէկտեղ հրճուին և ցնծան:

Կեցցէ սէր և միութիւն,

Կրեմք մի սիրտ մի արիւն:

Վերցուր աչքըդ յերկնից կամար,

Փայլի հեռուն աստղ մի պայծառ,

Եւ դու ո՛ր Հայ, զարթիր սիրտ առ,

Հայոց բաղդն ալ չէ խաւար:

Կեցցէ սէր և միութիւն,

Կրեմք մի սիրտ մի արիւն:

Բա՛ւ է այսչափ բաժանում

Ըլլամք ուրախ և խնդում,

Նախանձ, վրէժ, ձեզ թողում

Անդունք և վիհք անհատնում:

Կեցցէ սէր և միութիւն,

Կրեմք մի սիրտ մի արիւն:

Փորձ մը ըրինք բաժանման,

Փորձ մ'ալ ընենք միութեան.

Լեցուի փափագդ Հայաստան,

Տես որդիք քո միանան:

Կեցցէ սէր և միութիւն,

Կրեմք մի սիրտ մի արիւն:

Ինչ և ընեմք ինչ կերպ առնեմք,

Ո՛ր չը գիտեր թէ մենք Հայ եմք,

Ո՛վ չը գիտեր թէ եղբայր եմք,

Արիք ծիծաղ զիմօք երգեմք:

Կեցցէ սէր և միութիւն,

Կրեմք մի սիրտ մի արիւն:

Ո՛ր բռնաւոր, որ օրէնքներ,

Կը պատուիրեն թէ մի սիրեր

Ազգիդ օգուտն ու ջարիքներ,

Սիրոյ գահն է յերկինս 'ի վեր:

Կեցցէ սէր և միութիւն,

Կրեմք մի սիրտ մի արիւն:

Թէ իմ ալիոր հերքս սենային,
 Ոյժս ինձ յետ դար, կըտրիճ դառնայի.
 Նժույգ ձի նըստած, բեխերս ոլորած,
 Զեռքս թուր առած ես դաշտ կերթայի.
 Ես դաշտ կերթայի — դաշտ Աւարայրի,
 Ողողած ցօղած Հայոց արիւնով,
 Ա՛գգ իմ սիրական, դու ազգ Թորգոմեան,
 Գու կորցրած թագը քեզ յետ կուտայի:

Կ'ասէի Հայոց օրիորդներին.
 «Ծախեցէք հագի ձեր թանգ շորերը,
 Թողէք պաճուճանք, զարդ մարգարիտներ —
 Ժանգոտած ու գուլ են մեր թըրերը:
 Տուէք բեհեզեայ մեզ ձեր շապիկը,
 Որ մենք փաթաթենք մեր մարմնու վերքը:
 Վիրակապ հիւսէք դուք ձեր մագերից.
 Այսպէս յայտնեցէք դուք մեզ ձեր սէրը»:

Թէ ես լինէի հարուստ մեծատուն՝
 Սընդուկներըս լի ոսկով արծաթով,
 Շատերի նըման ես չէի լինիլ
 Երբէք ազգասէր ունայն խօսքերով:

Շամպանեա գինու ալմաս խազի տեղ
 Կ'առնէի առատ գնդակ ու վառօղ.
 Արձակ համարձակ կ'երթայի հանդէպ,
 Հայատեաց ազգին անթիւ զօրքերով:

Թէ ես լինէի մի երկրի իշխան՝
 Կուտայի զօրքիս սաստիկ հրաման,
 Շուտաքայլ երթալ դէպի Հայաստան,
 Խղճուկ Հայ ազգին լինել օգնական:
 Եւրոպ' Ասիա արեան գետերը
 Կը վազեցնէի հեղեղի նըման,
 Մինչև որ թագ, գահ ու ազատ կըրօն,
 Ինձնից չըստանար թշուառ Հայաստան:

Մյայն նի սյու Ռ. Տ. Գ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

մատասայա՛, մատասայա՛, մատասայա՛

իլլիպափ մանմա մատասայա՛

մայառո մաճլոմ տափրա՛, բեզ Վ

յոմ — — — — — մեզ մաճլոմ

մատասայա՛, մատասայա՛, մատասայա՛

սիրառչամճիս գրառչաց ցամփ

իկիռնոյ մմմա մյապ քրո՛ճ

նաճմը աչմն մեզ, տմ նիկյա մփ

35.

ԱՌՆԱՅԱՆՈՒՄ

Հայաստան երկիր դրախտավայր,
Դու մարդկայնոյ ցեղիս որրան,
Դու և բնիկ իմ հայրենիք,
Հայաստան, Հայաստան, Հայաստան:

Ի վեհ անունդ սիրտ իմ, զհայր, յոյժ
Ոգևորի ի նոր խրախոյս,
Եւ անձկայրեաց ի քեզ յուսամ.
Ի քեզ՝ ի քեզ յոյս իմ միայն
Հայաստան, Հայաստան, Հայաստան:

Հայաստան անուն փարեղի,
Ի քեզ հանդիստ Նոյեան տապան,
Եգիտ և քեւ ապրեցաւ Նոյ,
Հայաստան, Հայաստան, Հայաստան:

Գետք քաջառաջք աշենաբուղիս,
Զհողդ բարի առնեն յուռթի,
Քեւ ապրիմ ես, քեւ միշտ ցնծամ,

Քեւ, քեւ պանծամ փառք իմ միայն,
Հայաստան, Հայաստան, Հայաստան:

Հայաստան ծնող դիւցազանց
Եւ հրաշալեաց հանդիսարան,
Քո զեփիւռն քաղցր է շնչիւն,
Հայաստան, Հայաստան, Հայաստան:

Հայկ, Արմենակ, Արամ, Տիգրան,
Տրդատ, Սմբատ, Վարդան, Վահան,
Զոր հնչեցին և զօրացան,
Զքեզ լիշեմ, զքեզ սիրեմ,
Զքեզ, զքեզ, սէր իմ միայն,
Հայաստան, Հայաստան, Հայաստան:

Յ.—Մերդա վանանդեցի

36.

ԱՂԻՆ ՏԱՐՆԻ

Զարմանք բան է, հենց գիտենաս,
Աղէք տանը չին նստում.
Իսկի չէլաւ վուր մի գըտնիմ
Աղալօին իր տընում:

Մի արմընա, պարուն Սարգիս,
էս աշխարքի աղաթին,

Իշխանք գանա, դու խաբար չիս,
Վուր քասիբին կու տաին:

Ա՛ն օրինակ, թէ մեծավուր,
Սպելատները ուսին,
Գալ դրուան մօտ հարցնէ աղին,
«Տանն է».—տանն է, կօսին:

Նըրա էդնից մի փէշաքար,
Ելի էն նօքրին հարցնէ.—

«Տանն է աղէն»։ Կընծին տալով
Խեղճին իսկոյն դուս կօնէ:

Թէ աղի մօտ լաւ շուրերով
Կուգաս՝ տանը կու գթնիս,

Վալ թէ չուխէդ հընացած է,
Լաւն էն է, տունն չի մըտնիս:

Թէ սալօպով աղջիկ պարոն
Կուգայ՝ թող ներս հրամայէ,

Թէ զաթիպով պառաւ ձալօն
Հարցնէ—կօսին տանը չէ:

Թէ վուր ձեռքիդ քիւս բըռնած,
Պարոնին փուղ բերելիս,

Փառք ու պատուով ներս մըտնում իս,
Դիւի վըրայ տեղ ունիս:

Թէ դու քանդար իս, հէսաբով
Փուղի էդնից իս էկի,—

«Տանն է աղէն»։ Կօսին—հալանա
Փամիցը տունն չի էկի:

Ես է հիմիկուայ աղաթը,
Կուգիս ջիգրից տըռաքի,
Թէ քասիբ իս, ջուրը ընկի,
Թէ զօչաղ իս՝ տունն մըտի:

Ռ. Տ. Գ. Պատկանեան
—

37.

ՏԱՂ ՈՒՐԱԽ ՈՒԹԵՆ

Պայծառ արփին արդ բարձրացաւ,
Կարմիր վարդին ոստ կակղացաւ,
Հալման սառին ժամ է արդէն,
Ծաղկման ծառին ժամ է արդէն:
Եկն էհաս բարեկենդան,
Քաղցրիկ գարնան դրունք բացան,
Ծնունդք մաքեաց արձակեցան,
Ձենման գառին ժամ է արդէն:
Տալ զբաժին 'ի փշրանաց,
Լնուլ զծոցս տնանկաց՝

Սփռել կարօտ խեղճ աղքատաց,
Տուր զձեռին ժամ է արդէն:

Բամեալք եղբարք 'ի միասին,
Առնուլ զբաժակ գինւոյ թասին
Եւ ամօքել մարմնոյ մասին,
Կեանքս տառին ժամ է արդէն:

Ուրախութեամբ ուտել զհաց,
Զուարճանալ անուշ գինեաց,
Վարել զկեանս ընդ սիրելեաց,
Զսուրբ տառն ժամ է արդէն:

Սիրել ներել աշակերտաց,
Կոչել զգաստ երաժշտաց,
Ունկն դնել եղանակաց,
Քաղցրաբանիլ ժամ է արդէն:

Պետրոս Վարդ. Ղափանցի

38.

Կ Ե Ն Ա Ց Բ Ա ժ Ա Կ

(Գերմաներէնից)

Եղբարք՝ մի շուրջ ժողովեցէք,
Քաջ Հայոց կերպի կոնծեցէք,
Բաժակները դարդրկեցէք
Մեր Հայ ազգի կենացը: (Կրկնէ):

Հայոց երիտասարդներուն,
Հայրենիք պաշտպանողներուն,
Որոց անկումն էլ սուրբ է մեզ—
Այս բաժակը նըւիրենք:

Հայ աղջիկներու կենացը,
Որք միայն Հայ մարդ կու սիրեն,
Միշտ իրանց մաքուր կու պահեն—
Այս բաժակը դարդրկենք:

Արանց, որ մեր սիրտն գրաւում են,
Մեզ զգօն ճամբով վարում են,
Որոց կեանքը մեզ օրինակ—
Մի երբեակ «կեցցէ» ասենք:

Եղբարց, որք այժմ աւարտել են,
Մեր ուխտին անդամ եղել են,
Որոց ուխտը միշտ սիրում է—
Այս բաժակը նըւիրենք:

Եղբարց, որք դարդից ազատ են,
Մահուան հանգիստ վայելում են,
«Ողորմի հոգուն» ասելով—
Այս բաժակը նըւիրենք:

Բայց դեռ որ գինին փայլում է
Ու մեզ իրան մօտ քաշում է,
Բաժակներըդ դարդը կեցե՛ք—
Ազատութեան կենացը:

Ք. Տ.-Պ. Պատկանեան

39.

ՀԱՅՈՑ ԱՂԶԻԿ

Դու տեսել ես երկնքումը
Պայծառ լուսին ծագելիս,
Կամ թէ կանաչ տերևի մէջ
Կարմիր ծիրան փայլելիս:

Դու տեսել ես ծաղկոցումը
Կարմիր վարդը փրթըթած,
Շուշան, մեխակ ու նունուֆար
Զորս բուրբը պար բըռնած:

Բայց լուսինը խիստ խաւար է
Հայ աղջկայ առաջին,
Ծիրան, մեխակ ու նունուֆար
Զ'արժեն նորա մէկ պաշին:

Երկու թըշին վարդ են նստել,
ձերմակ ճակտին մէկ շուշան.
Ժպիտը բերնից ցած չի գալիս—
Անմեղութեան է նշան:

Տես, նա առաւ կարմրերով
 Իր ընկերից դահիրան,
 Դրմբդրմբեցուց փափուկ մատով
 Ու սկսեց Լեզգիինկան:

Նազուք մէջքը ծառի նման
 Տատանում է գեղեցիկ,
 Մէկ թռչում է նա անգուման
 Մէկ գնում է խիստ հեզիկ:

Հալվում է խեղճ կտրիճների
 Սիրտը՝ նորան տեսնելով,
 Ծերը իրան անիծում է,
 Որ ծերացաւ խիստ շուտով:

Ռ. Պառկանեան

40.

ՀԱՐԲԱԾ ՄԱՐԴՈՒ ԵՐԿ

(Գերմաներէնից)

Ուղիղ գնետունից ես տուն եմ գընում,
 Փողոց, այ փողոց, էդ թնչ եմ տեսնում.
 Աջ գընաս թէ ձախ՝ ծուռ են երկուսն էլ,
 Փողոց՝ տեսնում եմ՝ դու էլ ես հարբել:
 Լուսին ջան՝ ուխտդ ինչք է ծըռած,
 Մէկ աչքդ կապուել, միւսը կէս բաց.
 Դու էլ ես կոնծել, այ դու անամօթ,
 Ամաչիւր ինձանից, վաղուցուայ ծանօթ:

Բա՛ էստեղ, էստեղ—տես, լապտերներն էլ
 Չեն կարող ուղիղ ոտքի վրայ կանգնել.
 Մէկ պարզ են վառվում, մէկ՝ սաստիկ խաւար,
 Կամ թէ՛ պատից պատ կըպչում անդադար:
 Ախբէր՝ էս գիշեր ամենքն են հարբել,
 Ի՞նչ բան է մենակ-մենակ ծոմ պահել,
 Չէ՛ էդ կը լինի խտակ գըժութիւն,
 Ուրեմն նորից նոր գառնամ գինետուն:

Գորգ Դուրիսեանց

41.

ԹԽԸԽՈՏԻ ԵՐԳ

(Թարգմանութիւն գերմաներէնից)

Թէ ծխաքարը ձեռիս՝
 Սենեակումըս նստած եմ,
 Քըթիցս ծուխ հանելիս
 Կարծում եմ թէ՝ իշխան եմ:
 Երբ քամին ծուխըս փչի,
 Ես պինդ ծիծաղում եմ.
 Ասում եմ՝ մեր գործերը
 Էսպէս անցաւոր են:
 Ազնիւ խոտ՝ դու զօրութիւն,
 Կեանք և ոյժ ես տալի.
 Ա՛խ կարնայի քեզ գովել,
 Ինչքան սիրտըս է տալի:
 Ո՛վ երկինք՝ տո՛ւր էս խոտին
 Դու արև և անձրև շատ,
 Եւ սորա մըշակողին՝
 Օրհնութիւն, կեանք ու բաղդ:
 Մենակութեան ժամանակ
 Դու ինձ լաւ ընկեր ես.

Թէ իմ սիրտըս նեղանայ՝
 Քեզ կ'առնեմ ես ձեռքս.
 Թանգ ես, թուրքի ծըխախոտ,
 Հարուստներու բան ես,
 Հոգիս էլ տամ՝ քեզ կ'առնեմ
 Ու կ'ածեմ գըրպանըս:
 Ինչքան էլ դատարկ լինի
 Փողերիս քըսակը,
 Պէտք է անպակաս լինի
 Բերնիս ծըխաքարը:
 Ուսանող՝ առ ծխաքարըդ,—
 Շուտ կ'անցնի քու կեանքը,—
 Ու ծըխելով միտք արա՛.
 Ունայն է աշխարհը:

Գ. Տ.-Գ. Պատկանեան

42.

ԵՐԳ ԲԻՐԱԽՈՒԹԵԱՆ

Արեք որ երթամք
 Սոխակաց երամք,
 Ծաղիկ բացուեցաւ
 Միշտ փառօք ցընծամք:
 Արի, գովելի,
 Դովելի լի լի, (երեցօ):

Ծաղկունքըն գարնան՝
 Սոխակ աննըման,
 Զայնիւ ցընծալով
 Եղանակ բառնան:
 Արի, գովելի և այլն:

Զայնիւ երգեսցուք,
 Սիրով գոչեսցուք
 Ու դէմ 'ի վարդին
 Միշտ ոստոստեսցուք:
 Արի, գովելի և այլն:

Եւ մենք երգեսցուք,
 Սիրով գոչեսցուք.
 Եւ 'ի ժամ գարնան
 Միշտ փառք տացուք:
 Արի, գովելի և այլն:

Եկալք սիրեսցուք,
 Զմիմեամք փարեսցուք,
 'ի Հանդէպ վարդին
 Պարուք բերկրեսցուք:
 Արի, գովելի և այլն:

Ահա ցնծացուք,
 'ի պարտէզ Հասցուք,
 Դու միշտ ցանկալի՝
 Ես ուրախացուք:
 Արի, գովելի և այլն:

43.

Կ Ռ Ո Ւ Ն Կ

Կռունկ գարնան աւետիս,
 Երամդ որ աշխարհից,
 Լուր չունիս պանդխտիս,
 Մեր հայրենի գաւառից:
 Ո՛վ գաղթական թռչուն,
 Էսօր տխուր ես կռկռում.
 Գիտեմ փոփոխութիւնդ,
 Ճանապարհդ ես նշմարում:
 Ել չես տեսնի ծաղկած
 Հայաստանի դաշտերը,
 Եւ անտառներով ծածկած
 Նրա սրբազան ծառերը:
 Դէ՛հ, թռիւր կռունկ, շրջիւր
 Երկրիս ամեն անկիւնը,
 Եւ Հայոց ազգին լիշեր
 Իւրեանց նախնեաց արիւնը:

Մ. Փ.

44.

Վ Ա Ր Դ Ի Ո Ս Տ

Ասա դու ինձ, հստոգ վարդի,
 Ո՛ւր ես ծլել, որ ես ծաղկել,
 Ո՞ր հովիտի կամ որ դաշտի
 Զարդարանք ես դու եղել:
 Արդեօք ծլել ես Եդեմում,
 Եւ ջրել է քեզ Եփրատ,
 Թէ սնուցել է իւր գոգում
 Քեզ ծերունին Այրարատ:
 Որ անգութի ձեռն է քաղել
 Քեզ քո թփից մայրենական,
 Կամ որ անգութն է քեզ տնկել
 Այս աշխարհում պանդխտական:
 Կամ թէ այն թուփ, քո օթեան,
 Թառամեցաւ քեզ համանման,
 Թէ սոխակները, քաղցրաձայն,
 Մխիթարում են միշտ նորան:
 Բայց դու չունիս միտթարիչ
 Ով թագուհիդ ծաղիկների,
 Զունիս դու քեզ սիրոյ երգիչ,
 Թառամում ես երկրիցդ հեռի:

Մի մի ագռաւ, վատահամբաւ,
Գուշակում է նոր գոյժ, նոր ցաւ,
Իսկ դու տխուր, վիրաւորուած
Կախել ես գլուխըդ թառամած:

Չալալեանց

45.

Ե Ր Ա Ջ

Ես լսեցի մի անուշ ձայն, —
Իմ ծերացած մօր մօտ էր.
Փայլեց նշույլ ուրախութեան,
Բայց ափսոս, որ երազ էր:
Կարկաչահոս աղբիւր այնտեղ՝
Թաւալում էր մարգարիտ, —
Նա յստակ էր որպէս բիւրեղ,
Այն երազ էր ցնորամիտ:
Եւ մէղեղին տխուր, մայրենի
Յիշեց մանկութեան օրեր. —
Մօրըս համբոյրն ես զգացի, —
Ախ, ափսոս, որ երազ էր:

Կուրծքին սեղմեց կարօտագին,
Աչքերըս սրբեց, — շատ թաց էր, —
Բայց արտասուք գնում էին,
Ախ, այդ ինչո՞ւ երազ էր:

Ս. Շահադեղեան

46.

ԵՐԳ ՄԵԾԻՆ ՎԱՐԴԱՆԸՆ

Հուր բարկութեան համայն Հայոց,
Բորբոքեալ զերդ բաց բարկաճաթ.
Ու կայծականցըս բիւր բիւրոց,
Ձարթոյց 'ի մարտ սարս սառնապատ:
Ձի՞ վարանիմք արդ աստ եղբարք,
Դատարկ ձեռամբ, դատարկ ձեռամբ.
Ձեռամբ յԱրտազ Տղմուտ օն դրոյդ,
'ի դրոյդ, 'ի դրոյդ,
'ի դրոյդ թուէմք սլանամք, սլանամք,
սլանամք:
Հուր զէն 'ի ձեռին,
Եւ վրէժ ահագին,

Սպասեն և գան
 Քաջք Արշակունեան:
 Եւ յոր երկինք հանդիսատես
 Զաշխոյժ նախնեաց հեռու օր մեզ,
 Հապճն քաջք քաջաց
 Ընդ սասան կուրծս
 Մխեսցուք մկունս
 Ուժգին 'ի հարուած:

Թ. Սէպէֆէրան

47.

ԱՂԱՍԻՒ ԵՐԳԸ

Սար ու ձոր ընկած, մէկ չոր թփի տակին,
 Գետնին նայելով՝ մնացել եմ նըստած.
 Զեռս ծոցումըս, գլուխս մէկ լուռ քարի
 Տըւած՝ լալիս եմ օրըս խաւարած:
 Ամպերն առաջիս, սարերն ետեւիս,
 Քեզ մտիկ տալով, այ իմ քաղցր Մասիս,
 Աղի արցունքով էրուած, խորոված,
 Երեսիդ նայեմ՝ մընամ քարացած:
 Ծընօղք, ազգագանք հեռու ինձանից,
 Լուսնին նայելով, ձեր սէրն յիշելով,

Եարաք երբ կըլի, որ ես ձեզանից
 Իմ կարօտս առնեմ՝ ձեզ ջան ասելով:
 Աչքըս ծով դարձաւ ճամբին նայելով,
 Մէկ ղուշ որ գլխիս պըտիտ է գալիս,
 Թէ երբ մէկ խաբար կը հասնի ինձ բարով,
 Հոգոց հանելով ասում եմ լալիս.
 «Նազլու իմ, Նազլու, աննըման Նազլու,
 Սիրտս խորովի անունդ յիշելով:
 Նազլու իմ, Նազլու, հրաշալի Նազլու,
 Աղասին քեզ տայ իր յետին բարով:
 «Սարերի դօշին, ձորերի միջին,
 Վայ գլխին տալով քու խեղճ Աղասին,
 Երեսիցդ զրկուած, քու սիրով մաշուած,
 Տատրակի նըման, փշի վերայ նըստած:
 «Նազլու իմ, Նազլու, մէկ ղունչս է մնացել,
 Ոսկերքս քրքրվել, աչքերս խաւարել,
 Թող մէկ ղունչդ առնեմ, յետոյ հող մօնեմ,
 Դժոխքն էլ տանեն՝ ես հանգիստ կըլնեմ:
 «Քեզ եմ մնում, քեզ, քու ջանին մեռնեմ.
 Հող ու գերեզման ես վըրես ունեմ,
 Քանց իմ սառը մարմին էլ թնչ գերեզման
 Ինձի պէտք կուգայ, երեսիդ ղուրբան»:

Թ. Ս. Սեֆէրան

48.

ԻՏԱԼՈՒՀԻՔ ԵՒ ԻՏԱԼԱՅԻՔ

Ա.

Ինչո՞ւ, ինչո՞ւ Իտալացիք,
 Ձէ թնդում քաղցր երգեհոն,
 Ինչո՞ւ քնքոյշ Իտալուհիք,
 Թողել էք ձեր պիանօն:
 Մոռացել են դոքա, ասես
 Փափուկ սեռը կանացի.
 Սրտում վրէժ, կտրիճի պէս,
 Դիմում են վրանը ոսոխի.
 Որպէս տան մէջ, նոյնպէս կռում
 Կանգնած են հէզ և հպարտ,
 Գնդակներին կուրծք են ուղղում,
 Եւ շրթունքից չէ՛ գնում վարդ:

Բ.

Ձարմանում էք, ինչ ասում եմ.
 Թէ դուք նոցա տեսնէիք
 Խաղաղ օրով, երբ քաղցրադէմ
 Բռնած կիթառն գեղեցիկ,
 Փափուկ մատներն արծաթեւար
 Նուագարանին դիպչելով,

Պարտէզի մէջ ծաղկադալար, —
 Դուք կը լսէիք անխռով
 Սիրոյ ձայնը, սիրոյ հոգին,
 Հիւսած սրտի թելերից.
 Սիրել գիտէ Իտալուհին,
 Զրկուած բոլոր աշխարհից:

+

Շուրջ ճակատով շուշանագեղ
 Ծածանվում են թուխ մազեր,
 Սև սաթի պէս յոնքեր շքեղ,
 Վառ աստղի ջուխտ աչեր:

49.

ԱՂԲԱՏ ԿԻՆ

(Գաղիերէնից)

Յուրտը փչեց, ձմեռ սաստիկ,
 Զիւնը ծածկեց գետինը,
 Ամենայն մարդ մտաւ իւր տուն,
 Պատսպարվիլ ցրտիցը:

Ժամի դռնում դողդողալով
 Կանգնած է մի աղքատ կին.
 Նորա հանդերձը պատառ-պատառ,
 Զուռնի շապիկ իւր հագին.
 Անհամարձակ նա իւր ձեռքը
 Պարզում է անցկացողին—
 «Ողորմութիւն արէք, պարոն,
 Անտուհ, անտէր աղքատին»:

Ձեզ, սիրելիք, ասեմ ով էր
 Այս խղճալի աղքատը,—
 Այն ցրտումը, ոտաբոբիկ
 Կանգնած, ժամի դռնումը.
 Շատ ժամանակ դեռ չէ անցել,
 Երբ նա փառքով և պատուով
 Ման էր գալիս փողոցներում
 Իւր սեպհական կառքերով.
 Այժմ, վախով նա իւր ձեռքը
 Պարզում է անցկացողին—
 «Ողորմութիւն արէք, պարոն,
 Անտուհ, անտէր աղքատին»:

Մինչ թատրոնում յայտնվում էր,
 Մինչ խաղում էր հանդիսում,
 Դղրդում էր թատրոնը,

Նա դափնիք շատ էր հնձում.
 Ժողովուրդը հաւաքվում էր
 Մօտ թատրոնի պատշգամբին,—
 Ձէր կշտանում նայել նորա
 Քնքոյշ չքնաղ երեսին.
 Այժմ նորան չեն ճանաչում,
 Մոռացել են բնաւին—
 «Ողորմութիւն արէք, պարոն,
 Անտուհ, անտէր աղքատին»:

Ամենայն օր նորա դռնում
 Կանգնած էին շատ կառքեր,
 Միշտ հացկերոյթ, ընթրիք, գինի,
 Նուազարան ու տաղեր.
 Ամենայն ոք ցանկանում էր
 Լինել նորան բարեկամ,
 Ամենայն ժամ նորա բաց էր
 Շուայլ քսակը մեծատան.
 Այժմ զրկված ամեն բանից,
 Զուռնի անգամ հացի գին—
 «Ողորմութիւն արէք, պարոն,
 Անտուհ, անտէր աղքատին»:

Ամենայն օր իւր մարմինը
 Անուշահոտ ջրերով

Լուանում էր մազը սանրում
 Կրիայի սանրով.
 Նա հագնում էր բեհեզ, կերպաս,
 Դիպակ, թաւիշ թանգագին.
 Նա չը գիտէր թնչ ասել է
 Արծաթի կարօտութիւն.
 Այժմ անլուալ, մազերն արձակ,
 Չունի հագուստ թէև հին —
 «Ողորմութիւն արէք, պարոն,
 Անտուն, անտէր աղքատին»։

Նորա շքեղ ննջարանում
 Բնակվում էր Աստղիկը.
 Նորա որդին փալփալում էր,
 Նորան ամբողջ գիշերը...
 Ախտաբորբոք երիտասարդք
 Իւրեանց անձը երջանիկ
 Կը հաշուէին, թէ լինէին
 Նորա ձեռքում խաղալիք...
 Այժմ փողոցում քնում է նա
 Խօնաւ պատերի տակին —
 «Ողորմութիւն արէք, պարոն,
 Անտուն, անտէր աղքատին»։

Ժամի դռնում նա կանգնած է,
 Աչքերը կոր, վիզը ճուկ.
 Նորա նախկին բարեկամքը
 Չեն ասում նորան՝ «խղճուկ,
 Ե՛կ դու մեր մօտ, մենք կ'ամօքենք
 Քո վիճակի դառնութիւն,
 Կը թուլացնենք ճակատագրիդ
 Խիստ հարուածի սաստկութիւն»։
 Նա տանում է տառապելով
 Այս ոսկալի կշտերին —
 «Ողորմութիւն արէք, պարոն,
 Անտուն, անտէր աղքատին»։

50.

Ա Ն Տ Օ Ն

Մէկ հայ մարդ ունէր գեղեցիկ մի կին,
 Ասացին մէկ օր նոքա մէկ մէկին.
 «Թէ որ Աստուծով մենք որդի ծնենք,
 Խնչ անուն դրնենք, տօնը երբ կատարենք»։
 Կինը ասաց. «Յարութիւն դրնենք,
 Հօրըս տօնի հետ Ձատկին կը տօնենք»։

—Ձէ, ասաց մարդը, Կարապետ կոչենք,
Յովհաննէս Մկրտչի անունը լիշենք:

Մէկ տարի անցաւ, կինն որդի ծնեց,
Հօրը անունով Յարութիւն անուանեց.
Տղան շուտ մեռաւ, նորից տղայ բերեց,
Եւ մարդու կամքով Կարապետ կոչեց:

Սա էլ շատ շուտով աշխարհըս թողաւ,
Հօրն ու մօր սիրտը կրտոր-կրտոր արաւ.
Մի քանի որդիք էլի ծննեցին,
Բայց մինը միւսից յետ մեռան, գնացին:

Այս կերպով սոքա վեց եօթը տարի
Մնացին երկուսը անտոհմ, անորդի.
Շատ մատաղ արին, շատ ուխտ կապեցին
Ու տարուայ պասերը բոլոր պահեցին:

Մի օր էլ ասաց մարդը իր կրնոջ.
«Գուցէ Տէր Աստուած կու պահէ ամբողջ,
Թէ որ մեզ երկինք էլ մի որդի տայ՝
Այնպէս անուն տանք, որ տօն չ'ունենայ»:

Տարին չէր անցել՝ կինն որդի ծրնաւ,
Ոչ մի սուրբ մարդու անուն չի ստացաւ.
Տօն չ'ունենալով՝ Անտօն կոչուեցաւ:
Անտօն անունը ո՞ր ազգից ելաւ:

Ք. Պատկանեան

51.

Շ Ռ Ա Յ Լ Ո Ի Թ Ի Ի Ն

(Թիֆլիսեցու գանդապներ)

Մէկը, տեհար—շլեապայով,
Քաշած ձեռին շան կաշին,
Շուշի կտորն աչքերին—
Լուս ընկաւ քո առաջին:

Էսէնց է, մօդա է, մօդա է,
մօդա է:

Պետերբուրքումը միթօմ,
Աւարտել է իր ուսում,
Փիլիսօփայ է, կօսես,
Խուր տրկէմէն է խօսում:
Էսէնց է, մօդա է և այլն:

Մի ձեռը նա, փրքվելով,
Ունի շալվարի ջիբում,
Կոտրատվելով՝ միւս ձեռով
Իւղած մազերն է քօքում:

Էսէնց է, մօդա է և այլն:
Ու բերնումը ծխելով
Սատանայի փուրվարը,

Մէջքը կոտրած կառւի պէս,
Երբ չափում են բուլվարը:

Էսէնց է, մօղա է և այլն:

Մէկը, տէ՛հնում իս, պոչը
Թրև է տալիս զայրաթով,

Կօսես, քուչէք աւելը

Վիր է կալի փողբաթով:

Էսէնց է, մօղա է և այլն:

Մէկէլն, օջիւարի նման,

Էդնէն կապիլ է դըմակ,

Կօսես, զարբնի մինձ փուքսով

Փըջած ըլնի իր քամակ:

Էսէնց է, մօղա է և այլն:

Ա՛խ, էն դամբի պէս գործած

Էրէսների էն քուղը,

Սապուկների ճռճուցը՝

Քանդում են իմ ըղուղը...

Էսէնց է, մօղա է և այլն:

Զիմ կանացի, հախ Սստծու,

Բարկուլթիւնն իմ սանձել,

Սկսում եմ վա՛յ տալով՝

Մեր կնանիքն անիծել...

Էսէնց է, մօղա է և այլն:

Էդ անիծուած չար մօղան

Էլ չէ տեւում մէ տարի,

Գէլաքնուրի ծախողն

Էնքան չ'ունի մուշտարի:

Էսէնց է, մօղա է և այլն:

Յ. Մելիք-Յակոբեան

52.

Ե Ր Գ, Ս Է Ր Ե Ի Գ Ի Ն Ի

Ուրախ լինինք, եղբարք, քանի որ կըտ-
րիճ ենք,

Թէ չէ՝ շուտով կանցնի մեր մանկութիւնը

Կու գայ մեզ կու կոխէ ծերութեան ցաւը,

Ապա թնչ պիտ անենք մենք այն ատենը:

Արտորանք երգելու՝ քանի որ շունչ
ունինք,

Թէ չէ՝ գարնան ծաղկի պէս շուտ կու թա-
ռամինք.

Ափսոս է, ափսոս է մեր ոյժն ու սիրտը,

Յաւ կը լինի մեր սրտին անցած օրերըս:

Ե՛կ սիրենք, եկ սիրենք, եղբարք, մէկ-
զմէկու,

Մեր մէջից դէն ձըգենք չար բամբասանքը.

Բաց սիրտով, պարզ աչքով մէկ-մէկու նայինք,
Թող սիրով անցկացնենք մեր մանուկ կեանքը:
Եղբարք՝ խմենք զինին Հայ ազգի կենացը,
Որ ամուր պահպանէ իւր սուրբ հաւատը,
Քաջ սրտով, վառ սիրով սիրէ իւր հաւատը.
Ուրեմն դարձրկենք մենք մեր գաւաթը:

53.

Խնդրեմ, վեր կացէք,
Եղբարք անգին,
Դաս դաս կանգնեցէք
Ուրախագին:
Ահա բաժակներ
Ոսկեզօծած
Առէք, ընկերներ,
Իմ զուարթացած:
Ահա խնդութեան
Եւ զինիններ,
Դոյն զոյն զանազան
Շամպայն, Մադէո:
Ահա Կախելթին
Կովկասեան մեր,

Ահա թանգագին
Խերէս, Սոտերն:
Առէք բաժակներ
Ուրախալի,
Լցնենք ՚ի նըւէր
Մեր Հայ ազգի:
Կեցցէ՛ն, երգեցէք,
Հայ ազգիկներն,
Կեցցէ՛ն, հնչեցէք,
Հայ զաւակներն:
Լցրէք, Կոնծեցէք
Դարձեալ, կրկին:
Եւ մի խնայէք
Պաշտովոյ փողին:
Խմեցէք խնդագին
Սիրոյ համար,
Սէրն է ձեր հոգին,
Ձեր բաղձն պայծառ:
Երգած է վաղուց.
Կեսնք մեր կարճ է,
Այսօր կանք — էգուց
Կը մեռնենք գուցէ:
Այսօր կենդանի —
Էգուց գետնում,

Անեղանելի

Պինդ դադաղում:

Ուրեմն գաւաթներ,

Շրխկացնելով,

Առէք եղբայրներ

Անոյշ պաշով:

Ս. Շահադիւհեան

54.

ՎԱՅՐ ԸՆԿՆՈՂ ԱՍՏՂՆԵՐ

(Թարգմանութիւն)

«Հայրիկ, ասաց դուստրը հօրը,

Կապոյտ երկնքի վերայ

Ո՞րքան աստղեր փայլում են վառ,

Ասես համար, թիւ չը կայ:

«Ասում են, որ ամենայն մարդ

Աստղիկ ունի երկնքում,

Ճշմտիտ է ասան, հայրիկ,

Իմը ո՞րտեղ է փայլում»:

— Այն, դստրիկ, այդ աստղերը

Ունին հաշիւ ու համար,

Եւ մեզանից իւրաքանչիւր

Մի աստղ ունի իւր համար:

«Հայրիկ, տես-տես, աստղը թռաւ

Յետքից պայծառ գիծ թողեց.

Աստղիկն ընկաւ երկնքիցը,

Միւս անգամ այլ չերևեց»:

— Ո՛վ իմ դստրիկ, հանգիստ կացիր,

Դա մեծատան մի աստղ էր,

Որ իւր օրում, իւր կեանքումը

Խիղճ ասածը չը գիտէր:

Աղքատները նորա դռնից

Գիշեր ցերեկ հալածված.

Մի մարդ չը կար նորան ծանօթ,

Որ չը լինէր վշտացած:

«Հայրիկ, տես տես, աստղը թռաւ,

Յետքից պայծառ գիծ թողեց.

Աստղիկն ընկաւ երկնքիցը,

Միւս անգամ այլ չերևեց»:

— Ո՛վ իմ զաւակ, մի վրդովվիր,

Դա աղջկայ մի աստղ էր,

Որ իւր հօր ու մօր խօսքը

Իւր կեանքումը յարգած չէր:

Նա փախել էր իւրեանց տնից...

Մուր էր քսել տան վերայ...

Իւր ծնողքը լացուցել էր,

Ինչքը վատնել անխնայ:

«Հայրիկ, գարձեալ թռաւ մի աստղ,
Վայր ընկաւ նա երկնքից.

Հայրիկ, ովի աստղն էր արդեօք,

Որ զրկուեցաւ իւր տեղից»:

—Ո՛հ, դստրիկս, Հանգիստ կացիր,

Կեղծաւորի դա աստղ էր,

Որ իւր օրում ուղիղ մի խօսք

Մարդու երբէք ասած չէր:

Փարիսական իւր ձևերով

Աշխարհ խաբեց, զարմացուց,

Այդ պատճառով Աստուած նորա

Աստղի լոյսը խաւարցուց:

«Հայրիկ, տես տես, մի աստղ թռաւ,

Եւ գիծ անգամ չը թողեց,

Աստղիկն ընկաւ երկնքիցը,

Միւս անգամ այլ չերևեց»:

— Ո՛հ, սիրական, խաղաղ մնա՛,

Բռնակալի դա աստղ էր,

Որ աշխարհը իւրեան գերի

Ծնած օրից կարծել էր:

Շատ հալածանք, շատ նեղութիւն

Պատճառեց նա իւր կեանքում.

Շատ տուն քանդեց, շատ մարդ զրկեց,

Գութ չունեցաւ իւր սրտում:

«Ապա այն ինչ աստղ է, Հայրիկ,

Որ այնպէս պարզ վառվում է,

Նորա մաքուր պայծառ լոյսը

Չորս կողմը բոկ բռնել է»:

— Ո՛հ իմ դստրիկ, աղօթք արա

Դա ծերունու մի աստղ է,

Որ իւր կեանքում ոչինչ մարդու

Ոչինչ վնաս տուած չէ:

Այն լուսաւոր բակն է նորա

Առաքինի գործքերը.

Աղօթք արա, որ երկարվին

Նորա կեանքի թելերը:

Շատ օր անցաւ, երկնքիցը

Մի այլ վառ աստղ պակասեց.

Ովի աստղիկն էր որ ընկաւ,

Բան հարցանող չերևեց:

Մինչ դեռ լուսինը արծաթափայլ

Լոյս էր տալիս գիշերին,

Խորհրդաւոր մինչ տիրել էր

Անվրդով խոր լուութիւն:

Մի սրտաթափ, մազերն արձակ

Վազեց աղջիկ սգաւոր,

Դէպ 'ի գեղի գերեզմանքը,

Ծունկ չօքեց մի շիրմի մօտ:

«Հայրիկ, աստղիկդ չէ փայլում,
Դու յաւիտեան քնեցիր.
Առ ինձ քո մօտ, քո ծոց, քո գիրկ,
Ինչու անտէր թողեցիր:

«Իմ աստղիկն ասանոյնպէս,
Որ չը փայլի՝ հերիք է,
Այս աշխարհը ինձ առանց քեզ,
Մութն ու խաւար մի բանտ է»:

Մի մարդ չը կար, որ նկատէր,
Որ հետեւեալ գիշերին
Պակասեցաւ երկնքիցը

Մի պայծառ աստղ խնդագին:
Երրորդ օրը շատ սգաւորք
Փորեցին մի գերեզման,

Ուր թաղեցաւ իւր հօր մօտին
Մարմինը խեղճ աղջրկան:

«Հայրիկ, տես տես, աստղը թռաւ,
Յետքից պայծառ դիժ թողեց,
Աստղիկն ընկաւ երկնքիցը
Միւս անգամ այլ չերևեց...»:

Կոմս Էմմանուէլ (Մ. Նալբանդեան)

55.

ԱՌԱՐԾՅԱՆ ՆԵՐՈՒՆԿԱՆՈՑ

Այ մարդ՝ այսօր շատ քրնեցար նընջեցիր,
Առաւօտեան հով ժամանակն անցուցիր.
Արեգակը ծովի ծայրէն ծագեցաւ,
Ջերմութիւնը ձորն ու դաշտը փռուեցաւ:
Ընկերները վաղ արտերը գընացին,
Ցորեն գարին գերանդիով հնձեցին,
Խուրճ կապեցին, բարդ բարդեցին դաշտումը,
Նըստան հանգչիլ կաղնիներու հովումը:
Այ մարդ՝ վեր կաց սառը ջրով լուացվիր,
Գօտիդ կապէ գերանդիդ առ դաշտ հասիր,
Քանի հով է՝ հունձըդ արան արտումըդ,
Հունձըդ հընձէ՝ մի ծուլանար գործումըդ:
Հունձըդ կապէ, բարդըդ բարդէ, տուն արի,
Հանգըստացիր, երբ քո հունձըդ կատարի.
Բեր գերանդիդ, կախէ պատին քո տանը,
Ես իրիկուան կը պատրաստեմ սեղանը:
Այ մարդ՝ հերիք ինչ-որ այսօր քրնեցար,
Աչքըդ մէկ բաց, տես թէ որչափ ուշացար.
Մեր գըրացին վաղ անցկացաւ կամուրջէն,
Վաղ լըռել է մեր գըրգիրը ձայնէն:

Ի՞նչ ես պառկել, ի՞նչ ես քննել, սիրական.
 Արեգական շողը հասաւ մեր դռրան.
 Մի ծուլանար, ժամանակըդ խնայէ,
 Այն պիտի մեզ բոլոր ձմեռը կերակրէ:

Ռ. Տ.-Գ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

56.

ԵՂԲԱՅՐ ԵՆՔ ՄԵՆՔ

Ի բիւր ձայնից բնութեան շքեղ,
 Թէ երբ թռչին սիրողաբար,
 Մատուց կուսին ամենազեղ,
 Թէ որ զարնեն փափուկ քրնար:
 Զունին ձայն մի այնքան սիրուն,
 Քան զանձկալի եղբայր անուն:
 Տաւր ինձ քո ձեռքըդ եղբայր ենք մեք,
 Որ մըըրկաւ էինք զատուած.
 Բաղդին ամեն ոխ չարանենդ,
 Ի մի համբոյր ցրուին 'ի բաց:
 Ընդ աստեղօք թնչ կայ սիրուն,
 Քան զանձկալի եղբայր անուն:

Երբ ալեւոր մայր Հայաստան,
 Տեսնէ գորդիս իւր քովէ քով,
 Սրտին խորունկ վէրքըն դաժան,
 Քաղցր արտասուաց բուժին ցօղով:
 Ընդ աստեղօք թնչ կայ սիրուն,
 Քան զանձկալի եղբայր անուն:
 Մէկ տեղ լացինք մենք 'ի հընում,
 Եկէք դարձեալ յար անբաժան.
 Խառնենք զարտօսը և ըզխնդում,
 Որ բազմաճնունդ ըլլայ մեր ջան:
 Ընդ աստեղօք թնչ կայ սիրուն,
 Քան զանձկալի եղբայր անուն:
 Մէկ տեղ հոգնենք, մէկ տեղ ցանենք,
 Մէկ տեղ թափին մեր քրտինքներ,
 Ըզ հունձք բարեաց յերկինս հանենք,
 Որ կեանք առնուն Հայոց դաշտեր:
 Ընդ աստեղօք թնչ կայ սիրուն,
 Քան զանձկալի եղբայր անուն:
 Մ. Պէշեկթաշլեան

57.

ԱՆՁՈՒԿԻ ՀԱՅՐԵՆԵԱՅ

Հայաստան, քաղցր իմ Հայաստան,
 Ոգիքս յանունդ հալեցան.
 Մինչև ցերբ ես ի քէն պանդուխտ,
 Ոգւոյս իմ էրբ լըցցի ուխտ:
 Արդեօք աչքս անձկալից
 Երբեմն ըզքեզ տեսցեն,
 Աչքս այս արտասուալից
 Երբէք դադարեացեն:
 Շուրթն իմ ի հողդ կենսաւոր
 Տացէ՛ զհամբոյրն ուխտաւոր.
 Արդեօք գլուխս վշտակո՞ծ
 Հանգիցէ՛ քոյդ ի ծոց:
 Հայաստան, սէր իմ Հայաստան,
 Ոգիքս ի տենչդ հալեցան.
 Մինչև ցերբ ես ի քէն պանդուխտ,
 Սըրտիս իմ էրբ լըցցի ուխտ:
 —
 Հայաստան, իմ պերճ Հայաստան,
 Ո՛վ երկիր նուիրական,

հընոց կենաց և որրան,
 Հեշտարար երկնից խորան:
 Ի քո սուրբ հովանիս
 Ո՛ր գնըժդեհ տանէր զիս.
 Ո՛ր ՚ի ստուերսդ երազմոյն
 Ըզնախնեացս հեղցէ քուն:
 Անմահութեանց վեհաբուն,
 Ծըծել անդ զօդ և զաւիւն,
 Եւ զաստեացրս վըշտաց
 Գտանել կատարած:
 Հայաստան, քաղցր իմ Հայաստան,
 Ոգիքս յանունդ հալեցան,
 Մինչև ցերբ ես ՚ի քէն պանդուխտ,
 Սըրտիս իմ էրբ լըցցի ուխտ:

58.

Ա.Ռ.Օ.Ր.Ե.Ա.Յ Ա.Շ.Խ.Ա.Ր.Հ

Ի՞նչ ես գոռում, ինչ խնդրում,
 Դու անհանգիստ հեղինակ,
 Մեզ խաղալիք շինեցիր,
 Ողջ աշխարհի խայտառակ:
 Լաց ես լինում, հառաչում,
 Գանգատդ անգամ յիմար է,
 Թէ աշխարհն իւր գործերով,
 Բոլորովին փոխվել է:
 Աշխատում ես մի կերպով
 Խաղաղութիւն վրդովել,
 Խլել մեր հանգիստ քունը,
 Սրտերիս մէջ դող ձգել:
 Ձենք կամենում լսել քեզ,
 Թող մեր ճաշն ուտենք հանգիստ,
 Յետոյ խաղաղ քուն լինենք...
 Հեռի դնա մեզանից:
 Մի գոռար, մի որոտար,
 Մարդ եղիր և դու մեզ պէս.
 Վերացական խօսքերով
 Մի գար միւս անգամ հանդէս:

Մենք առօրեայ բաների
 Ծառայում ենք անդադար,
 Դու ինչե՞ր ես մտածում,
 Դրական է այս մեր դար:
 Քո բարձր ճշմարտութեան
 ձառագայթները փայլուն,
 Ձեն տանելի մեր աչքին,
 Ատելի են մեր հոգուն:
 ձանաչում ենք հաւատում,
 Բայց չը կամինք խոստովանել.
 Պատճառ, նոքա շփոթում են
 Մեր երջանիկ կեանքի թել:
 Մենք կամինք կեանք վայել.
 Ուրեմն ինչ հարկի համար,
 Մեզ պիտոյ էր ծառայել
 ձշմարտութեան անպատճառ:
 Մինչդեռ և առանց նորան,
 Մինչ լոկ սուտի շնորքով
 Այս աշխարհի բարութեան
 Մի մասը վայելելով,
 Կարելի է Աստուծոյ
 Փառաւորել անունը.
 Եւ չը թուլանալու համար,
 Եւ մարմինը պահելու,

Երբեմն մի փոքր զրկել...
Երբեմն մի վաքր գողանալ...:

Ձը խռովելով մեր խիղճը,
Չաղմկելով մեր հոգին,
Տո՛ւր մեզ տաղեր, վէպ, առակ,
Հաջոյացիր մեր սրտին:
Թող դատարկ բաներ լինեն,
Մարդու վէրք տալ չունենան,
Թեթև ու ծիծաղաշարժ,
Փորերս փոյթ չէ, թող շարժ գան:
Հանգստութեան միջոցին,
Մարսողութեան լաւ ժամին,
Դու դատաւոր մի նստիր
Խրատներով մեր գլխին:
Վշտաբեր ակնարկութիւնք,
Հեռի՛, նեղի՛ գաղափարք.
Մի լիներ դահիճ մոլութեան,
Որ չը լինիս դահիճ մարդերին:

Մ. Նալբանդեանց

59.

ԱՌ ՄԱՅՐԵՆԻ ԼԵՂՈՒ

Ով մեծասքանչ դու լեզու,
Ով հեշտ բարբառ մայրական,
Փափկահնչիւն բառերուդ
Նման արդեօք այլ տեղ կան:
Դու որ նախ ինձ հնչեցիր,
Նախ սիրոյ, ո՛հ, հեշտ խօսքեր,
Այն նախ զքեզ թոթովելս
Դեռ իմ մտքէն չէ ելեր:
Իմ մայրենի քաղցր լեզու՝
Կեանք անսասան, կեանք յաւէտ,
Կեանք միշտ լեզուտ հայկարժան,
Կեանք ծաղկալից ծաղկաւետ:
Ի՞նչ դառն վիշտ է սրտիս,
Երբ օտար տեղ ու լեզու
Բռնի իրեն զիս քաշէ,
Սրտէս արիւն կը հեղու.
Ո՛հ, զայն օտարն ես սիրել
Բնաւ չեմ կարող 'ի սրտէ,
Ձէ այն, չէ քաղցր իմ լեզու,
Որ սիրով զիս կ'ողջունէ:

Իմ մայրենի քաղցր լեզու՝
 Կեանք անսասան, կեաց յաւէտ,
 Կեաց միշտ լեզուդ հայկարժան,
 Կեաց ծաղկալից ծաղկաւէտ:

Լեզու համակ սիրաշարժ,
 Քանի ճոխ պերճ ու պայծառ,
 Մինչ կը հնչես դուն քեզի,
 Սրտերն ամեն գողացար.
 Հնչէ, հնչէ յաւիտեան
 Վեհ՝ գիւցազանց պերճ երգ դու.
 Թոթուէ փռչիդ խոր մութէն,
 Ե՛լ երևան պերճ երգ դու:

Իմ հայրենի քաղցր լեզու
 Կեանք անսասան, կեաց յաւէտ,
 Կեաց միշտ լեզուդ հայկարժան,
 Կեաց ծաղկալից ծաղկաւէտ:

Յաւերժական սուրբ զրոյց մէջ՝
 Կեաց միշտ նորէն ու նորէն,
 Կշռեալ անուշ քու տողերդ
 Թող ամեն սիրտ արծարծեն:
 Ենորհ ունել Արարչէն,
 Կամ պէտք ըլլալ աղօթել,
 Երթունքս սրտէ բորբոքած
 Կաղաղակէ անարգել:

Իմ մայրենի քաղցր լեզու՝
 Կեանք անսասան, կեաց յաւէտ,
 Կեաց միշտ լեզուդ հայկարժան,
 Կեաց ծաղկալիս ծաղկաւէտ:

60.

Ննջէ ով իմ սիրուն մանկիկ,
 Ննջէ տեսնեմ դու մըշիկ,
 Անոյշ-անոյշ ննջէ հանդարտ,
 Հանգստացիր քիչ մը արդ:
 Օր օր ասեմ քեզ որդիկիս,
 Ետ օր տեսնես, շատ ապրիս,
 Օր օր ասեմ ազուոր տըղուս,
 Օրեր մաղթեմ սիրելւոյս.
 Օր օր ասեմ մատաղ մանկանս,
 Որ ունենայ երկար կեանս:
 Ա՛խ, երբ զքեզ պիտի տեսնեմ,
 Զերդ մէկ տըղիկ գեղադէմ
 Գնալ, վազել ու վազվըզել
 Հասակակցացդ հետ խօսել:
 Օր օր օր օր տատրակիս,
 Օր օր ասեմ զաւակիս,

Օր օր օր իմ գեղեցկիդ,
 Քեզ, իմ հոգւոյդ հատորիդ.
 Օրեր մաղթեմ բալոր սրտով,
 Օր օր ասեմ խնդումով:
 Եւ երբ լինիս հսկայ կտրիճ
 Լինելու զիս խարդախիչ
 Հայոց ազգին, մեր Հայրենեաց
 Հայերու բարեկամաց:
 Օրեր, օրեր քեզ շատ մաղթեմ
 Որ՝ Հայրենիք մեր վսեմ,
 Գեղածիծաղ ժպիտներովն
 Եւ իւր օրհնեալ անունով,
 Արծարծէ յիս բարի յոյսեր,
 Ու ՚ի քեզ էլ լաւ զգացումներ:
 Բայց նաեւ պէտք է հեռանաւ
 Այն գործերէն ազգավնաս,
 Որք ազգամուլ հռչակեն զմարդ.
 Գան ազդասէր ոք հանդարտ:
 Օրեր մաղթեմ քեզ յԱստուծոյ,
 Քեզ, իմ որդւոյդ միայնոյ,
 Խարտեաշտդեղ գանգրամազիդ,
 Հրեշտականման իմ զաւակիդ.
 Օր օր օր օր օր օր օր օր,
 Յայս զօրէ ձայն քո մօր:

Ապա թէ որ այսց հակառակ
 Շարժիս ՚ի գորսըդ, որդեակ,
 Գիտնաս որ ես էլ մայրըդ չեմ,
 Եւ օրհնելու տեղ, կանիճեմ:
 Օր օր օր հարազատիդ,
 Օրեր մաղթեմ միածնիդ,
 Կը պաղատիմ ես Տիրոջմէն,
 Որ այս մտածմունքս փուճն ելլեն,
 Եւ քեզ սիրոյդ զօր ես ծնայ,
 Պահապան ինքը կենայ:
 Միթէ այն օրն տեսնեմ պիտի,
 Որ ծերութիւնըս քեւ սփոփի.
 Եւ երբ աղէկ մը ծերանամ,
 Ըզքեզ նեցուկ ունենամ:
 Օր օր ասեմ, օր օր օր օր,
 Որ շնորհէ Հայրն երկնաւոր.
 Օրեր մաղթեմ, որ շատնայ օրդ,
 Յետոյ նեցուկ լինիս մօրդ,
 Որ այն օրեր շատ շատ օր, օր,
 Մաղթեմ քեզի բոլոր օր:

Ա. Գնունի

61.

ԵՐԳ ԶԱՅՐԵՆԻ

Մինչդեռ յուսով խայտալ բնութիւն
Յետ դառնաշունչ ձմեռանոյն,
Եւ 'ի գաւառն իմ հայրենի
Գեղածիծաղ դառնայ գարուն:
Մինչ բոյր 'ի բոյր փթթին ծաղկունք
Եւ ճռուողին նորեկ ծիծուկնք,
'ի քեզ ես դարձ առնեմ յայնժամ
Ո՛վ ցանկալիդ իմ Հայաստան:
Ոչ Հելուետեան ինձ դաշտավայրք,
Եւ կամ զուարթ մարգագետինք,
Ոչ քան զքեզ չքնադագեղ
Իտալական պայծառ երկինք:
Հեռի 'ի քէն պանդուխտ գոլով,
Քոյովդ յար տապիմ անձկով,
'ի խանձարուրդ իմոց կենաց,
Ո՛վ Հայաստան, առնեմ քեզ դարձ:
Գայցեն աւուրք, ուր մանկութեան
Անկցի տիոցս իմ գեղ դալար,
Եւ լինէն խոյս տացեն վայելք
Կենաց թեթեւ 'ի գարշաբար:

Ուր հէգ մուսայս մատն 'ի լերեր
Մոռանայցէ երգել զսէր,
Զնինջ 'ի ծոցդ առնեմ յայնժամ
Ո՛վ ցանկալիդ իմ Հայաստան:

Մկրտիչ Պէշիբեյաշեան

62.

ԻՄ ՍՈՒՆԿԻՆ

Սոխակ՝ ինչու դադրեցար քու անուշ երգն
երգելից,
Որ քամում էր արտասունք շատ իմ էրված
աչերից,
Մթորդ է, երբ ծագում էր արշալոյսը
գարնանային,
Քանի՞ դու միտս բերիր իմ առարկան
ցանկալին...
Այն լիշատակն անոյշ էր, ինչպէս երազ
վաղանցիկ,
Որ գէթ վայրկեան թշուառին դարձնում էր
նա երջանիկ.

Համակ աշխարհ մոռացած, ունիս քու ձե-
նիդ յառած,
Մըտքով թռչում էի ես իմ հայրենին կա-
րօտած...
Գիտեմ, դու էլ ես կարօտ մշտադարուն այն
դրախտին,
Որից հեռու մեզ չիկայ քաղցր ժըպիտ
մեր բաղդին.
Ո՞վ կուտայ ինձ թե թռչնի, որ խոյանան
սլանան,
Օգն ու ամպերը ճեղքեն ու տանեն ինձ
Հայաստան:
Թէ նրա օդը շնչեմ, այն կենսատու սուրբ
օդից—
Գիտեմ, փրկուելու եմ անբուժելի իմ
ցաւից...
Գարուն անցաւ, ան սոխակ, խօսուն լեզուիդ
կապ դըրաւ,
Ու խեղճ վարդի թերթիկի հետ շարականդ
էլ տարաւ:
Յը բանամ դուռը վանդակիդ, ազատութիւն
քեզ կուտամ.
Բայց աղաչում եմ քեզի, թուիր դէպի
Հայաստան.

Վարդ ես ուզում՝ այնտեղ է, անամպ եր-
կինք, մեղմ հովեր,
Ճաճանչափայլ արեգակ, կարկաչասահ
առուներ:

Ռ. Տ.-Գ. Պատկանեան

63.

Վ Ե Ր Ջ Ի Ն Վ Ե Ր Դ

(Գերմաներէնից)

Վերջին վարդ, վերջին վարդ,
Սիրեկանիս վերջին զարդ.
Նա քեզ հանեց իւր կրծքից, } Կրկնէ:
Ինձ պարգևեց վերջին վարդ:

Մանկութեան ոսկի ժամերն
Անցել են անդառնալի,
Կորած սիրոյս յիշատակ } Կրկնէ:
Դու ես միայն, վերջին վարդ:

Գարնան օրերն անցել են,
Տօթ ամառն է ինձ էրում,

Միշտ սպասում եմ քո տեսքին }
Դու ամառուայ, վերջին վարդ: } Կրկնէ:

Երջանիկ կեանքիս օրերը
Ցաւ են դառել առաջիս,
Ուրիշ օրեր, ուրիշ կեանք }
Միտքըս բերիւր, վերջին վարդ: } Կրկնէ:

Շատ չի տեիլ՝ կը բացուի
Առաջիս սև գերեզման,
Էս աշխարհից միայն քեզ }
Հետըս կ'առնում, վերջին վարդ: } Կրկնէ:

Ք. Տ.-Գ. Պատկանեան



64.

ԲԱՂԳԱՑՈՒԹԻՒՆ

Անգործ, պարապ ման եկողը
Անմիտ խելագար չէ՝ թնչ է.
Միշտ մոլութեան հետևողը
Բնութեամբ տկար չէ՝ թնչ է:
Օրէնքներէն պատառուածը,
Իրան խօսքով յամառուածը,
Անթեան թափառուածը
Բուին հաւասար չէ՝ թնչ է:
Գլխին առնողը մութ քօղը,
Չը տեսնող բարեբեր ցօղը,
Անկիրթ, անուսում մեծցողը
Անտաշ կոպիտ քար չէ՝ թնչ է:
Իրան արդար մարդ դասողը,
Աստիճանի սպասողը,
Իսկ ճշմարտին սուտ ասողը
Միշտ հոգւով խաւար չէ՝ թնչ է:
Բնական բարքից ելնողը,
Սրբազան վարքից ելնողը,
Մարդկութեան շարքից ելնողը
Անասուն լիմար չէ՝ թնչ է:

Զը պահող իր բերնի սանձը,
 Ծոռ մտքով նայող կանանցը,
 Միշտ պղծութիւն սիրող անձը
 Գազանից վատթար չէ՝ թնչ է:
 Կենդանութեան կաթն ու կողին
 Թողած՝ սիրէ աննիւթ շոգին,
 Պատուիրազանցի հոգին
 Բելիարին աւար չէ՝ թնչ է:
 Անունը թանգ չունեցողին,
 Բարութեան ջանք չունեցողին,
 Երջանիկ կեանք չունեցողին
 Աշխարհը օտար չէ՝ թնչ է:
 Գործը շատ ցրիւ է թուլին,
 Հաստազուլիս մտքով գոլլին,
 Տեղից չը շարժուող ծոյլին
 Դիւրինը դժուար չէ՝ թնչ է:
 Ո՛ւմ տայ իր ընծայ, նուէրը,
 Ո՛ւմով աւելանայ սէրը,
 Անզաւակ զրամատէրը
 Իսկ անմխիթար չէ՝ թնչ է:
 Զի սիրուիր թառամած վարդը,
 Քամուն ճաշակ կը լինի յարդը,
 Փտած ծառի նման մարդը
 Կրակի պաշար չէ՝ թնչ է:

Սառել է սրտի եռանդը,
 Չունի ողջութեան աւանդը,
 Անբժշկելի հիւանդը
 Մեռնելուն յօժար չէ՝ թնչ է:
 Յուսահատն է արմատախիլ,
 Նորա բոյսը չունի նոր ծիլ,
 Անյուսակի բանը գտնիլ
 Բերելը անկար չէ՝ թնչ է:
 Բարկացող յուսահատներուն,
 Վէրքերը անփարատներուն,
 Երկմիտ թերահաւատներուն
 Խեղբերն անկատար չէ՝ թնչ է:
 Չունեցող վարժապետ ազգը՝
 Սէր չունի իրար հետ ազգը,
 Անօգնական, անպետ ազգը
 Անհովիւ ոչխար չէ՝ թնչ է:
 Զիւնի, հանճար չը գիտցող,
 Ապրելու հնար չը գիտցող,
 Պանդուխտ ճանապարհ չը գիտցող
 Զինուորը շուար չէ՝ թնչ է:

Աշըղ Ջիան

65.

Վարդը բացուել ա ծաղկոցին,
Ամպի ցօղը շողայ ծոցին.

Այ իմ վարդին, կարմիր վարդին,
Դաստայ զրախտին (2):

Թերթիկները դուզ փըռել ա,
Նախշուն գըլուխը ծըռել ա.

Այ իմ վարդին, և այլն:
Ձեռ համբերիլ, վարդ մայիսին,
Դուռս ես եկել մարտի ամսին.

Այ իմ վարդին, և այլն:
Կու թառամիս, կու չորանաս,
Մինչ մայիս թէ չի դիմանաս.

Այ իմ վարդին, և այլն:
Դաժան քամուն չես համբերի,
Ձաղիր ճըճուին կ'ըլես գերի.

Այ իմ վարդին, և այլն:
Ձեռ տեսնելու թիթեռնակին,
Ոչ աւետման ծիծեռնակին:

Կու գայ բըլբուլը թեմանէն,
Քեզ կու կանչէ գերեզմանէն:
Կու գանգատէ իր սև բաղդէն,
Թէ ո՞րը մնաց կարմիր վարդէն:

66.

Մ Ի Բ Ո Ւ Ռ Ն Հ Ո Ղ

(Գերմաներէնից)

Մի բուռն հող ինձ կը ծածկէ մի անգամ,
Երբ վաստակած, դէպ ի հանգիստ ես կերթամ.
Այնուհետեւ ցաւից, վշտից ազատված,
Մահու քնով կը ննջեմ ես մեղմ, հանդարտ,
Մինչև կանչէ գերեզմանից Եհովան:

Մի բուռն հող ինձ կը լինի պատուական,
Աւելի քան մի փառահեղ ծանրութիւն,
Ճարտարագործ ձեռքից շինած, քարանիւթ.
Արդէն ցաւին շատ օրերի ճնշեցին
Կեանքս, հոգիս ծանրը-ծանրը բեռներով:

Մի բուռն հող ինձ հերիք է, բաւական,
Գիտեմ, ահա, լինելու եմ ես, անշուշտ,
Որդների ու ճըճիների կերակուր.
Բայց խաղաղ է գերեզմանի խորքումը,
Ցաւն ու վիշտը այնտեղ լուռ է և հանգիստ,
Քունը քաղցը և անխռով հանապազ:

Մի բուռն հող գուցէ ձրգէ իմ վերայ՝
Բարեկամս տըտում դէմքով ու լացով.

Եթէ միայն ունենայի ես մի անձը,
 Որ գալու էր գերեզմանիս տեսութեան.
 Այնուհետեւ կը թեթեանար իմ վերայ,
 Աստծու հողը գերեզմանիս միջումը:

Վ. Սուլթանեան

67.

Ը Ն Կ Ե Ր

Բարի, գեղեցիկ, առաքինի ընկերը մարդուն,
 Փայլեցնում է արևի պէս պատկերը մարդուն.
 Ինչ մարդ ունենայ իւր մօտը հաւատարիմ
 ընկեր՝

Ցերեկի նման անցնում է մութ գիշերը մար-
 դուն:

Կեանքդ նուիրես ընկերի լաւին՝ քիչ է
 դարձեալ,

Այնպէսն է հոգեկան լուսատու լապտերը
 մարդուն.

Ընկեր եմ ասում, Աստուածավախ, ճմարիտ
 ընկեր,

Որ բարձրացնէ աստիճանը միշտ վերը մարդուն:

Թշնամիները իւր վերայ գալած ժամանակը,
 Կտրիչ հարազատ ընկերն է սուսե՛րը մարդուն.
 Ով որ ունենայ մտերիմ ընկեր, Զի՛ւան աշըղ,
 Զի՛ սպիտակիր ամենեւին մէկ հերը մարդուն:

Աշըղ Զիւան

68.

Ա Ն Ո Ւ Ր Զ Ք

Յամսավերջն ապրիլի զպատուհանս բացի,
 Զձիւնաթաղ դաշտարայս ծաղկազանդ տեսի:

Արտասուք եռանդունք զայտս իմ այրեցին,

Զիմ անդարձ գերութիւն յուշ իմ, ո՛հ ածին:
 Լեղուապէս դառնացան վերք վըհատ հոգւոյս,

Թըմրեցան զգայարանքս հատան ելք շնչոյս:

Ափսոս ինձ, ասացի, բիւր անգամ յայն օր,

Շատ անէծք թափեցի՝ ի ծննդեանս վատ օր:

Մաշեշայ, թողնեցայ, մըտտի խոր՝ ի քուն,

Զչարկսկիծ հէգ գերւոյս արկ՝ ի ծով անհուն:

Դըշխոյն մեծ տնմահից ել ինձ յայց տեսլեամբ,

Որպէս թէ՛ ի փոսոյ զիս ելոյծ ձեռամբ:

Սեաւ մահուան դաճաղում:

Սիրական, և այլն:

Ո՛հ, խղճս սիրական...

Տուր ինձ յոյս հարսնական. —

Թո՛ղ կապվենք մի հոգով,

Վայելենք սէր սիրով...

Սիրական, և այլն:

Յ. Դ.

70.

ԵՂԱԾ ԶԵՂԱԾ ՄԵԿ ՀԱՂԻԼ Է

Ծայլ, անսլիտան, անգործ մարդը

Եղած չեղած՝ մէկ հաշիւ է:

Ինչպէս անգոյն, անհոտ վարդը,

Եղած չեղած՝ մէկ հաշիւ է:

Լաւ մարդու ոտացն է կացին,

Թէ որ վատ է իւր գրացին.

Հօրը համար անպէտք որդին,

Եղած չեղած՝ մէկ հաշիւ է:

Ինքն է իւր քսակի գօղը,

Տանը վերայ մաղող հողը:

Շուայլ մարդու համար փողը,

Եղած չեղած՝ մէկ հաշիւ է:

Ներքինին թնչ պէտք է կին,

Շքեղ սեռից չունի բաժին.

Կոյրի համար արև, լուսին,

Եղած չեղած՝ մէկ հաշիւ է:

Անասունին տուր գովասանք,

Նա թնչ գիտէ այդպիսի կեանք.

Անգգամին պատիւ, յարգանք,

Եղած չեղած՝ մէկ հաշիւ է:

Մօտ է այնպիսի կորուստը,

Զորս չափ կտաւ է հագուստը.

Ժլատ, անօգուտ հարուստը,

Եղած չեղած՝ մէկ հաշիւ է:

Կենդանի մարդուն է արժան

Պատիւ, յարգանք, շքանշան.

Մեռած մարդու համար արձան,

Եղած չեղած՝ մէկ հաշիւ է:

Խելօք, հմուտ գիտնականը

Հիմքը ամուր կանէ տանը.

Կիսատ-պուատ շինուած բանը,

Եղած չեղած՝ մէկ հաշիւ է:

Առողջ տղին տուր երիվար,

Որ թռչի, երթայ սարէ սար:

Անոտ մարդուն հարթ ճանապարհ,
Եղած չեղած՝ մէկ հաշիւ է:

Նրանք չունեն շնորք ու շէնք,

Գանգատելն է նոցա օրէնք.

Երկչոտներուն զրահ ու զէնք,

Եղած չեղած՝ մէկ հաշիւ է:

Կտրիճ ազգն է ինքնին հնոց,

Միշտ կարձակէ կրակ ու բոց.

Փախչող զօրքին բերդ ու ամրոց,

Եղած չեղած՝ մէկ հաշիւ է:

Սկիզբն է հարկաւոր ջանք,

Քանի որ հիւանդն ունի կեանք.

Հոգեւարքին դեղ ու դեղրանք,

Եղած չեղած՝ մէկ հաշիւ է:

Խեղճին թնջ օգուտ իշխանը,

Որ չի հասնի նեղութեանը.

Անտարբեր պաղ ազգականը,

Եղած չեղած՝ մէկ հաշիւ է:

Երբ որ տեղը գայ ճշմարիտ,

Հարկաւոր չէ լինել կրկիտ.

Զատկից յետոյ կարմիր հաւկիթ,

Եղած չեղած՝ մէկ հաշիւ է:

Ուրախութեան օրը յատուկ,

Կուրախանան ծեր ու մանուկ.

Հարսանիքից վերջը թմբուկ,

Եղած չեղած՝ մէկ հաշիւ է:

Ջիւան, բարեսիրտն է յարմար,

Լսել սիրով երգ ու քնար.

Ձար ու դաժան մարդոց համար,

Եղած չեղած՝ մէկ հաշիւ է:

Աշըղ Ջիւան

71.

Ե Ր Գ Յ Ա Ղ Թ Ա Կ Ա Ն

Կեցցէ Շապուհ, կեցցէ արքայ,
Փառաց նա միշտ օրեր տեսնայ.

Կեցցէ օրուան այս յաղթութեամբ
Եւ երբ արեւ փայլի անամպ:

Իւր թշնամիք փախչին հապճեպ
Իբրեւ ըզմէգ լուսոյն հանդէպ.

Եւ տարածի իւր զօրութիւն

Յոր վայր վազեն նըշոյլք արփոյն:

Քեզի նման, Մազդեզանց քաջ,

Զեղաւ հզօր ոչ ոք յառաջ,

Եւ ոչ յետոյ իսկ ոչ երբէք,
 Լիցի յԱրիս և ոչ ուրեք:
 Կեցցէ Շտալուհ, կեցցէ արքայ,
 Փառաց նա միշտ օրեր տեսնայ,
 Եւ տիրասէր զօրս իւր՝ ըզՊարս՝
 Իւր հետ տանի փառաց 'ի փառս:

72.

Կ Ի Լ Ի Կ Ի Ա

Երբ որ բացուին դռներն յուսոյ,
 Եւ մեր յերկրէն փախ տայ ձմեռ,
 Զքնաղ յերկինս մերս Արմենիոյ,
 Երբ փայլէ իւր քաղցրիկ օրեր:
 Երբ որ ծիծառն 'ի բոյն դառնայ,
 Երբ որ ծառերն հագնին տերեւ.
 Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
 Աշխարհ որ ինձ ետուր արև:

Տեսի դաշտերն Ոսուրիոյ,
 Լեռ Լիբանան և իւր մայրեր.
 Տեսի զերկիրն Իտալիոյ,
 Վենետիկ և իւր կոնդուներ:

Կղզիք նման չէք մեր Կիպրեայ,
 Եւ ոչ մէկ վայր է արգարև.
 Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
 Աշխարհ որ ինձ ետուր արև:

Հասակ մը կայ մեր կենաց մէջ,
 Ուր ամենայն իղձ կաւարտի.
 Հասակ մը ուր հեգին ի տենչ,
 Յիշատակած իւր կարօտի:
 Յորժամ քնարս իմ ցրտանայ,
 Սիրոյն տալով վերջին բարև.
 Երթամ ննջել լիմ Կիլիկիա,
 Աշխարհ որ ինձ ետուր արև:

73.

Մ Ե Ր Վ Է Ր Ք Ե Ր Ը

Հայը հային կը վնասէ,
 Օտարք երբէք մեղաւոր չեն,
 Հայերու սէրը պակաս է,
 Իրար սիրելու սովոր չեն:
 Հայերը այս բանով վատ են.

Իրարու ծուռ կը նկատեն,
 Մէկ մէկու այնպէս կը ատեն,
 Կարծես իրար հարկաւոր չեն:
 Օտարին կը գովաբանեն,
 Բայց իրար միշտ դաւաճան են.
 Պապերէս մնացած բան են,
 Այս ցաւերը մեզի նոր չեն:
 Զիւանս կասեմ անկասկած,
 Մենք ենք տուել մեզի յարուած,
 Օտարին մեզի հասուցած,
 Բացած վէրքերը շատ խոր չեն:

Աշըղ Զիան

74.

Պ Ա Ն Դ Խ Տ Ի Ե Ր Գ

Օտար երկիր, օտար պանդուխտ կը հեծեմ,
 Դու հայրենիք, քեզ չիշելով կարտասուեմ:
 Ձը կայ ծնող, չը կան որդիք, քոյր եղբայր.
 Ձիք ամուսին, որով ցաւերս մեղմանայ:
 Օտար երկին, արեւ, աստղեր և լուսին,
 Թէեւ պայծառ՝ ինձի խաւար կը թուին,
 Բնակարանս տխուր, պանդուկ օտարաց,
 Օդս օտար, ջուրս օտար, օտար հաց:
 Ո՛ւր է հայրս, ո՛ւր է մայրս քաղցրանուն,
 Ո՛ւր զաւակունքս, ո՛ւր սիրելիքս սիրասուն:
 Սակայն ունեմ քովս Յիսուս, փրկէ զիս,
 Նա օտար չէ, Նա իմս է, սիրէ զիս:

ԲԼԲՈՒԼ ԵՒՆԵՐԱՅՐԻ

Ո՛վ դու բարեկամ այրած սրտերու,
Խօսնակ գիշերոյ, հոգեակ վարդերու.

Երգէ բլբլկիդ, երգէ ի սարէդ,
Զքաջն Հայոց Վարդան, երգէ հոգւոյս հետ:

Թաղէի վանուց ձենիկդ ինձ դիպաւ,
Սրտիկս որ ի խաչն էր կիպ՝ թունդ առաւ.
Ի Խաչին թռէն թռայ ու հասայ,

Գտայ զքեզ ի դաշտ քաջին Վարդանայ:
Բլբուլ քեզ համար մեր հարքն ասացին,
Թէ չէ հաւ բլբուլ մեր Աւարայրին.

Եղիշեայ հոգեակն է քաղցրազրուցիկ,
Որ զՎարդան ի վարդ տեսնու կարմրիկ:
Զըմեռն յանապատ կու գնայ կայ ի լաց,

յԱրտազ գայ գարունն ի թուփ վարդենեաց.
Երգել ու կանչել ձայնիւ Եղիշեայ,
Թէ պատասխանիկ արդեօք Վարդան տայ:

Ա Յ Ծ Ե Ա Մ

Անհոգ ես, չես գիտեր, ինչ կայ քո մասին,
Պտրտվում են քո խեղճ անձի վնասին,
Գամբռներով, բարակներով միասին.

Փախիր այժեամ, փախիր, որսկանն է գալիս,
Զագիկներդ տխուր լալիս են, լալիս:

Որսկանը ճրագով քեզի ման կու գայ,
Կուգէ ձեռքերը քու արիւնով լուայ,
Խզճալի՝ քո տեղակ սար ու ձոր կու լայ.
Փախիր այժեամ, և այլն:

Որսկանը գուլթ չունի, կանէ կրակը,
Կամ քեզի կըսպանէ, կամ քու գաւակը.

Զուր չի անցնիլ հրացանի գնդակը.
Փախիր այժեամ, և այլն:

Դաշտումը չես ման գար, թէ մտածես լաւ,
Քեզ կը վիրաւորեն, կըստանաս մեծ ցաւ,
Դճու մի ելլեր խիտ անտառից դու բնաւ.
Փախիր այժեամ, և այլն:

Սշրղ Զիւան

77.

Անցեալ գիշերն երազու՞մ

Դովլաթ բաժանողն մենակ,

Ըշտապով ինձ մօտ էր վազու՞մ,

Զեռին բռնած փողի տօպրակ:

Հարցրի. ուտո՞ւք ես գալիս,

Մոռացել ես բէիղբալիս.

Ասաց. սրան քեզ եմ տալիս,

Թէ որ կուտաս ինձի մուրհակ:

Ընկայ վիզովն՝ պաչ արի.

Ասամ, գալըդ հազար բարի,

Ո՛րտեղ էիր անցեալ տարի,

Որ ընկայ ես մեծ պարտքի տակ:

Ասաց. առատաձեռն էիր,

Ինձ համար ծանր բեռն էիր,

Փող չ'ի տալ քեզ, թէ մեռնէիր,

Առատ մարդին շատ եմ ներհակ:

Ես եմ դովլաթ բաժանողը,

Որ քեզ տամ եմ էսքան փողը,

Չեմ ոիրել ես փող ուտողը,

Պիտի ման դաս տաւնց գտակ:

Իորակդ սոխ ու հաց արա՛,

Հացն ջրումը թաց արա՛,

Բանն ինքդ վեր կաց, արա՛,

Զիլի փող տաս՝ բռնես մշակ:

Որ չի կատարես խօսքերըս,

Թէ լինիս իմ ծնող հէրօ,

Քեզանից կու կտրեմ սէրս,

Կը գցեմ մին խոր հորի բակ:

Ասամ. ինձանից հեռացու՛ր:

Ում կամենաս՝ տա՛ր նորան տա՛ւր,

Որ ծառալի նա քեզ 'ի զուր,

Քաշի բեռնդ՝ իբրև իշակ:

Ես Սէյեազն եմ՝ գիշեր և տիւ,

Չեմ տուել հէջ փողին պատիւ,

Այսուհետև քո միննաթիւ՝

Պէտք է մանգամ կօշիկս ծակ:

Պ. Տ.-Յ. Մաղաթեան

Մեկնեցայ հայրենեացն իմ աստ մընալով,
 Օտար աշխարհ թափառելով, մաշելով.
 Պանդուխտ և նըժգեհ վըշտակիր մարմնով,
 'ի յընտանեաց եղբարց կարօտ մընալով:
 Օտար աշխարհ թափառ՝ չունիմ դադարում,
 Տարաբերեալ ծըփիմ նըման ծովերուն.
 Ահ և կասկածք և վիշտ անթիւ անպատում,
 'ի յընտանեաց եղբարց կարօտ մընալով:
 Վիշտս 'ի աւազակաց, վիշտս 'ի սուտ
 եղբարց,
 Վիշտս 'ի հրապուրանաց անօրէն ազանց.
 Արհաւիրք ահարկուք զեւ ջուրց հոսանաց,
 Պաշարելով անձն իմ, մնացի կարօտով:
 Ստորագլուխ կարկամեալ կամ երկիւղալից,
 Խանգարեցի ուսումն ի դէմս ամենից.
 Թէպէտ կամ ենթադրեալ յերկիր բարեւից,
 Բայց ոչ ունիմ հանգիստ, մնացի կարօտով:
 Երերեալ դեգերիմ ի յայս կենցաղում,
 Պահ մի ուրախանամ, հազար պահ տըրտում.
 Յայգ և ցօրեկ տազնապ, ահ և հառաչումն,
 Ապաղելով ի հոգս, մնացի կարօտով:

Սըրբուհի կոյս, օգնեա ինձ տառապելոյս,
 Կըսկըծագին տառապելոյս ցաւելոյս.
 Բարեխօսեա առ Տէր ողորմիլ գերուս,
 Հանել զիս ի բանդէ, մնացի կարօտով:
 Ինձ ողորմեա, Յիսուս բանըդ հայրական,
 Ապաւինեմ ի քեզ, կենաց զաւազան.
 Թէպէտ եմ մեղաւոր, գոյով անարժան,
 Մի թողուր զիս խսպառ, մնացի կարօտով:

Էր հեռանաս քո մայրենի աշխարհից,
 Կարօտ թողուս սերտ բարեկամք քեզանից.
 Մեր ամենիս դու մայր էիր գթառատ,
 Արդ հեռանաս, մեզ մութ պատէ անփարատ:
 Քո սուրբ ձեռք մեր վերքերը շատ անգամ
 Լուանայիր, դեղ դնէիր ամեն ժամ.
 Քո մագերից ոլորէիր վերակապ,
 Քո բոլոր կեանքն աղբիւր համար էր ագապ:
 Արդ՝ Հայոց զօրքն իւրեանց մօրից որբանայ,
 Վրաց ազգը քո խնամք պերճանայ.

Հայաստանը զրկի իւր սուրբ Շուշանից,
 Վրաստանը բուրե հոռով քաղցրալից:
 Ուր որ երթաս, ուր որ լինիս տիրուհի,
 Մեր սիրտ-հոգին քեզ հետ տանիս մաքրուհի:
 Գնաս բարեաւ, մեր լոյս հաւատն քեզ
 րնկեր:
 Աջն ու խաչը քեզ պահապան զօր գիշեր:

Յ. Կարինեան

80.

ԵՐԿՈՒ ՏՈՂ

Ո՛վ չի սիրել անձը իրան,
 Ուրիշին սիրել չի կարող,
 Ինչ մարդ չի պահել պատուիրան,
 Այլոց պատուիրել չի կարող:
 Հասուն խելքն է բան շինողը,
 Ընտիր խօսքեր լօրինողը,
 Կամացը տէր չը լինողը՝
 Իր տանը տիրել չի կարող:
 Ընկած-ելած մարդն է յարգի,
 Նա է զտուած մաքուր ոսկի:

Անփորձ վախկոտ հարուստն իսկի՝
 Մի փող նուիրել չի կարող:
 Ինչքան լինի մարդ իմաստուն,
 Իրանից կայ բարձր անուն,
 Բայց որ Աստուած շինէ մի տուն,
 Ոչ ոք աւերել չի կարող:
 Զիւանի, մարդն է բանական,
 Դիմացող է մեծ նեղութեան.
 Զի ունենալ բարի վախճան՝
 Ով որ համբերել չի կարող:

Աշըղ Ձիաճ

81.

Ս Ե Ւ Ի Կ Ա Չ Ե Ր

Վրդովեցիր խաղաղ կեանքս, սիրական,
 Անցուդարձիդ ինձ նայելով մշտական,
 չէի տեսել մէկ հոգեհան քեզ նման.
 Սեւիկ-մեւիկ աչեր, դու իմ կեանքս մաշեցիր,
 Կանգնար դէմս, ստէպ-ստէպ աշեցիր:
 Ի՞նչպէս մնամ ես առանց քեզ միայնակ,
 Դուն ձգել ես սրտիս մէջը վառ կրակ,

Ակնարկելով գաղտնի ամեն ժամանակ .
 Սևիկ-մևիկ աչեր, դու իմ կեանքս աշեցիր,
 Կանգնար դէմս, ստէպ-ստէպ աշեցիր:
 Անոյշ, անոյշ խօսելովդ, սիրո՞ւն կոյս,
 Մաշուած սրտիս նորից տուիր կեանք և
 յոյս,
 Առանց գինւոյ արբեցուցիր խղճաւոյս.
 Սևիկ-մևիկ և այլն:
 Սիրոյդ սուր-սուր նետերովը խոցուեցայ,
 Իբրև ծաղիկ դեռ չը բացուած գոցուեցայ,
 Երբ քեզ տեսայ, կրակովդ լցուեցայ.
 Սևիկ-մևիկ և այլն:
 Սիրոյդ լարը պարանոցէս տուիր կախ,
 Օր ու արև չունեմ, գործս է ան ու վախ,
 Կրկին խօսէ, գոնէ լինեմ ես ուրախ.
 Սևիկ-մևիկ և այլն:

Աշուղ Զիան

82.

ՍՐԲՈՅ ԾՆՆԴԵԱՆ ՃՐԱԳԱԼՈՒՑԻՆ

Խորհուրդ մեծ և սքանչելի,
 Որ յայսմ աւուր յայտնեցաւ,
 Հովիւքն երգեն ընդ հրեշտակս,
 Տան աւետիս աշխարհի:
 Ծընաւ նոր արքայ
 Ի Բեթղէհէմ քաղաքի,
 Որդիք մարդկան օրհնեցէք,
 Զի վասն մեր մարմնացաւ:
 Անբաւելին երկնի և երկրի,
 Ի խանձարուրս պատեցաւ,
 Ոչ մեկնելով ի Հօրէ,
 Ի սուրբ այրին բազմեցաւ:
 Այսօր ցնծան երկինք ի վերուստ,
 Մեծապայծառ աւետեօք,
 Եւ արարածք ամենայն,
 Զգեցան հանդերձ փրկութեան:
 Այսօր յայրին ընծայեցաւ,
 Բրիստոս, որդին Աստուծոյ,
 Եւ հրեղինաց բազմութիւնքն,
 Յերկնից լերկիր վայր իջեալ:

Այսօր հովուացն տեսեալ,
 Զարդարութեան արեգակն,
 Եւ ընդ հրեշտակս երգէին՝
 Փառք ի բարձունս Աստուծոյ:

83.

Տ Ա Ղ Ծ Ն Ն Դ Ե Ա Ն

Այսօր տօնէ ծննդեան, աւետիս.
 Տեառն մերոյ և յայտնութեան, աւետիս:
 Այսօր արևն արդարութեան, աւետիս.
 Երևեցաւ ի մէջ մարդկան, աւետիս:
 Այսօր սուրբ կոյսն անապական, աւետիս.
 Ծնաւ Եբեր զանմահ արքայն, աւետիս:
 Այսօր հրեշտակք լերկնից իջան, աւետիս.
 Ընդ մեզ օրհնեն զանմահ արքայն,
 աւետիս:
 Այսօր դժողքն սարսեցան, աւետիս.
 Գունդք զիւաց յոյժ տրտմեցան, աւետիս:
 Այսօր չարքն կարկարեցան, աւետիս.
 Եւ ադամեանքն ուրախացան, աւետիս.
 Աստղ մի պայծառ և պատուական, աւետիս.
 Երևեցաւ ի Հընդրստան, աւետիս:

Մեծ թագաւորք ժողովեցան, աւետիս.
 Յոյով դպիրք և շատ իշխանք, աւետիս,
 Շատ քննեցին և չիմացան, աւետիս:

84.

ՋԱՆ ԳԻՒԼՈՒՄ, ՋԱՆ ԾԱՂԻԿ

1

Ծառիս տակը մանիշակ,
 «Ջան գիւլում՝ ջան ջան»¹⁾,
 Իմ եարը քանց քեզ շիշակ,
 «Ջան ծաղիկ՝ ջան ջան»²⁾,
 Ութ թումանից անց կենամ,
 «Ջան գիւլում՝ ջան ջան»,
 Քեզ կ'անեմ եարիս մշակ,
 «Ջան ծաղիկ՝ ջան ջան»:

2

Տեղ եմ գցել զաւամքեար,
 Մէջն եմ դրել Քեալանթար.
 Ես մի բուռը լեղակ եմ,
 Բէզիրգեանի տեղակ եմ:

¹⁾ Ամենայն տանց առաջին եւ երրորդ տողումն զայս կրկնեալ:

²⁾ Ամենայն տանց երկրորդ եւ չորրորդ տողումն զայս կրկնեալ:

3

Սիրել եմ սէրն երեսին,
Րէյհան թերն երեսին.
Ով իմ սիրածը ինձ չի տայ,
Աստուծոյ կրակն երեսին:

4

Ջաղացս մանի մանի,
Քունս անոյշ կը տանի.
Իմ եարս սարում-քօլում,
Իմ քունս ոնց կը տանի:

5

Ջաղացիս դուռը տաշած,
Աղլըխիս գիւլը քաշած.
Կէռ-կէռ ունքերիդ մեռնեմ,
Ոսկէ զալամով քաշած:

6

Հանքէն գաս՝ գեղը մտնես,
Իմ քցած տեղը մտնես.
Ինձնից գիւման եար բռնես,
Բէմուրվաթ, հողը մտնես:

7

Մտիկ արէք էն ղըշին,
Ոտը դրելայ փըշին.
Գլուխս ղուրբան կը տամ,
Չալ աչք, կարմիր թշին:

8

Ոչխարս արել եմ դուզը,
Ջուկել եմ ղարազեօղը.
Աղլուխդ ղարկի՝ նախշեմ,
Թափ տուր քաքուլիդ թողը:

9

Անձրե եկաւ շաղալէն,
Ուռու տերե դողալէն.
Հրէս եկաւ իմ աղբէրն,
Ալ ձին տակէն խաղալէն:

10

Քարիս տակը քարոտ ա,
Պարնի ձիանն արօտ ա.
Թամամ օխտը տարի ա,
Քոյրն՝ աղբօրը կարօտ ա:

11

Գետը նի մտայ, խոր ա,
Քաթան շապիկս նոր ա.
Իմ նանին խաբար արէք,
Ես օլքեայ-օլքեայ կորա:

12

Մեր կտրովը քօջ ա երթում,
Քօջ քօջի մէջ ա երթում.
Էրնէկ էն քուեր աչքի լսին,
Օխտն աղբօր մէջ ա երթում:

13

Գնացի ջուրը ջրրի,
Ոտս ընկաւ օձի լեղի.
Իմ հօրն ու մօրը քնչ ասեմ,
Ինձ տուին զարիւր տըղի:

14

Տուն եմ շինել զանանայ,
Ղարղու կը տամ դիմանայ.
Կուռդ մեկնի՝ ջուրն ինձ տուր,
Խմեմ՝ սիրտս հովանայ:

15

Դու նստել ես դօշակին,
Ուշ ու միտքդ փեշակին.
Խմել ես նռան գինին,
Հոտ քաշել մտնուշակին:

16

Ես մի կանաչ խիտր եմ,
Քու ջանին իխտիար եմ.
Երթաս՝ երթաս, յետ կաննես,
Իմանաս՝ բէլլու եար եմ:

17

Սարիցը ջուր ա երթում,
Հարցրէք՝ ուր ա երթում.
Քենին մահանայ ա արել,
Եարոջը տես ա երթում:

18

Ծաղիկ ունիմ ալայ ա.
Ալայ չի, ալվալայ ա.
Եար բռնիլը լաւ կըլնի,
Բաց թողալն բաբա ա:

19

Կանաչ տեփուր մէլդան ա,
Տեսէք՝ իմ եարը տանն ա.
Նոր ծլած բէլլիդ մեռնեմ,
Ոսկէթելի նման ա:

20

Մի ջաղաց երկու դռնի,
Բարձ դրէք՝ եարս կռնի.
Ես-դու մի բաղում պ'տինք,
Ես չինարի դու նռնի:

21

Յարէն կը գայ ձիաւոր,
Մեր տունը չարդախաւոր.
Հրէս եկաւ իմ աղբէր,
Երեք օրվան թագաւոր:

22

Արեւը կամար-կամար,
Կապել ես ոսկէ քամար.
Յիսուն օր պաս եմ պահել,
Իմ աղբօր ճամբի համար:

23

Մատանիք ոսկեջրած,
Այ տղայ, դու ինձ գրուած.
Դու խանին նօքար պըտես,
Ես քո ծոցը զանջիրուած:

24

Կանգնել ես, կանչում էլ չես,
Բօլիցդ ամաչում էլ չես.
Եկայ՝ կշտովդ անց կացայ,
Տէր ես՝ ճանաչում էլ չես:

25

Սարի թրթնջուկ թազա,
Ջաւզ ու մեխակ քեզ մազա.
Ինձ պէս նազանի աղջիկ,
Քեզ պէս տղին հնց սազա:

26

Բերդիս կտերն ցել ունիմ,
Ալ աբըշում թել ունիմ.
Թիլիկ-միլիկ սարկաւազ,
Ես քեզանից մէյլ ունիմ:

27

Հաց եմ թխել, գարի ա,
Իմ եարը սափարի ա.
Սափար երթալուդ մեռնեմ,
Խօսքերդ շաքարի ա:

28

Սարի խոտը ծեղվէ ծեղ,
Սղբեր երթանք միատեղ.
Որ հարամին վըրայ տայ,
Գլուխս տամ գլխիդ տեղ:

29

Խնձոր ունեմ կըծած ա,
Չորեք կողմն երծաթած ա.
Սղբերս ուզեց, տուի ոչ,
Սղիզ եարի ղրկած ա:

30

Կանգնել ես ախա բախա,
Լաջակիդ տուտը կախ ա.
Սե տղայ, սպիտակ աղջիկ:
Բռնել էք իբար եախա:

31

Երգիկ-երգիկ բռնել ես,
Երգկակոճին կռնել ես.
Իմ նանը քեզ աղջիկ չի տալ,
Անուշ քունդ կտրել ես:

32

Արևս ընկաւ մեր պատին,
Արքայութիւն իմ տատին.
Հողիդ դատուի, այ տատի,
Ինձ խի տուիր կռնատին:

33

Ջրի վերայ սաղ պըտի,
Իմ օրդագը դաղ պըտի.
Ի՞նչ եմ անում թուլունդին,
Իմ եարը Շահբաղ պըտի:

34

Ա՛յ եար, ա՛յ եար, կռնել ես,
Մարայ 1) աղլուխ բռնել ես.
Բարե տուի, առար ո՛չ,
Մագետը թարկս տուե՛լ ես:

35

Բաղումը կար բաղմանչի,
Շուին ածէր ու կանչէր.
Թաքուն գառած դուրս թռան,
Մինն իմ եարի նման չէր:

36

Մեր դրանը ուռի ծառ,
Ոսկէ կաքաւ վրէն թառ.
Երթայր ու գայր՝ օրօր տայր,
Ալւան ծաղիկ տանիլ տայր:

37

Հայ օրօն, օրօն ծաղիկ,
Կարմիր ու տորոն ծաղիկ.

1) Եգիպտոսի:

38

Ալվալայ խալիս եմ կիտել,
Էն էլ քեզ օրօն ծաղիկ:

Նախրատափի խնկի ծառ,
Խնձոր քցեմ՝ արի, տար.
Ուրբաթ, շաբաթ քեզ մօհլաթ 1),
Լոյս կիրակի արի, տար:

39

Ի՞՞՞՞ աղբերը սարումն ա,
Շուին զօտկածալումն ա.
Աղբեր ջան, շուիդ ածա՛,
Քիրդ Լօռուայ քարումն ա:

40

Մի բարձ եմ արել՝ իմն ա,
Մինն էլ եմ արել՝ իմն ա.
Գեանջու քարվանն գալիս ա,
Միջի թաւադն 2) էլ իմն ա:

41

Տեղ եմ քցել փոթ կը տայ,
Բարձ եմ դրել՝ սոթ կը տայ.
Մեռնեմ միջի քնողին,
Անոյ՛ խնկահոտ կը գայ,

1) Պայմանաժամ: 2) Աղնուական:

42

Այ տղայ, դու հուր ես՝ մուր ես,
 Ես ծարաւ եմ, դու ջուր ես.
 Մուղարլան՝ թառլամ շոր ես,
 Համբարձում գիշերն հւր ես:

43

Արեն արեգ ունի,
 Իմ եարս գեղարքունի.
 Գեղարքունւոյ սարը փռւլ գայ,
 Բալքի իմ եարը տուն գայ:

44

Ամպելայ ամպի տակին,
 Ծունկս ծնկանդ տակին.
 Ես քեզ հրտեղ սիրեցի,
 Մեխակի ծառի տակին:

45

Մեր դրան առաջին մի դարան,
 Տղայքն եկան, նի՛ դառան.
 Կուռս տարայ որ բռնեմ,
 Թաղի¹⁾ ու թուլայ դառան:

46

Մեր դրան առաջին մի դարան,
 Աղջկերքն եկան, նի՛ դառան.

¹⁾ Որսի չուն:

47

Կուռս տարայ որ բռնեմ,
 Շարած մարգարիտ դառան:
 Ես աղջիկ եմ, ալ կուգեմ,
 Այս ծալուծալ կուգեմ.
 Որ տունը ես մտնեմ,
 Ոսկին սարէսար կուգեմ:

48

Աղջիկ՝ աղջիկ, ալ աղջիկ,
 Աչքերդ չալ-չալ աղջիկ.
 Դու մեր տանը հարս պըտես,
 Իմ քիրը քեզ տալ¹⁾ աղջիկ:

19

Աղբեր, հանաքիդ մեռնեմ,
 Ոսկէ դանակիդ մեռնեմ.
 Ճամբայ ելնող՝ շէկ աղբեր,
 Դուքան բազարիդ մեռնեմ:

50

Ջաղացս ման եմ տուել,
 Սիրել եմ, ջան եմ տուել.
 Օխտը տարի սերուժիւն,
 Մէկ օր պայման եմ տուել:

¹⁾ Ամուսնու քոյրը:

51

Ջաղացիս աջոյ կուռը,
Կը զընկայ միջի գիւլը.
Վայ, իմ սիրած բիւլբիւլը,
Քարշեցին խանի դուռը:

52

Արագը ¹⁾ հեշտացել ա,
ձամբէքը կոշտացել ա.
Իմ նանին խաբար տարէք,
Մուշտարիս շատացել ա:

53

Սանդ կը ծեծեմ, խաղ կանեմ,
Մաշիկը ոտիս կախ կանեմ.
Այ տղայ, դու շատ մի խօսալ,
Մուկն ըռխիցդ ²⁾ կախ կանեմ:

54

Հայ էրն ա, էրն ա,
Տղայքն ձեր տէրն ա.
Աղջկերք. դուք շատ մի խօսաք,
Տակի դէհն ձերն ա:

55

Այ օրօն, օրօն ծաղիկ,
Կարմիր ու տորոն ծաղիկ.

¹⁾ Երասիս գետը: ²⁾ Բերան:

Տարենը մի հետ կը գաս,
Գամ քեզ օրօն, այ ծաղիկ:

56

Այ տղայ, դու հէրիս՝ մէրիս,
Ուր եկար դու կէս գիշերիս.
Տեղումս քեզ տեղ չը կայ,
Գլուխդ դիր կռնեցիս:

57

Այ տղայ, դու բաղովն արի,
Ոտներդ շաղովն արի.
Էս թաղը դալմադալ ա,
Ման տուր էն թաղովն արի:

58

Ճրագ դնեմ լիսացու,
Կարմիր խառէն քիսացու.
Ես քո մօրը հարսնացու,
Դու իմ մօրը փեսացու:

59

Ծաղիկ եմ քաղել՝ դեղին ա,
Իմ եարը ձեր գեղէն ա.
Հէլ ու մեխակ շատ ունեմ.
Հըրէն եարիս ձեռին ա.

60

Ծաղիկ եմ քաղել՝ այ ա,
Այլ չի, ալւալայ ա.

Եար բռնելը լակ կըլի,
Բաց թողալը բալայ ա:

61

Ծաղիկ եմ քաղել նարինջի,
Այ տղայ, վեր արի՛, փնջի՛.
Իմ մէրը քեզ աղջիկ չի տալ,
Քանի ման գաս եաւընջի:

62

Այ տղայ, դու բաղի միջին,
Ոտներդ շաղի միջին,
Կանչի՛. կանչելուդ մեռնեմ,
Ես եմ քո հաղի միջին:

63

Անց կենամ գետի կուռը,
Քաղեմ մի դաստայ նուռը.
Ով իմ սիրածն ինձ չի տայ,
Կը քարշեմ խանի դուռը:

64

Այ տղայ, դու սև չուխաւոր,
Սաղմոսը ծոցիդ սովոր.
Երնակ կը տամ էն օրը,
Տունս կը գաս թագաւոր:

65

Այ տղայ, իր անել տո՛ւր,
Մի մատը գիր անել տո՛ւր.

Ինձանից քեզ ճար չը կայ,
Քաքուլուդ վեր անել տո՛ւր:

66

Ջաղացի դուռը տարթ ա,
Կտուրը լիքը մարդ ա.
Հորէս եկաւ իմ եարը,
Գօտիկը լիքը վարդ ա:

67

Առուիդ արասին դուրբան,
Գինուդ կարասին դուրբան.
Ճամբիցը եկող աղբեր,
Սրտիդ հավասին դուրբան:

68

Վարդ եմ քաղել մաղերով,
Վայր եմ դրել շաղերով.
Հորէս եկաւ իմ եարը,
Այ ձին տակին խաղալով:

69

Ջուր ա գալի լափ տալէն,
Երկու խնձոր ծափ տալէն.
Հորէս եկաւ իմ եարը,
Թուխ գտակը թափ տալէն:

70

Ձուն դնեմ վըրէն՝ խաշեմ,
Նի՛ լեմ կտուրը եաշեմ.

Տեսնեմ, իմ աղբերը դալիս ա,
Զոքեմ չաքմէքը քաշեմ:

71

Զաղացի դուռը փոս ա,
Քար կը քցիմ, կը խօսայ:
Կանչի, կանչելուդ մեռնեմ,
Իմ նանի ազիզ փեսայ:

72

Ծաղիկ, ծաղիկեվանայ ես,
Ասլըդ Երևանայ ես.
Տարէնը մի Հետ կը գաս,
Մագեամ նուբարխանայ ես:

73

Զեր բաղի դուռը բաց ա,
Ոտներդ շաղով թաց ա.
Եարիցդ հեռացել ես,
Աչքերդ լիքը լաց ա:

74

Աղջիկ, մագերդ հիւսէիր,
Թուշդ երեսիս քսէիր.
Ելլէիր բարձիս վերայ,
Բիւլբիւլի պէս խօսէիր:

75

Աղջիկ, գնանք մեր բաղը,
Պոկեմ շամամիդ թաղը.

Էդ երեսիդ շաֆաղը,
Հանել ա սրտիս դաղը:

76

Այ տղայ, անունդ ա Սարգիս,
Արի նստենք էս կարգիս.
Ես ու դու բաղում պիտինք,
Ես չինարի, դու նարգիզ:

77

Մտիկ արէք էն զուշին,
Ոտը դրել ա փուշին.
Մեռնեմ չալ-չալ ունքերին,
Թուխ աչք՝ կարմիր թուշին:

78

Սպիտակ ձին նալն ինչ կանէ,
Սիրունն խալն ինչ կանէ.
Եարն որ եարին սիրէ,
Աս ու լիսն թնչ կանէ:

79

Զուն գնեմ թաւէն՝ խաշեմ,
Գնամ կարովը եաշեմ.
Եթէ եարս գալիս է,
Զոքեմ՝ չէքմէքը քաշեմ:

80

Այ տղայ, դուն ալ կապաւոր,
Տուն ունես չարդախաւոր.

Էն օրին էրնէկ կուտամ,
Իմ տուն՝ տուն գաս թագաւոր:

81

Սև հաւի ձուն փուրն է,
Մեր եարը Գեանջու կուռն է.
Գեանջայ, քու սարը փուլ գայ,
Բալքի իմ եարը տուն գայ:

82

Վերնաքամին գալիս է,
Թինգլայ մէջքս տալիս է.
Մէլգան արէք, անց կենամ,
Կարօտ եարս գալիս է:

83

Ջուր է գնում արխումը,
Աբըրշում ա չարխումը.
Էն օրին էրնէկ կուտամ,
Ջոմարդ կանգնես խալխումը:

84

Մէկ խնձոր ունեմ՝ կծած է,
Բոլորքը զառով նխշած է.
Աղբերս ուզեց՝ տուի ոչ,
Ասի՝ եարիս զրկած է:

85

Գնացի ջուրը տեսայ,
Շաքաքայ դուռը տեսայ.

Ծլած բեղերուդ մեռնեմ,
Իմ մօրս ազիս փեսայ:

86

Գնացի ջուրը լուացք,
Սապոնս էր ոսկէջրած.
Իմ հէրն ու մէրն թնչ անեն,
ձակատիս էս էր գրած:

87

Իմ աղբէքս ծառի տակին,
Սաղմոսը կռան տակին.
Սաղմոսն գիր է դառել,
Լեզուն բիւլբիւլ է դառել:

88

Մեր տան յետնէն մի մառան,
Տղերքն եկան՝ նի դառան,
Ձեռս տարայ թէ բռնեմ,
Դիփ լալ ու մարջան դառան:

89

Սարերի սինձն թնչ է,
Կաթն ու բրինձն թնչ է.
Եարն որ եարին սիրէ,
Խօսք ու զրիցն թնչ է:

90

Դար 'ի վեր ջուր է գնում,
Հարցրէք, թէ ուր է գնում.

Քենուն մահանայ է արել,
Իր եարի տունն է գնում:

91

Ջան գիւլում կասեմ՝ կը շարեմ,
Տօպրակը կածեմ՝ կու կարեմ.
Կտրէ կտուր ման կու գամ,
Քանց քեզ լաւը կու ճարեմ:

92

Մեր տան յետնէն բաղջա կայ,
Բաղջի միջին բէյհան կայ.
Բէյհանը քաղող պիտի,
Ծոցումը խաղող պիտի:

93

Այ տղայ, դուն աստ մ'աստ,
Գտակիդ թափէն խաս ա.
Իմ մէրը ինձ քեզ չի տալի,
Իմ հօրը քրթամ աստ:

94

Գիւլում գիւլում, գիւլ չիչակ,
Ես ու դու մտնենք մին դոշակ.
Մինչև 'ի լոյսը քըչփըչանք,
Լուսէն յետոյ կըրկըչանք:

95

Աղջիկ, կապէդ ակ պիտի,
Բոխչէդ ծալ ծալ պիտի.

Ում տանն էլ որ տուն երթաս,
Ոսկին սարէսար պիտի:

96

Մեր տան տակին վար կանեմ,
Չալ ագուտին քար կանեմ.
Թէ իմ սիրածը ինձ տան,
Գոլթիւնս թարկ կանեմ:

97

Մեր բաղումը մի դարան,
Շատ հարսնաղջիկ նի դառան:
Ձեռս տարայ թէ բռնեմ,
Դիփ թաղի՝ թուլայ դառան:

98

Մեր բաղումը բաղմանչի,
Սալբի ծառի նման չի.
Շատ հարսնաղջիկ դուրս եկան,
Ոչ մէկն իմ եարիս նման չի:

99

Դու նստել ես գերանին,
Ղարդու շուին բերանին.
Ոսկէ զայթան պլտի գործեմ,
Դնեմ ջիբիդ բերանին:

100

Այ տղայ, դուն օտար լինիս,
Սև հաւի կատար լինիս.

Ինձ մէկ խումար եար սիրի,
Դու ճօթ ու պատար լինիս:

101

Այ օրօն, օրօն ծաղիկ,
Կարմիր ու տորօն ծաղիկ.
Հարսն ու աղջիկ մեծրել եմ,
Որ գան ու քաղեն ծաղիկ:

102

Ջուրը գալիս ա լափ տալով,
Երկու խնձոր ծափ տալով.
Հորէն եարս գալիս ա,
Այ գդակը թափ տալով:

103

Գիւլում կասեմ՝ կը շարեմ,
Չուալը կածեմ՝ կը լարեմ.
Թամամ աշխարհը ման կը գամ,
Քեզնից լաւը կը ճարեմ:

104

Ես աղջիկ եմ՝ ալ կուգեմ,
Բօխչաս ծալէծալ կուգեմ.
Երբ որ ետրիս տուն կերթամ,
Գօտիկս թիբմա շալ կուգեմ:



85.

Փաթառ մեզ, նախշուն կաքաւ,
Սարերն ամեն կանաչեցաւ,
Զիարդ զգեցեալ պայծառեցաւ:

Յայդ լեռներէն ի վայր փութաս,
Յաւուրս դարնան պարեալ ցընծաս.
Նախշուն ձագերով շուրջ կու գաս.
Սրագ արագ ոստոստելով:

Վասն ոյր թըռչիս:
Ընդէր փախչիս կամ զի թագչիս,
Կողկողալով՝ ձայն արձակես.

Շաղկաւ, շաղկաւ,
Կաղկաւ, կաղկաւ,
Միշտ հառաչես ու կարկաչես:

Ոսկկափալ փետուր քոյին
Զանազան գունով շողշողին,
Որպէս գլոյս բոլորովին:

Յայդ և այլն:

Փառօք ճեմիս որպէս իշխան,
Լերինքըն քեզ յարկ սեփական.
Դաշտերն ամեն համանգամայն:

Յայդ և այլն:

Ծիծաղաձայն քաղցրիկ թռչուն,
Զքնաղատիպ և յոյժ սիրուն.

Ի մէջ ծաղկանց ննջես ի քուն:

Յայդ և այլն:

Քեւ ճոխանան ամեն լերինք,
Եւ համօրէն մարգագետինք.

Զքեզ գովեն ազգ և ազինք:

Յայդ և այլն:

Արդ՝ բարձրացո՛ղ զձայն քո ընդ իս,
Եւ փարատեա՛ւ ըզսուգ սրտիս
Հայցմամբ քոյոյ երգաբանիս:

Յայդ և այլն:

Կարկաչաձայն այդ ձայն քո սուրբ,
Տոչորէ գիս սիրոյ քո հուրբ.
Զետ զովանալ արտասուաց ջուրբ:

Յայդ և այլն:

Այդ լեռներուն հուպ առննթեր,
Դէպ զառ ի վայր և զառ ի վեր
Թերաբաց թևօք ճեմ առեր:

Յայդ և այլն:

Պետրոս վ. Նախանցի

86.

Թամամ աշխարհումն չը կայ մին,

Աննման ջան, քեզի պէս,

ձակատն մէյդան, քեզի պէս,

Ունքերն քեաման, քեզի պէս,

Աչքերն մաստան, քեզի պէս,

Պռօշն մարջան, քեզի պէս,

Սուրահի կեարդան, քեզի պէս,

Կինն հնց կարող է ծնանիլ

Մարալ ու ջէյրան, քեզի պէս:

Քեզ տեսնողն ասում է.

Սա հողեղէն չի, հրեշտակ է,

Կերպարանքն արեգակ է,

Հար թուշն մին լուսնեակ է,

Աչքերն վառած ճրագ է,

Լեզուն դժողքի կրակ է,

Բուխաղն մեղր ու կարագ է,

Որքան վարավուրդ եմ անում

Զը կայ էլ ինսան քեզի պէս:

Երեսիդ մտիկ անողն ասում է.

Քաշած պատկեր ես.

Ոտքից ցզլուի գիփ սէր ես,
Ամեն բանից զեր ի վեր ես,
Իմաստալից գլխի տէր ես,
Սրբաբիշտ թէ կու սիրես,
Սխալմունքս պիտի ներես,

Որ կամենում եմ ասել՝
Ձը կայ մեհրբան քեզի պէս:

Ինչ տեղով որ անցնում ես,
Ասում են. ետրաբ՝ սա ո՞վ է,
Հանդերձն գիփ կարմիր մով է,
Երեսն մախմարի խով է,
Հանդարդութիւնով մին ծով է,
Բերան պիտում է՝ որ գովէ,
Անպատմելի շնորքով է,

Կենացս մէջ չեմ տեսած՝
Սուլթան ու խաղան քեզի պէս:

Գեղեցկութիւն բաժանողից
Շատ փայ ստանողն դու ես,
Միշտ ուրախանողն դու ես,
Ամակ իմանողն դու ես,
Դատաստան անողն դու ես,
Մարդոյ ջան առնողն դու ես,

Սէյադ սպանողն դու ես,
Քեամանդարների միջումն
Ձը կայ մին որսկան քեզի պէս:
Պ, Տ.-Յ. Մաղաթեան

87.

Ա. Ռ. Ս. Ի. Ա. Կ. Ա. Ն.

Ինչ վատութիւն արի, մատաղ մի անիլ,
Ջանս քեզի ղուրբան՝ սաղաղ մի անիլ,
Մի փուչ բանով ինչ բեղամաղ մի անիլ,
Արտասուքս վարար բուլաղ մի անիլ,
Դարդ ու դարմաններս օյաղ մի անիլ:
Քո ճամփումըդ ջիւան օմրըս փուչ արի,
Կու խնդրեմ Աստուածանէ՝ տա քեզ միշտ
բարի,
Մուրվաթ արա՛, կանգնի շարթ ու իրկարի,
Ինչ որ ասեմ, խօսքս լսի, կատարի,
Ձէ մի ասիլ, ունքերդ թաղ մի անիլ:
Ի՞նչպէս անեմ, ո՞ւմ ասեմ դարդ ու սարս,
Օր բէ օր աւելանում է ա՛հ ու զարս,
Մխկըտում է, եւ է զալիս ջիգարս,

Եշխիդ սիրով ճշդճրդել ես խուբարս,
 Աստուած սիրես՝ մըհլամ դիր, աղ մի անիլ:
 Եւրոպացւոց թագաւորն ես դու շքեղ,
 Նոր զարգարուած թախտիդ վերայ փառահեղ,
 Դահլիճներդ կանգնեցրու դու ահեղ,
 Թէ սուչ չունեմ, անմեղ դուստղ մի անիլ:
 Լաց ու արտասուք գետի նման ա,
 Թուրինջի պէս հէր մարդ դժուար դիմանայ,
 Ո՛վ ընկելայ, ո՛վ քաշելայ, կիմանայ,
 Նա քեզ կասի, Եշխի հետ հաղ մի անիլ:
 Թուրինջ աշղղ

88.

Ամեն միտս ընկնելով էն եարս իմ,
 Կորցնում եմ զօղրու ճանապարհս իմ,
 Թաւահ չունեմ, ծովն ընկաւ քարս իմ,
 Ա՛խ քաշելով՝ կարատովեց ջիգարս իմ,
 Աստուած սիրես քնչպէս կուրի ճարս իմ:

Եշխի մէջն ընկնողն կուրի ծումի պէս,
 Թէկուզ աշխարհք անի կեր ու խումի պէս,
 Վառվեցի՝ հալվեցի թափած մումի պէս,

Ջրերի հետ խառնըվեցի ղումի պէս,
 Ջունուն Վարդան աշղի Մաջնունի պէս,
 Լէյլու համար ման եմ գալիս սարս իմ:

Թահր ա տուել՝ չուխ բօյիդ սումբուլ կասեն,
 Փայլում է ջամալդ ծովի հուլ կասեն,
 Չանիդ տակին թուշ չեն ասիլ, կուլ կասեն,
 Վարդի կարօտ մայիսվայ բիւլբիւլ կասեն,
 Գիշեր ցերեկ չի գալիս դարարս իմ:

Հոգէն մօտիկ մին աղալաթ խան կուզեմ,
 Օրինաւոր վճռող դիւան կուզեմ,
 Էս հագաղս եարս ինձի տան՝ կուզեմ,
 Եարիս հետ քէֆ անելու սաղ ջան կուզեմ,
 Էս աշխարհումս մին լաւ սիրական կուզեմ,
 Անսիրական քնչ կանեմ աշխարհս իմ:

Ողորմի մեռնողներուն, ապրին էլ սաղերը,
 Գարունք բացուի՝ դաստով գնանք բաղերը,
 Կանաչ տեղը մօրթենք գառի չաղերը,
 Արնոտ լինի մանուշակի թաղերը,
 Միսկին-Բուրջին ասում ա էս հաղերը,
 Չէք հաւատում՝ կարգացէք դաւթարս իմ:

Միսկին-Բուրջի

89.

Նոր բահար ես գովելի,

Թաղա՝ նուբար ես գովելի,

Գուռ անհրման ես, գեղեցիկ,

Նախշ ու նրկար ես գովելի:

Թայ չուհեո աշխարհումբս,

Եարաբ դու թնչ օրինակ ես,

Բլբուլ ես գարնանային,

ձարտարախօս ծիծեռնակ ես:

Բայց արա արքայութեան

Բաղի դուռը քանի՞ փակես,

Գիտեմ՝ հոտով անուշ ես,

Վարդ ու մեխակ, մանուշակ ես,

Կամ՝ խաթանի-խութանի

Մուշկ ու ամբար ես գովելի:

Ո՞րտեղանց որտեղ, թուրինջ,

Ըռատ եկար էս բահարին,

Դէս ու դէն պըտուտ դալով,

Ախար ընկար էշխի ճանկըն.

Պըրծընելու ճար չի կայ,

Հոգիս կ'առնի զալում մահըն,

Թէ հազար դարդ ունենաս,

Ի՞նչ կ'անի հէքիմ ջարրահն,

Ինչ համար անմահական

Դու դեղ ու ճար ես գովելի:

Հուսով ես պատկերովդ,

Քան զարեգակի վերայ,

Փայլում ես մաշալի պէս,

Գունով ես կրակի վերայ,

Վառվում ես ճրագի պէս,

Ոսկի աշտանակի վերայ,

Օրինակ ես կայսերաց,

Թագաւոր թագի վերայ,

Թրաշ արած անգին եաղուլթ,

Ջավահիր քար ես գովելի:

Թուրինջ երգիչ

90.

Ես չեմ ուզում էս թալուր փիս մահուդը,

Ինչ խաբել ա պարոն Խէչօ եահուդը,

Մուլթը տեղը կտրեց՝ չիմացայ փուտը,

Պէտք է որ անիծեմ նորա մօր դուդը,

Աստըծանով երգում կերաւ՝ ասէց սուտը:

Որ լաւը տաս՝ քեզ համար բաւ կուլի,

Բոլոր աշխարհի միջումը չաւ կուլի,

էս ստօլի երեսքաշին լաւ կուլի,
Ստօլ չունիմ՝ կոտրվել ա չորս ոտը:

Մի ասէք պարոն Բաբին՝ էս ինչ ղալ ա,
Որ տուել ա Աղբարին՝ էս ինչ մալ ա,
Կասես թէ ներկած բարդանի ղալ ա,
Ղաշ էլ կըլի, որ մէջը ճըխտես խոտը:

Խաբար առի՝ ըստուր գինը նէչա ա,
էս մահուդ չի՝ բալքա մահուտ բէչա ա,
Տեսնողները հէնց իմացան քէչա ա,
Խարաբ ըլնի ըստրալ էլ զաւօգը:

էս մահուդի թարիֆը ես շատ արի.
Տուի դերձակին՝ լայաղ չարաւ, որ կարի.
Ասէց. էս ինչ ա, չի արժի մի փարի,
Լեզուով նամ տուեց՝ նամ չի առաւ մի տուտը:

Մուսնաթ եմ անում՝ առաջ էն լաւը տաս,
Փրֆուալէն՝ շաւաղ տալէն խաւը տաս,
Աստառն ու քօբէն, չըլնի մաւը տաս,
Խիաթին ու գուկմէն ու մերամուտը:

Աղբար Ադամն եմ, թահրդ կանեմ,
Աղա երեսս քեզ փիանդազ կանեմ,

Թէ որ չի տաս՝ պօղիովնիկին արդ կանեմ,
Հնտրանից կառնեմ ամեն եկամուտը:

Աղբար Ադամ

91.

Բ Ը Ր Ե Կ Ե Ն Գ Ը Ն

(սեղանի երգ)

Ձէն օրերս մեզ օր խնդութեան,
Օն եկէք մեք միաբան,
Երբ արդէն եմք բաղմած սեղան—
Երգենք, զառնենք նուագարան:
Կազմենք երգոց ժողով սիրուն,
Նուագենք գինիս այս պաղպաղուն,
Տես սիրուն սա փրփուր,
Ընկեր, դուն ալ լեցուր:
Առ, բարձրացուր գինւոյդ բաժակ,
Ահա իմս ալ բարեկամ.
Ձարնենք բաժակ, տան երկար կեանք,
Սեղանակցացս հազար ամ:
Ձուարթութիւն սա կը բերէ,

Գինիս արերած ոգիներէ,
 Մարդիկ կընէ զուարթ,
 Աղէ ընկեր՝ խմէ այդ:
 Տեսնա՜ր ուրեմն, խնդումներես
 Թաղծուծենէդ եղաւ արդ,
 Գինիս կ'ելլէ ուր ասպարէզ,
 Խրախուծեանց կ'ըլլայ զարդ:
 Հնազա մանուկ լեցուր նորէն,
 Սեղանակցացըս համօրէն.
 Արդ վայել է խնդալ,
 Ընկեր, պարպէ մէյ մ'ալ:

92.

(Թարգմանութիւն ոուսերէնից)

Մայրիկ իմ աղաւնիկ, լոյս արեգական,
 Խղճա՛, իմ ծընող քաղցրիկ, ինձ քու աղջկան:
 Ասես՝ օձ մի թուռաւոր սիրտս է խալթում,
 Ու միշտ գիշերը բոլոր քունել չի թողնում:
 Անհանգիստ երազներից քունս չի տանում,
 Նընջելից և յառնելից սիրտս է մաշվում:
 Մէկ տեսնես՝ թռչունների երգ եմ լսում,
 Սիրտս այդ քաղցրիկ ձայնից վեր-վեր է թռչում:

Ի՞նչ է այս, իմ ծնողս, որ ինձ պատահեց,
 Երևի այս իմ ցաւս չարից հանդիպեց:
 Միթէ չը կայ մայրիկս, իմ դարդին մի ճար.
 Հեռացուր այս տանջանքս, գտի՛ր մէկ հնար:
 «Իմ նազելի դստրիկս մի մաշուի՛ր լալով,
 Իմ սիրտս էլ մի խոցի՛լ քեզ չարչարելով:
 Իմացի՛ր, այս ցաւերը քեզ անվնաս է,
 Հասել է ժամանակդ, այդ սիրոյ դարդն է.
 Փոքր ինչ էլ համբերէ, դստրիկ իմ սիրուն,
 Կու գայ փեսան, կը տանէ, կ'ընես հանգիստ
 քունս»:

Բ. Տ.-Պ. Պատկանեան

93

Ուստի՛ կու գաս, դարիւր բըլբուլ,
 Գու մի լաց'ի, ես եմ լալու.
 Գու վարդ պըտուէ, ես գօզալին,—
 Գու մի լաց'ի, ես եմ լալու:
 Արի՛, բըլբուլ, խօսի բառըն,
 Օխնըվի քու էկած սարըն,
 Քի վարթն էրեց, ինձ իմ եարըն,—
 Գու մի լաց'ի, ես եմ լալու:

Ման եմ գալի դիդարի հետ,
 Վուսնց զարիբ բըլբուլ խարի հետ.
 Դու վարժի հետ, ես եարի հետ,—
 Դու մի լաց'լի ես եմ լալու:
 Սալբուի նըման կանանչ եմ,
 Ե'կ, խօսի ձայնըդ ճանաչիմ,
 Դու վարժ կանչէ, ես եւր կանչիմ,—
 Դու մի լաց'լի, ես եմ լալու:
 Ղարիբ բըլբուլ՝ ձայնիդ մալում,
 Ես ու դու երվինք մէ հալում.
 Սայաթ-Նօվէն ասաց՝ զալում,—
 Դու մի լաց'լի, ես եմ լալու:

Սայաթ-Նօվա

94.

Էժան տեսայ՝ քնդուր առայ կազ էծը:
 Ծուլծուլ էլաւ՝ տուեց մաղալլազ էծը,
 Սօլլի նման լաւ էր ասում հազ, էծը,
 Շատ էր քէֆով, խմել էր արազ էծը:
 Էժան տեսայ՝ ասի տիրօջը խաբեցի,
 Չաթուն դրի՝ պոզերիցը կապեցի,
 Փախարն առաւ՝ բազարներն չափեցի,
 Գըժվեցըրէց ինձ՝ շինեց սարսազ, էծը:

Ինձի չունեմ անեղիցը՝ նետիցը,
 Շատ եմ ծեծել՝ հարցրէք փետիցը,
 Արի չ'արի, անց չի կացաւ գետիցը,
 Ինձնից ուզեց գէմի'ինան սալ էծը:
 Դուրս բերի Սօկիւտտուղի գզերը,
 Վրէս թափեց զասաբխանի շները,
 Փախաւ, մտաւ մաթուշկեքանց տները,
 Միտքըն ունէր գառնալ ղուռուսազ էծը:
 Երկու լետի ոտներիցը գըքեցինք,
 Էն երկար ախանջներիցը ձըքեցինք,
 Ուշունց տուինք, անիծեցինք, թըքեցինք,
 Չէր ամաչում ինձ անում էր լազ էծը:
 Ես չի տեսել մի էսթավուր օլինբազ,
 Պոզեր ունէր, որ ամենն էր մի գազ,
 Համ քոսոտ էր, համ զօթուր, համ անմազ:
 Ոտներիցը էլէլ էր դաբազ էծը:
 Ես չը տեսայ սև էծի մըսի համը,
 Գժուլթիւնումըն ըսկի չը թողուց քեամը,
 Էնդուր համար թարիֆն արեց Ազբար Ագամը,
 Սըտիս վրէն դըրուց դուգիւն դազ էծը:

Ազբար Ագամ

95.

Բըլբուլի հիտ լաց իս էլի,
Վարժի նըման բաց իս էլի,
Վարժաչըրով թաց իս էլի,
Թաց իս էլի:

Ձը կայ քիզ նման, չը կայ քիզ նման.

Քիզ նման, քիզ նման,

Դո՛ւն իս աննըման:

Սիրունութիւնդ էլաւ արբաբ,

քիզ սագ կու գայ դուշու զարբաբ,—

Ղուշու զարբաբ,

Ձը կայ քիզ նման, չը կայ քիզ նման,

Քիզ նման, քիզ նման,

Դո՛ւն իս աննըման:

Երեսըդ է շամս ու զամար,

Ջանբս դուս կու գայ քիզ համար,

Մէջքիդ ունես օսկէ քամար,—

Օսկէ քամար,

Ձը կայ քիզ նման, չը կայ քիզ նման,

Քիզ նման, քիզ նման,

Դո՛ւն իս աննըման:

Հաքիդ զարըն ալ իս արի,

Բըլբուլի հիդ լալ իս արի,

Բարկ երեսիդ խալ իս արի,—

Խալ իս արի,

Ձը կայ քիզ նման, չը կայ քիզ նման,

Քիզ նման, քիզ նման,

Դո՛ւն իս աննըման:

Դարդըս ասիմ՝ կու լան սարիբ,

Էս քնչ բան էր, վուր դո՛ւն արիբ,

Սայաթ-Նօվուսն ջուսուսն արիբ,—

Ջուսուսն արիբ.

Ձը կայ քիզ նման, չը կայ քիզ նման,

Քիզ նման, քիզ նման,

Դո՛ւն իս աննըման:

Սայաթ-Նօվա

96.

Ասում ես դիմացիդ՝ ոնց դիմանամ — մթթէ ես
եմ քար, դարդիս արա մէկ ճար.

Կեանքըս մաշել ես բոլորովին՝ ամենը իսպառ,
Էս ցաւըն է դժուար,

Էսքան նեղութիւնը ինչի մի տար անողոր-
մաբար, ով դու իմ սիրահար:

Սնգին պարգեւիցըդ պարգեւի՝ ըստ քոյոց
դքոյս, բողբոջ ես նորաբոյս.

Եկ՝ սէր իմ ազնիւ, աղաչում եմ, խղճած խղղ-
 ճալոյս, տո՛ւր բաւականին յոյս,
 Ել ինքըդ էս անտանելի ցաւին գտի՛ր հնար,
 Ինձ մի թողուլ անճար:
 Շատ վախտ է՝ քաջում եմ կարօտդ, չես գա-
 լի երես, մինչ երբ դիմանամ ես,
 Իմ դժբախտութիւնըս բաւ է ինձ, մի անիւ
 Էդպէս՝ կեանքս արեցիր կէս,
 Ողորմութիւն արա՛ աղքատիս, քաջի մօտըդ
 տար՝ տանջիլ մի չարաչար:
 Վախտ որոտում ես, վախտ ամպում ես, վախտ
 մթնում ես շատ՝ անձրեւում ես կաթ-կաթ,
 Վախտ հարաւային հողմոյ նման հնչում ես
 խիստ սաստ՝ ես ընում եմ զգաստ,
 Վախտ բարկանում ես, վախտ նեղանում, կա-
 մենում ինձ չար՝ սարսափում է աշխարհ:
 Իխթիարըս կտրել ես, հալել է իմ սրտիս եղը՝
 Էդ քու փայլուն գեղը,
 Խոցված սրտիս նշան է դրել, ունքիդ անեղը՝
 դու իմ ճար ու դեղը,
 Սափսափ կապած թարթափներիդ պէս չի լիւ
 քէմանդար՝ սուր-սուր քան զնշտար:
 Չարակամների խօսքերը քեզ խրատ ես արել,
 խիստ շատ վատ ես արել,

Ուրիշների հետ ման գալը, քեզ աղաթ ես
 արել, ինձի ետդ ես արել,
 Ես իմ բախտիցն եմ գանգատաւոր միշտ ե
 մուղարար՝ ինձ չէ տալիս դադար:
 Ցաւըդ ինձ ես տալիս, ուրիշներին քաղցր
 խօսքերդ՝ ինձ քս ա քու խերըդ,
 Ինձնից աւելի, ասա՛ տեսնեմ, էլ ո՞վ ա տէրդ՝
 ինձ նա տայ քու սէրդ:
 Դու քու դարդերդ լաւը գիտես, խեղճ Ադամ
 Ագբար՝ խալիւրն քնչ ա խաբար:

Ագբար Ադամ

97.

ԱՌ ՍԻՐԱԿԱՆՆ

Ո՛վ անողորմ եար,
 Քաշի՛, մօտդ տար.
 Քեզնից առաւել
 Չունեմ սիրահար:
 Տեսակով գեանջ ես,
 Սիրոյ նահանջ ես.
 Ինձ բաւ է տանջես,
 Սիրովդ չարաչար:

Ինձ արա՛ խնամ,
 Քիչ ուրախանամ.
 Մինչև երբ մնամ
 Ես անմխիթար:
 Լուր պաղատանքս,
 Ասեմ յանցանքս.
 Լուսաւոր կեանքս
 Մի անիլ խաւար:
 Ողորմեա՛ թերի,
 Կարօտ եմ սէրի.
 Դառել եմ գերի
 Քեզ միշտ՝ անդադար:
 Մեռայ հաւասու,
 Ի սէրն Աստուծոյ.
 Գիւրջի նաւասու
 Յաւին մի հնար:

Գիւրջի-նաւէ

98.

Փշուի էսպէս ժամանակն, յոյս ու հաւատ
 սէր չը կայ,
 Մաշկիլ է ճշմարտութիւնն, մէ իմանող տէր
 չը կայ.
 Բռնիլ ինք միր միղած ջիգէքն, մէկ մէկու
 բամբասելով,
 Պիտորվեցաւ իստակութիւնն, հաւատով հէրն
 ու մէր չը կայ:
 Հասաւ միր միղաց սլափիժը, իմացէք ինչ-
 պէս բան է,
 Ել մարդուն հաւատալ չը կայ, էս ինչպէս
 դատաստան է.
 Տանջանք ունինք դժոխկումը, ո՞վ լեզուով
 սթախ կանէ,
 Ահալի վարպետն պատիւ չունէ, մէկ ժանակ
 տէր չը կայ:
 Խափանուից բարիւր միտքը, սէրով սալամ
 տալ չունինք.
 Պէտի է մէկսմէկու բամբասենք, աւելի ափալ
 չունինք.
 Ճշմարիտ յուսով մարդ սիրինք, միասին ման-
 գալ չունինք,

Քիչ է միր միղաց հարցմունքը, էլ քուր ու
 ախպէր չը կայ:
 Վիրաւորուեցանք հաւտիցն, օրէնքը խա-
 ւարում է,
 Նատ մարդ կայ հոգուն չէ հոգում, մարմինը
 զարգարում է.
 Քիչիկ-Նօվա, միղկէ լաց, ինչ անձդ բաշա-
 րում է,
 Աւելցաւ շառն աշխարքիս, այսուհետեւ խէր
 չը կայ:

Քիչիկ Նօվա, աշըղ

99.

Արի ինձ անգաճ կալ, ա՛յ դիւանա սիրտ,
 Հայա սիրէ, աղաք սիրէ, առ սիրէ.
 Աշխարքըս քունն ըլի, թնչ պիտիս տանի,
 Աստուած սիրէ, հօքի սիրէ, եար սիրէ:
 Էն բանն արա, վուր Աստուծու շարքումն է,
 Խըրատնիրըն գըրած Հարանց վարքումն է.
 Երեք բան կայ՝ հօքու մարմնու կարքումն է:
 Գիր սիրէ, դաւամ սիրէ, դավթար սիրէ:
 Ե՛կ, արի, սիրտ, մի կենա դուն մէ դամալի,

Հալալ մտիկ արա հացի ու աղի,
 Հէնց բան արա՝ մարթ վըրէդ չը ծիծաղի.
 Խըրատ սիրէ, սաբըր սիրէ, շառ սիրէ:
 Հընպարտութին չ'անիս՝ դուր գու քաս Տէրիդ,
 Խօնարութին արա կանց քեզ դէվէրիդ,
 Աստուած դիփունանցըն մին հօքի էրիտ՝
 Աղքատ սիրէ, զօնաղ սիրէ, տար սիրէ:
 Սայաթ-Նօվա, էրնէկ քիզ. թէ էս անիս,
 Հօքուդ խաթրի մարմնուդ ումըրը կէս անիս,
 Թէ գ'ուզիս վուր դատաստան չը տէսանիս՝
 Վանք սիրէ, անապատ սիրէ, քար սիրէ:

Սայաթ-Նօվա

100.

Է Մ

Փող եմ տուել՝ տուն չի գալիս չալ էձն ¹⁾,
 Խօսացնում եմ էլ, չի խօսում լալ էձն ²⁾:
 Ա՛յ հազարաթ, էլ ինձ չի էլաւ մալ էձն,
 Իմ գլխիս բերեց մեծ զաւմաղալ էձն.

¹⁾ եւ ²⁾ Ամենայն տանց վերջումն կրկնեա
 զայսոսիկ տողս:

Կօշա հանդին խիստ լաւ կասեց կալ էծն,
 Ինձնից չուզեց կամ ու մալ էծն:
 Մարդ էլ փողը կը տայ էս թավուր մալի,
 Ընկերս նստելայ ճամբուսն լալի,
 Ինչ անում եմ, չեմ տնում՝ տուն չի գալի,
 Չեմ գիտում թնչ է արել խիալ էծն:
 Առաւօտէնց հէնց թարս անկաւ իմ բանըս,
 Գիւննոցն նասիւր էր անում ջանըս,
 Ասի. ո՞նց թէ անտէր մնաց խիղանըս,
 Գլխիս էլաւ պատուհաս մալ էծն:
 Ինչ փխլիկով հասցրեցինք աշնատուն,
 Երիշ արեց, ընտել սրտիս էլաւ սիւն,
 Երեւաց Գրամփէն, ասի, հասանք տուն,
 Ոտմաշ էլաւ, ինձնից ուզեց նալ էծը:
 Ինձի չի ունեմ անեղիցն՝ նետիցն,
 Շատ եմ ծեծել, հարցրեցէք փետիցն,
 Ինչ որ արի, անց չի կացաւ գետիցն,
 Ինձնից ուզեց գէմի-ինան սալ էծն:
 Շատ ածեցի, լազգաթ չի առայ սաղիցը,
 Չալ չուրթայով կապել տուի պօղիցը,
 Սուր մկրատով, որ խուզեցի մազիցը՝
 Հարայ կանչեց, արեց զալմաղալ էծը:
 Ասի. զարար կանենք, տանք էլ զասաբի,
 Ռատտ եկանք դադ ու զամի արբաբի,

Մեր տղերքը հասան փողի հիսաբի,
 Բուկդ կապենք կանաչ, կարմիր, ալ էծն:
 Դականակով չըւել գեղը բըրթեցինք,
 Տարանք դարվազի դրանը մորթեցինք,
 Չորս օքմինով անջաղ սրան քերթեցինք,
 Կասէս ըլնէր մէկ զավա ու քեալ էծն:
 Օբուսը սրան մի ուրիշ տեղ ունէր,
 Գետն անց կենալիս խիստ սիրուն լեղ ունէր,
 Քարով՝ կշիռքով հինգ լիտր եղ ունէր,
 Իրան-ու-գետորայ ունէր ահլալ էծն:
 Որ մորթեցիք, ոտովն քանդեց հողը,
 Օգնողներին բաշխեցի երկու կողմ-
 Փոշմանեցի, յետ դառայ՝ առայ փողը,
 Հիսաբ արի, էլ արեց զարար էծն:
 Մի քիչ ունէր էլ կաղ իծին մուրուզվաթ,
 Ես չեմ տեսել չալ իծի պէս բիմուրուզվաթ,
 Եստոնց համար Ադամն արեց թարիֆաթ,
 Գլխիս էլաւ պատուհաս՝ ամալ էծն:

Ազգար Ադամ

Առանց քեզ թնչ կօնիմ սօյբաթն ու սաղըն,
Ծէռնէմէս վէր կօծիմ չանգիրըն մէմէկ,
Չունքի ուշկ ու միակըս իրար շաղէցիր,
Փահմէս կու հիռացնիմ հանգիրըն մէմէկ:

Մէ դուգունըն էրկու դաղին թնչ անէ,
Մէ նօքարըն էրկու աղին թնչ անէ,
Մէ բաղմանչին էրկու բաղին թնչ անէ
Փէյվանդ գ'ուզէ թազա տընգիրըն մէմէկ:
Ղուրթ ին ասի. փիր ուստաքար դադիրըն.
«Բաղ շինէցի, վարթն քաղէցին վադիրըն».
Ջափէն ես քաշեցի, սափէն եադիրըն,
Բաղիփէն էկաւ միզ էս ըանգիրըն մէմէկ:
Առանց քիզ թնչ կօնիմ աշխարիս մալըն,
Չ'իմանաք քալագըն, չ'իմանայ դալըն,
Կու հաքնիմ մագէդէն, կու հաքնիմ շալըն,
Կ'էրթամ ու ման գուքամ վանքիրըն մէմէկ:

Բալքամ մէ մարթ ռաստ գայ, վուր ինձ խըրատէ,
Գօզալ, քու էշխէմէն սիրտըս աղատէ.
Կանց եօթըն իմաստասիրացըն շատ է՝
Է'ս քու, Սայաթ-Նօվա, բանքիրըն մէմէկ:

Սայաթ-Նօվա

Ա Ղ Ջ Ի Կ

Աղջիկ, արի մէկ պաչ տո՛ւր, ջանիդ մատաղ,
Ես մեռնում եմ, քեզ ու քու նանիդ մատաղ,
Մատներումդ ոսկէ մատանիդ մատաղ,
Նախշ ես անում՝ քարգահ ու բանիդ մատաղ,
Կարմիր սուրաթ՝ սպիտակ կուլ ջանիդ մատաղ.

Լաւութիւնը լաւ կուլի աշխարհումս,
Քեզնից աւել էլ ճար չունիմ ճարումս,
Թէ մարալ ես, եկ, ման արի սարումս,
Ես կանգնած եմ իմ տուած իղլարումս.
Հարսանիքդ կու նստի այս տարումս,
Ծըծիդ վրէն կախած նշանիդ մատաղ:

Աշխարհումս չի՛ ճարվիլ քու զօլիցը,
Թէկուզ բերեն Հինդ ու Ստամբօլիցը,
Խելքս գնաց՝ դուրս եկար էն զօլիցը,
Ջէյրանի պէս, տեսայ, եկար չօլիցը,
Կաքաւի պէս ձայն ես տալիս քօլիցը,
Անոյշ խօսքիդ՝ ճարտար բերանիդ մատաղ:

Ես քեզ համար մեռած եմ թաղուածի պէս,
Գիշեր ցերեկ մալուլ եմ շաղուածի պէս,
Խելքս գլխէս դառել է քաղուածի պէս,
Ջիգեարս էլաւ նարին մաղուածի պէս,
Բեր հոտ առնեմ, վարդ ու րէյհանիդ մատաղ:

Եշխի բանը, խօս գիտես, ինչպէս կուլի,
Մինչի իրան հասնի, ջանը կէս կուլի,
Մէկ պաչ չի տաս՝ Թէհրանը ինձմէն դես
կուլի,
Երկնքի մալաքները քեզ պէս կուլի,
Ապա դեսնենք՝ ո՞ւմ հազուստը էդպէս կուլի,
Կարմիր շապիկ, կանաչ միսթանիդ մատաղ:

Թէ բիւբիւլ ես, բաս ինչո՞ւ չես բաղումը,
Կարմիր վարդ ես, բաց էլած եարփաղումը,
Լուսնիակ ես չարխի մաղալլախումը,
Կայսերի պէս կանգնել ես օթախումը,
Միսկին-Բուրջուն պահել մի դուսաղումը,
Թամբազ արա՛, թո՛ղ՝ քու դիւանիդ մատաղ:

Միսկին Բուրջի:

103.

Ով իմ սիրելի մէկ մօտս արի՝
Հարգամ քու զուռն, գալս իմացիր.
Երկու աչքիցս արիւն է կաթըմ,
Գլխիս վնյ տալով լալս իմացիր:
Հերիք է, մուրվաթ արա՛,
Եւր, հերիք է, մուրվաթ արա՛.
Նահախ տեղան մի չարչարիւր,
Մէկ ուհմ արա՛, եար քեզի ղուրբան:
Սրտիս դարդերն չո՞ւմ չես իմանըմ,
Ինձ նահախ տեղան չում ես սպանըմ.
Աչքիդ տակովն մտիկ ես անըմ,
Անմուռնչ բարով տալս իմացիր:
Հերիք է, մուրվաթ արա՛, և այլն:
Մէկ խալվաթ օթաղ, մէկ ես ու ես եմ,
Արի դու իմ մօտ, քեզ հետ մէկ խօսեմ.
Բացիմ դարդերս, անկաջ դիր ասեմ,
Իմ քոռ անբաղդ իղբալս իմացիր:
Հերիք է, մուրվաթ արա՛, և այլն:
Եկ մին բան արա ինիմ քեզ ուզի,
Ինձ նահախ տեղան եկ մի տալ ջազի.
Ինքդ ֆիքր արա, եար, քեզ ու քեզի,
Սրտիս մէջի խիալս իմացիր:

Հերիք է, մուրվաթ արա՛, և ալլն:
Էշխիդ կրակն սրտումս վառ ա,

Լերդ ու ջիկեարս դառելա եարայ,
Աստուածդ սիրես մէկ ըռահմ արա,
Խեղճ Թուրինջն եմ ես, հալս իմացիր:
Հերիք է, մուրվաթ արա՛, և ալլն:

Թուրինջ

104.

ԱՌԻԻԾՆ ԵՒ ԷՇ:

Առիւծն աքլարից խիստ շատ կու վախի,
Նրա ձէնէմէն՝ չուստ կու սըլքըվի:
Էշն էլ խօմ գիտէք թնջ խասեաթ ունի
Ու ինչպէս ախմախ՝ աղքատ է խելքի:
Դէ անկաջ գրէք՝ էս կարճ առակի
Ոչ զվ խեղճ իշին՝ մասխարայ չանի:

Մէկ օր առիւծը խիստ շատ սովեցաւ՝
Շատ գէս գէն ընկաւ՝ շատ չալիշ եկաւ,
Անոթի փորով՝ մէկ մեծ գեղ մըտաւ
Մէկ չաղ շուն ճանկէց՝ սըքել սկսաւ,

Բարաստ աքլարը՝ կտրին վեր ելաւ
Կիզլիկօ կանչեց՝ ճաշն հարամ արաւ:

Առիւծը աքլարի՝ երբ ձէնը լսեց,
Պոչը հաւաքէց՝ գեղէն դուս փախէց,
Դիժ էշը տեսաւ՝ անկաջին սրէց
Իր անուշ ձէնով՝ ատաթին զռէց,
Առիւծի ետքէն՝ երիշով վազէց:
Ղօչչաղ տղի պէս՝ վախցնել ուզէց:

Առիւծն որ աքլարն հեռացած տեսէց,
Ձիքականջ իշին՝ իր թաթով զարկէց,
Վեր կոխէց ջարդէց, պատանը ձևէց,
Այն անխելք հայվան անկաջին ասէց.
Ձալում առիւծը քեզմէն չի վախէց,
Աքլարի ձենէն զզուէց ու փախէց:

Եթէ խելք ունիս, դէ չուստ իմացիր
Ո՛վ է առիւծը՝ ո՛վ իշի ընկեր:

Ն. Տէր-Շմառնեան

105.

Արի հոգի ջան, ինձ ետդ մի անիլ,
 Լաւութիւնիս փոխանակ վատ մի անիլ.
 Վարդը քաղած բիւլբիւլ եմ դադ մի անիլ,
 Ինձի աչքից քցածի հատ մի անիլ,
 Զարակամների սիրտը շադ մի անիլ:

Հագուստըդ, ետրաբ, ինսանի կարած ա,
 Գուլգազ ետխէդ գուլաբաթնով արած ա,
 Ակուքներըդ մարգարըտով շարած ա,
 Սարսարի եմ՝ խելքըս գլխէս տարած ա,
 Եշխիդ հիւանդն եմ՝ դեղ ու զադ մի անիլ:

Կռներըդ շիմշադ է, բօյըդ սուրահի,
 Քաշկա հոգիս, ետր, քու գրկումըդ տայի,
 Մէկ պռօշտով խարաբայ սիրտս շահի,
 Գուսաղի պէս միշտ ինձ դրանըդ պահի:
 Էս ցաւիցըն ինձի ազատ մի անիլ:

Թուխ մագերիդ փունջը չի գալ համարի,
 Աչքերըդ նման է շամս ու ղամարի,
 Ունքերըդ նման երկնային կամարի,

Գեղեցկութեան նշաններըդ ջամ արի,
 Տասներկուսն թայ արա, բադ մի անիլ,

Նոր մադան ես անգին քարի բարեբար,
 Աստուած սիրես՝ հալիցըս իլ մի խարար,
 Վերջիս նափասն է, անիրու՝ ինձ մի ճար,
 Սգբար Սդամըն աղաչում է մուղարար,
 Խարաբ սիրտըս մէկ էլ բարբադ մի անիլ:

Աղբար Աղամ

106.

Անցեալ օրն դու ման էիր գալիս
 Մարդկանց միջում՝ առողջ և կենդան,
 Այժմ կոչում ես, դու ձայն չես տուիս,
 Կամում ես մտնել մութն գերեզման:

Սզգականքդ քեզ անչափ սիրէին,
 Մանուշակի պէս մէկ մէկու տալով.
 Ընդ քեզ մեռնելոյ ուխտադիր էին,
 Հիմա թաղել են տանում՝ ողբալով:

Ժամհարն շուտ-շուտ զքեզ լուանայ,
Հիւան զարդարէ փայտեայ դագաղն.
Մայրդ գնացեալ՝ կոչէ քահանայ,
Զի մի մնասցես տան մինչ ի վաղն.

Ում դու հայր էիր՝ և նա քեզ որդի,
Որ չէիր ուզիլ՝ աչքէդ հեռանայ.
Այժմ տեսնելով՝ քեզ մին անշարժդի,
Ո՛չ կամի վրէժդ մէջքէն կեռանայ:

Ո՛ւր է, ո՛ւր կորաւ սէր ազգականաց,
Որ նախ քեզանից նա անբաժան էր.
Ողջ փախան ի քէն՝ մօտդ ո՛վ մնաց,
Տես, որ ամենն էլ մին դատարկ բան էր.

Այս է բնական վարքն աշխարհի,
Միշտ իմանում ենք՝ միայն չենք ատում.
Սիրում ենք՝ իբրեւ աննման բարի,
Մեռանելիս ենք նրանից դանդաժում:

Աշխարքն բաժակ, հրեշտակն մատուռակ,
Մահն ունի է. մենք՝ խրախ անողն.
Պիտի քամենք, որ առնումք ճաշակ,
Ո՛վ է նրանցից զերծ մնացողն:

Պ. Տ.-Յ. Մաղաթեան

107.

Մ Ո Ի Խ Ա Մ Բ Ա Ջ

Քու մասին, իմ աչքի լոյս, ինչ ասում եմ՝
լաւ եմ ասում,
Յաւում եմ, ափսոսում եմ, ունելով իրաւ
եմ ասում.
Ամեն տեղ, ամեն բանում՝ քեզ քաջահամբաւ
եմ ասում,
Քու խորհուրդդ ամենի մօտ մի անիլ չաւ
եմ ասում,
Քու անզգոյշ մնալդ՝ ինձ համար մեծ ցաւ
եմ ասում:
Պանծը ժանգի համար է՝ մարդուս անունն է
գովելի,
Բարի ընթացքը՝ կատարեալ կեցութիւնն է
գովելի,
Անունի տարածվիլը՝ անհատ արգիւնն է
գովելի,
Պու մի կարծիլ՝ թէ միայն զեղեցկութիւնն է
գովելի,

Պակասամիտ սիրունին՝ ես մին դուարկ գաւ
եմ ասում:

Բայց ասեմ՝ գեկեցկութիւնն Արարչի մէկ
պարզւուն է,

Հողանիւթ գոյացելոց՝ մէկ բարեբեր անձ-
րւուն է,

Բայց շուտով կը թարշամի՝ արմատը չէ՝
տերւուն է,

Գիտութիւնն ով աչքի լոյս՝ մարդուս երկրորդ
արւուն է,

Ո՛չ գիշեր կընդունէ, ոչ կը սիրէ եաւ եմ
ասում:

Ինձնից միտք ծախու ան՝ անհոտ բուրաս-
տան մի լինիլ,

Խրատի միշտ կարօտի՝ շատ ինքնահաւան մի
լինիլ,

Դու բարւոյն լեր վափազող՝ չար սովորու-
թեան մի լինիլ,

Անվայել լուր մի հանիլ՝ կամ վատաբերան
մի լինիլ,

Մի թողուլ թանգ օրերը՝ վատկեցութեան
գրաւ եմ ասում:

Գիտում եմ, որ յարգի է իմաստութեան քա-
րը քու մօտ,

Շատախօս չի երևիլ ինձ նման անճարը քու
մօտ,

Տեսնում եմ շնորհաց ոգին և գիտութեան
բարը քու մօտ:

Ամենին չեմ ուզում, որ զօրանայ չարը
քու մօտ,

Ես, Շիրինըս, ահա քեզ խորհուրդըս լեզուաւ
եմ ասում:

Աշըղ Շիրին

108.

Իմ սիրտըս աղ ես արել,
Ջիգարս դաղ ես արել,

Ինձանից հեռացել ես,

Ինձ բէգամաղ ես արել:

Դու ես իմ սիրահարը:

Քաշկայ տանեմ քու ճարը,

Գլխիս տուել ես քարը,

Կիսակենդան ես արել:

Շատ մարդկանց ես խաբել,

Սիրոյդ ես եմ կրակվել.

Ինձ-հօ թողով չեմ կապել,

Ամա դուտաղ ես արել:
 Սիրելիդ՝ ինձ ատել ես,
 Ատել ես, նախատել ես,
 Ջիգարըս կտրատել ես,
 Արնաշաղախ ես արել:
 Ինձ տեսնելուս տուր բարով,
 Խորհուրդդ ասա զրով,
 Ինձ-հօ մորթել չ'ես սրով,
 Անուր մատաղ ես արել:
 Ես եմ ազիզ աղբերդ,
 Ինձնից մի կտրիլ սէրըդ,
 Երկնից կամար ունքերդ,
 Ինձ վերայ թաղ ես արել:
 Գուռ միշտ կամեցիր բարիս,
 Ուշախանալ մի չաբիս,
 Էս քրքրված ջիգարիս,
 Քափով արաղ ես արել:
 Ինչ է, ասա, իմ մեղք,
 Հալուել է սրտիս եղք,
 Երկու ծըծիդ մեջ տեղք,
 Բաղչա ու բաղ ես արել:
 Համ դուդի ես, համ լաշին,
 Ես մեռնում եմ քու պաշին,
 Դուստ ու դուշմանի միջին,
 Ամօթապարտ ես արել:

Մաւրվաթ արա, սիրահար,
 Մի չարչարիլ չարաչար,
 Ինձ քըցել ես քարէ քար,
 Դբրուստ սարսաղ ես արել:
 Կարօտըդ քաշում եմ քու,
 Չեմ կարծում ասել ահու,
 Կերպարանքըդ տեսնելու,
 Ինձի արգելք ես արել:
 Բօյլըդ շամշու սուրայի,
 Խարաբա սիրտս շահի,
 Ինձ դու տար մօտըդ պահի,
 Հերիք է, եադ ես արել:
 Գուռ ես իմ սիրականըս,
 Մի մաշիլ ջիւան ջանըս,
 Երեք տարուայ դուշմանս,
 Նոր բարեկամ ես արել:
 Մայիլ եմ դօշիդ խալին,
 Անուշ խելք ու քեամալին,
 Խըղճալի Գիւրջի-մալին,
 Կարկըտահար ես արել:

Գիւրջի Նավէ, աղըդ

109.

Տասն ու հինգ օր եկած բոլորած լուսին,
 Կապել ա ունքերդ կամարի վերայ.
 Դուռնիցն դուրս կը գաս գտնով զարդարված,
 Թամամ շողքդ կընգնի աշխարհի վերայ:
 Բերանդ աղբիւր ա, Աբուհայաթ ա,
 Պաօշներդ զանդ ա, լեզուդ նաբաթ ա,
 Խօսուածքդ ա քաղցր շաքարի վերայ,
 Աջ ու ձախ ունքերդ շարբաթ ու կաթ ա:
 Թուրինջն եմ, ման եմ գալիս դավրիշի նման,
 Խմած, դիւահարված սարխոշի նման.
 Մնացել եմ մոլորված բալդուշի նման,
 Նստած եմ՝ վայ տալով չոր քարի վերայ:

Թուրինջ

110.

Բ Ո Ւ Ր Ա Ս Տ Ա Ն

Ա՛խ, իմ փոքրիկ բուրաստան, ափսոս
 անջուր մնացիր,
 Գարունն մերձեալ ժամանեաց, արդեօք, դու
 ո՞ւր մնացիր.
 Միանգամայն քուրձ զգեցեալ, սևափետուր
 մնացիր,
 Վատահամբաւ, տմարդի, վրիպալուր մնացիր,
 Որովհետեւ անթառամ գանձիցը կոյր մնացիր:

Ահա յարեաւ մէկ տիկին, որ Եւրոպ
 անունով,

Կամէր զքեզ տեսանել անչափ կարօտութիւնով.
 Զուր համբաւոյդ եկն ի տես քանի՞ պատ-
 րաստութիւնով,
 Սիրամարգով, սոխակով, երգով, ուրախու-
 թիւնով.
 Զէին բացուած՝ զօրացած ծաղիկներդ պսրղ
 գունով,
 Գլխովին անարգվեցար՝ ճարակտուր մնացիր:

Դու ջրասուզ անունով մէկ պահապան
ունէիր,

Նախատինքդ տեսնելով, խիոյն եղև տարագիր,
Ըստ ասութեան Արարչին՝ ուր իմաստուն,

ուր դպիր,

Էդ մթնազգեաց հոգիէդ դու ամաչիր, դու
խրկիր.

Ի՞նչ շահեցար նիրհելով. ուրեմն արի՛ արթ-
նացիր,

Լեր այս դարին նմանող, չասեն՝ թէ զուր
մնացիր.

Ա՛խ բուրաստան՝ բուրաստան, տէր ու-
նենաս երանի,

Ծաղիկներդ՝ վարդերդ այդքան անհոտ չը
լինի.

Վերատեսուչ պաշտպանդ է հասակաւ պա-
տանի,

Վերոյիշեալ տիկինը զարնան ոգիք շատ ունի,
Խնդրէ յուսով՝ նամակով, իցէ թէ քեզ հասանի,
Շիրին, քո անձիդ համար զիարդ դու սուր
մնացիր:

Սշրդ Շիրին

111.

Յորժամ եղև դարուն՝ արև ծագեցաւ,
Հարաւ հողմն հընչեաց, սառն հալեցաւ,
Երկիր կանանչեցաւ, ծառն ծաղկեցաւ.

Խըմենք, եղբարք, գինի՛ մեզ անույշ լինի,
Ածէք, խըմենք գինի. բանն Աստուած
լինի:

Ո՛վ եղբարք, նըստեալ էք ծաղկեալ ծառի
տակ,

Ձեռներդ է գինին կարմիր ու յստակ,
Թասի մէջ անկանի ծաղիկ ըսպիտակ.

Խըմենք և ալին:

Առէք կարմիր գինի եւ լցրէք շուտով,
Բերէք թագայ գառն սինի սարփուշով,
Ղաբլու փլաւ ձգէք մեխակով, նըշով.

Խըմենք և ալին:

Թող չիման տեղ հստեմք, ջուր լինի և խոտ,
Կարմիր գինի խմենք մէկամէկի մօտ,
Միմեանց նուիրեմք զվարդ անուշահոտ.

Խըմենք և ալին:

Վաղիւն ոչ գիտեմք՝ թէ զի՞նչ ծընանի,
Մարդուս կեանքն վայրի ծաղկի նըմանի,

Որ այսօր բացուել է՝ վաղիւն անցանի.

Խըմենք և այլն:

Նոր դարուն, նոր արև, ծաղիկ շնորհազարդ,

Այսուհետև բացուի մանուշակ ու վարդ,

Ձայն բիւլբիւլին, տատրակին լսէ ամեն մարդ.

Խըմենք և այլն:

Այլ եւ խաղաղութեամբ խըմելըն է հալալ,

Ո՛չ հարբել, գոռալ և ո՛չ բարկանալ,

Ուրախութեամբ խըմել, սիրով զուարճանալ.

Խըմենք և այլն:


Գնա՛, լաց քո մեղքն, Նախաշով Աղամ.

Աշխարքս անցաւոր է, չէ՛ մընացական.

Դուք կերեցէք, խմեցէք, եղբարք սիրական,

Եւ օրհնեցէք զԱստուած այժմ և յաւիտեան:

Աղամ Նախաշով, աշըղ



112.

Աստղիյ դեն, կաթիլի չաս, դուշա մայեայ,

պօմէիու վաս,

Ի՛նչ կուլի՛ դադամ փոխես, լայաղ անես,

մօտս գաս,

Եադ օղլու համդամ օլայ՝ արան ման-

նան քեաս,

Սարի խուդա, համշարի, սուխան մի-

գուլեամ ոաս:

—

Շէնի ճիրիմէ, աք մօ, էիլա շէն սադ մի-

դիխար.

Ե՛ադինան աշնա օլինջա՝ օլ մանըմ իչուն

ադեար,

Վիպեօմ կրասնիյ վինօ, ըադիզըրայեմ

դիտար,

Էյ զալում, եք շաք բիեա թու մարա

մեհմանի դիգեար,

Ծըծերըդ դի՛ր բերանս, թէ՛ չէ՛ ես

կուլեմ անմաս:

—

Շաք ու ըուդ գիւլիշանդա լալ էլլադըմ

բիւլբիւլի,

Որ իմ կամքը կատարես, աստ՝ տեսնեմ
 քնչ կուլի,
 Բէղափլ էշխա դուշարմ՝ դաղըթտըմ
 դունեսայ փուլի,
 Եխլա մէ մօկուղէ՝ օրարիս շէնի սուլի,
 Վի նի Բօղ, վի նի անգէլ, բշտօ խա-
 տիտէ ատ նաս:

—
 Չուն բէլա բաղանուփսան՝ բուիր, զաբաղ-
 չա երի,
 Կրակի պէս շափաղդ դիփուն աշխարքս
 կու էրի,
 Կուդա պայդեօջ, պրաշու, մենեսա ստա-
 բօյ բերի,
 Եք սահաթ սաբը բըքուն՝ բխանամ
 զազալի շէհրի,
 Երթի՝ օրի պուօշտի էխլա միեցի ամաս:

—
 Խէլի հարիֆ մարդ պիտի, որ խօսքերըս
 իմանայ,
 Պաղի սիւդա, սկազալայ մընէ ադին
 բազ անա,
 Սօդի էրթի դաբձանդի, գենացվալէ,
 չեմ թանայ,

Ղուրբանի թու, դարդիմանդ, բիւ մի-
 րիւ զամխանա.
 Միսկին-Բուրջի էլլիբր ինդի սամա իլ-
 թիմաս:

Միսկին-Բուրջի

113.

Ես մի սիրական կուզեմ դարդից խաբարդար
 ընի,
 Համ խելօք, համ դանանդայ ոչ թէ
 խելագար ընի,
 Կեանքիս հետ կեանք ունենայ, ահլի
 բաֆադար ընի,
 Մեր երկըսիս պայմանը՝ էս թափուր
 իգրար ընի:

—
 Ամեն փուլ սիրեկանի համար՝ մի ջիվան պըտի,
 Հաւատարիմ սիրելույ փիանդազ ու ջան
 պըտի,
 Ճանփումը ղուրբան անես՝ օմրըդ բիր-
 դան պըտի,

Քաղցր խօսալ ունենայ՝ անուշ սիրական
պլտի,
Սէտով սիրի սիրելւոյս՝ սիրով սիրահար
ըլնի:

Սի խօսքը սահր ետր կուգեմ, որ աշխարհս
հաւանին,
Իմանաս էլ ինչ պէտք ա բաժալու սի-
րականին,
Դէմքդ փիանդազ անես՝ ջանըդ ղուրբան
ջանին,
Որ հոգի տաս՝ չի կորած, էս թավուր
գովականին,
Թէ գրուսա միտք ունենայ՝ քեզ հետ
մուղարար ըլնի:

Բաժալու սիրականին պէտք է քէմ'ալ ու-
նենայ,
Ուրիշներ չի լսի էս թավուր հալ ու-
նենայ,
Իրան սիրականի հետ քաղցր խօսալ ու-
նենայ,
Գիշեր-ցերեկ միատեղ սէլը ու ման գալ
ուրենայ,

Չարական թշնամիքոնց սրտին ահուզար
ըլնի:

Փուչ սիրականի համար պէտք է ան հալ վայ
չանես,
Ընկած տեղը ամեն վախտ ուղիղ սրտով
սայ չանես,
Հաւատարիմ սիրելւոյ դռնողի հետ թայ
չանես,
Անճար Աղբար Աղամի աշխատանքն զայ
չանես,
Չեմ հաւատալ աշխարհս, թէ քեզ բա-
րեբար ըլնի:

Աղբար Աղամ

114.

ՎԱՍՆ ԳԻՆԻՈՅ ԵՒ ԱՐԲԵՅՈՒԹԵԱՆ

Բիչ խմբու կու հարբեցնէ, դինի է ոչ թէ
թթու թան,
Խմողին կը լըբացնէ, թէ իշխան լինի,
թէ սուլթան:

Ինչ մարդ խմելուց հնգ արաւ, նորա քիսէն
ծակ կու լինի,
Զուներ խմիչքն փողի հետ, կասեն հակառակ
կու լինի,
Արբեցողի որդիքն գող՝ կինն անառակ կու
լինի,
Ինչքան պատուելի մարդ լինի՝ վերջն խայտա-
ռակ կու լինի,
Ահեղ ատենի օրն նա սկերես կերթայ դա-
տաստան:

Արբեցողի տան միջիցն՝ վրդովմունքն անպա-
կաս է:
Եթէ մին ծածուկ խօսք ասես՝ հրապարակի
մէջ կասէ,

Նորա հետ ընկերանալն մարդոյ պատուին
շատ վնաս է:
Որտեղ մէջն փոս բան տեսնի՝ կու կարծէ թէ
գինոյ թաս է,
Թէ կինն նամուսով էլաւ, սաղ կու մտանէ
գերեզման:

Մեր Փրկիչն գինին էնդուր դրաւ իւր արեան
փոխանակ,
Որ քրիստոնեայքն խմելիս նորան չափ դնեն
և քանակ,
Խելօք մարդին բաւական է ամենայն օր մէկ
լմպանակ,
Անչափ խմողն Գրիստոսին յայտնի մորթում
է անդանակ,
Արբեցողն՝ ընդ իմ կարծեաց, է բնակիչ գը-
ծսխական:

Արբեցողի հետ ով ոք որ ունենայ հաշիւ
առ ու տուր.
Ենպէս կարծէ իւր փողի մէջ կապեց մին սաստիկ
վազկան ջուր,
Նրա ղէմքին չի ծիծաղիլ, միշտ դառնացեալ
կուլի, տխուր,
գամն կն ունի ճաւաղի իւրցար փայլ:

Թէ գիտուն ես, այս մասին, դու իմ խրատներէս
ականջ տուր,
Եթէ ոչ՝ վերջն կախսոսես, երբ որ կուլիս
թշուառական:

Պ. Տ.-Յ. Մաղաթեան

115.

Ղ Օ Շ Մ Ա

Այլոց տունը քեզ օթեան չի լինի,
Աշխատի՛ր՝ քեզ համար օթեան ճարէ.
Օտարը շատ ունի հաց, անուշ գինի,
Քեզ ինչ օգուտ, որ քո բանդ դժուար է:

Մոլիներու կեանքին աչք մի ունենայ,
Նորանց ճիգ ու ջանքին աչք մի ունենայ,
Այլոց աշխատանքին աչք մի ունենայ,
ձակափիղ քրտինքով քեզ կառավարէ:
Ուսում սորվիր, անվարժապետ մի մնար,
Փորտի գորգով բռնուած գետ մի մնար.

Միշտ աշխատիր, ընկերից յետ մի մնար.
Այլոց նման դու ես բան հնարէ:

Ջիւան, անուսումին յիմար կանուանեն,
Անօգուտ մարդ, խելքից տկար կա-
նուանեն,

Ապրուստ չը ճարողին խաւար կա-
նուանեն,

Ասելով՝ այս դարը լուսաւոր դար է:

Աշղղ Ջիւան

116.

Վասն այնոցիկ, որք ակնոց դնելով եւ ֆրանսիարէն
խօսելով՝ զինքեանս գիտուն համարեն:

Քիթդ թամբել ես չէշմակով,
Վարժ խօսում ես ֆռանգի լեզուն,
Մտօք յիմար ես՝ որպէս կով,
Բայց քեզ կարծում ես իմաստուն:

Չէշմակն թէ խելք ունենար,
Եինող ջհուգներուն կուտար,
Որ շրջում են իբրեւ օտար,
Չունենալով օթեան և տուն:

Չէշմակն գիծին քնչ անի,
Որ իսկ նման է անբանի,
Նրանից լաւ է Շաբիանի,
Հաւատարիմ որսկան կատուն:

Մթթէ համայն Փռանգստան,
Ուր ֆռանգներէն կու խօսան,
Երբէք յիմար մարդիք չը կան,
Որ ասես՝ է իսկ անասուն:

Ի՛նչ մեղաւոր է չէշմակն,
Որ կոյր լինի մտաց ակն.
Մթթէ խօսելով թուրակն
Փռանգաւոր, կուլի գիտուն:

Սէյահ, էր չես չէշմակ դնում,
Գիտունների շարքն մտնում.
Խալիսի միննաթից պրծընում,
Մթթէ լաւ է կոչվել նրկուն:

Պ. Տ.-Յ. Մաղաթեան

Վ Ե Ր Ձ

Յ Ա Ն Կ

երես.

1. Պանդուխտ առ կռունկ—կռունկ, ուստի. 3
2. Ինձ համար չէ՞ զարնան զալը . . . 5
3. Իմ երգը—Հեռացել եմ իմ մայրենի աշ. 6
4. Երգ մեռանող հայրենասիրի—Ազնիւ ընկ. 8
5. Արաքսի արտասուքը—Մայր Արաքսի. 9
6. Գիշեր—Սիրուն պատկեր . . . 13
7. Մայրենի լեզու, մայրենի բարբառ . . . 14
8. Որս Արշակայ—Մեծափառ արքայն մեր. 15
9. Գարուն—Ոհ ինչ անուշ եւ ինչպէս զով. 16
10. Երգ պանդուխտ պատանեկի—Ծիծեռն. 18
11. Երգ ուրախութեան—Յնծացէք լերինք. 19
12. Օրօրոցի երգ—Քուն եղիր պալատ . . . 20
13. Գրենագերներ—Երկու գրենագեր . . . 21
14. Երգ որսոյ—Հապա քաջազունք . . . 23
15. Զինորի երգ.—Զինորիս երգերը . . . 25
16. Յերկու ձեռին երկու մոմ . . . 26
17. Հայոց գինի—Բաժակներ առնունք. . . 28
18. 'Ի ննջմանէդ արքայական, զարթիր . . . 29
19. Հայոց աղջիկներ, ձեր հոգուն մատաղ. 30
20. Առաւօտեան քաղցր եւ անուշ հովերն. 32
21. Մուսա—Արկածք Հայոց ժամանակին . . . 33
22. Աղջկայ երգ—Հանգիստ իմ անոյշ . . . 35
23. Կապոյտ երկնքում . . . 36

24. Անի քաղաք նստէր կուլայ . . .	37
25. Ելէք, ելէք, օն դուք աստի . . .	39
26. Ուսանող—Երբ որ հողից մարդ դարձայ .	40
27. Երկու քոյր—Մեզնից շատ առաջ . . .	42
28. Յիշողութիւն—Աստղիկ ունէի ես . . .	44
29. Աղասու մօր երգը—Ձարթիր մանուկ . . .	45
30. Հասօի երգը—Ահա ծագեց կարմիր արեւ .	47
31. Կրամբամբուլի էս էն օղին է . . .	48
32. Սայլորդ—Ահա սուրհանդակի սայլակը . .	50
33. Երգ ուրախութեան—Ահա բաժակ ուրախ .	52
34. Թէ իմ ալեւոր հերքս սեւնային . . .	54
35. Առ Հայաստան—Հայաստան երկիր դիրս .	56
36. Աղէն տանն է . . .	57
37. Տաղ ուրախութեան—Պայծառ արփին . .	59
38. Կենաց բաժակ—Եղբարք մի շուրջ ժող .	61
39. Հայոց աղջիկ—Դու տեսել ես երկնքումը .	63
40. Հարբած մարդու երգ . . .	65
41. Ծխախոտի երգ—Թէ ծխաքարչը ձեռիս .	66
42. Երգ ուրախութեան—Արիք որ երթամք .	68
43. Կոռնկ, գարնան աւետիս . . .	70
44. Վարդի ոստ—Ասան դու ինձ ոստդ վարդի .	71
45. Երազ—Ես լսեցի մի անուշ ձայն . . .	72
46. Երգ մեծին Վարդանայ . . .	73
47. Աղասիի երգը . . .	74
48. Իտալուհին եւ իտալացիք . . .	76
49. Աղքատ կին—Յուրաքանչէր փչեց . . .	77
50. Անտօն . . .	81
51. Շոալութիւն—Մէկը տեսար չլաւայով .	83
52. Երգ, սէր եւ գինի . . .	85

53. Խնդրեմ վեր կացէք . . .	86
54. Վայր ընկնող աստղեր . . .	88
55. Առաւօտեան երգ չինականաց . . .	93
56. Եղբայր ենք մենք . . .	94
57. Անձուկը հայրենեաց . . .	96
58. Առօրեա աշխարհ . . .	98
59. Առ մայրենի լեզու . . .	101
60. Ննջէ, իմ սիրուն մանկիկ . . .	103
61. Երգ հայրենի—Մինչդեռ յուսով . . .	106
62. Իմ Սոխակին . . .	107
63. Վերջին վարդ . . .	109
64. Բաղդատութիւն—Անդործ պարապ ման .	111
65. Վարդը բացուել ա ծաղկոցին . . .	114
66. Մի բուռն հող . . .	115
67. Ընկեր—Բարի, գեղեցիկ, առաքինի . . .	116
68. Անուրջը—Ձամապներջն ապրիլի . . .	117
69. Սիրական, սիրական . . .	119
70. Եղած չեղած մէկ հաշիւ է . . .	120
71. Երգ յաղթական—Կեցցէ Շապուհ . . .	123
72. Կիլիկիա—Երբ որ բացուին դռներն . . .	124
73. Մեր վերքերը . . .	125
74. Պանդխտի երգ—Օտար երկիր . . .	127
75. Բլբուլ Աւարայրի . . .	128
76. Այծեամ—Անհող ես, չես գիտեր . . .	129
77. Անցեալ գիշերն երազում . . .	130
78. Մեկնեցայ հայրենեացն . . .	132
79. Շուշանիկ—Է՛ր հեռանաս . . .	133
80. Երկու տող—Ով չի սիրել անձը իրան .	134
81. Սեւիկ աչեր . . .	135

82. Խորհուրդ մեծ եւ սքանչելի . . .	137
83. Այսօր տօն է ծննդեան, աւետիս . . .	138
84. Զան գիւլում, ջան ծաղիկ . . .	139
85. Փութա առ մեզ, նախշուն կաքաւ . . .	161
86. Թամամ աշխարհքումն չը կայ մին . . .	163
87. Առ սիրական—Ինձ վատութիւն . . .	165
88. Ամեն միտս ընկնելով եարս իմ . . .	166
89. Նոր բահար ես գովելի . . .	168
90. Ես չեմ ուզում էս թափուր փիս մահ . . .	169
91. Բարեկենդան—Սեղանի երգ . . .	171
92. Մայրիկ իմ աղանիկ . . .	172
93. Ուստի կու գաս զարիւր բլբուլ . . .	173
94. Էժան տեսայ, ընդուր առայ կաղ էծն . . .	174
95. Բլբուլի հետ լացիս էլի, . . .	176
96. Ասում ես դիմացիւր . . .	177
97. Առ սիրականըն—Ով անողորմ եար . . .	179
98. Փչուի էսպէս ժամանակն . . .	181
99. Արի ինձ անգաճ կնկ . . .	182
100. Էծ—Փող եմ տուել, տուն չի գալիս . . .	183
101. Առանց քեզ ի՞նչ կօնիմ սօյրաթն . . .	186
102. Աղջիկ, արի մէկ պաչ տո՛ւր . . .	187
103. Ո՞վ իմ սիրելի մէկ մօտս արի . . .	189
104. Առիւծ եւ էշ . . .	190
105. Արի, հոգի ջան . . .	192
106. Անցեալ օրն դու ման էիր գալիս . . .	193
107. Մուխամմազ—Գու մասին, իմ աչքի . . .	195
108. Իմ սիրտս աղ ես արել . . .	197
109. Տասն ու հինգ օր եկած բոլորված լուսին . . .	200
110. Բուրաստան . . .	201

111. Յորժամ եղեւ զարուն, . . .	203
112. Կաժդիյ դեն, կաժդի չաս . . .	205
113. Ես մի սիրական կուզեմ . . .	207
114. Վասն գինւոյ եւ հարբեցութեան . . .	210
115. Ղօշմայ—Այլոց տունը քեզ օթեւան . . .	212
116. Քիթդ թամքել ես չեշմակով . . .	214



24313

2013

